Անդրանիկի արձանից հետո Աշնակ գյուղում հայոց ինքնապաշտպանական ջոկատների առաջնորդներից մեկի՝ Գևորգ Չաուշի ազգականները՝ եղբոր թոռները, նախաձեռնեցին Գևորգ Չաուշի թանգարանի կառուցումը¹: Այդ պատմությունը զգալիորեն նման է Անդրանիկի արձանի կառուցման և փեղադրման պատմությանը: Ներկայիս թանգարանը կառուցվել է չորս եղբայրներից մեկի գոմի փեղում. «Կեսրարիս գոմի փեղն է եղել, անասունները մորթել ենք, քանդել ենք փեղը, հետո եղբայրները համաձայնության են եկել, միահամուռ ուժերով ու որոշ մարդկանց, մեր համագյուղացիների օգնությամբ կառուցել են: Ունենք ցեմենտ եւ բերել, մյուսներն օգնել են շինարարությանը՝ որպես քանվորներ, երրորդները հաց են բերել շինարարների համար: Բայց հիմնական կառուցողը մենք ենք եղել ու հիմա էլ մենք ենք պահպանում: Ոչ մի պեպրակն օգնություն չի եղել: Մակառակը շատ է եղել, խանգարել են, արգելել են: 1960 թվին էս շենքը սկսել են կառուցել, տասնհինգ տարի շարունակ անընդմեջ պայքարել, թոհուրոհի, կոփվելների մեջ են եղել... Չորս եղբայրներով, ամբողջ



Գևորգ Չաուշի թանգարանը Աշնակ գյուղում

1 Գևորգ Չաուշ - Գևորգ Արոյի Ղազարյան, ծնվ. 1870 թ. Սասունի Մկրենք գյուղում: Սովորել է Մշո Սբ. Կարապետ վանքի դպրոցում: Սկզբում գործել է Արաբոյի ջոկատում: Մասնակցել է Սասունի 1891-1894 թթ. ինքնապաշտպանության մարտերին: Բազմիցս ձերբակալվել է (Բիթլիսի, ապա Մուշի բանտում): Փախչելով բանտից՝ ապաստանել է Սասունում, 1904 թ. մասնակցել է Սասունի ինքնապաշտպանությանը: Մեծ ջանքեր է գործադրել հայ-քրդական համագործակցության ձևավորման համար: Նրա կազմակերպած կոփվելները գրեթե միշտ ավարտվել են հաղթանակով: Զոհվել է Սողոմի 1907 թ. նշանավոր կռվի ժամանակ: Ժողովուրդը երգեր է հյուսել նրա մասին:



Լուսանկար՝ Ապրիլի 24-ի քայլարշավը

գյուղի ուժերով... Էս շենքի կառուցողը ներսում թաղված է, համալսարանի մաթեմատիկայի, ֆիզիկայի ամբիոնի վարիչ, դասախոս Գևորգ Մելքոնյան ... Էն ժամանակ ո՛վ է ռիսկ արել, որ ֆիդայիների անուն փա, քայց էս մարդը, բոլորի հետ կռիվ փայլով, էս շենքը ավարտին հասցրեց ու մահացավ... Իրա թաղման օրն էլ ամբողջ գյուղը բախով, քլունգներով, միլիցեթի դեմն էր առել, թույլ չէին փվել, որ սրտեղ թաղեն (այսինքն՝ թանգարանի ներսում-Վ.Խ)... Ես մինչև հիմա էլ չեմ հասկանում, թե իրենց (այսինքն՝ իշխանությունների-Վ.Խ.) ի՞նչ գործն էր...» (Թանգարանը կառուցող ընդհանրիկի հարս Ծովինարի պատմածից):

Ապրիլի 24-ը ցեղասպանության զոհերի հիշարակի օր ընդունելուց և Երևանում ցեղասպանության զոհերի հիշարակին հուշարձան կառուցելուց հետո փեղական նախաձեռնությունները շարագան: Այս խնդրում առաջ եկան նաև փարբերակված մտերցումներ: Ապրիլի 24-ին սովորաբար հարյուրհազարավոր մարդիկ սգո երաժշտության ուղեկցությամբ լուռ քայլում են զոհերի հիշարակի ծառուղիով, հասնում են անմար կրակին, ծաղիկներ են դնում կրակը շրջանակող օղակին, մի պահ լուռ կանգնում են՝ գլուխ խոնարհելով զոհերի հիշարակին և հեռանում՝ փեղը զիջելով հաջորդներին: Մարդկանց հոսքը փլում է մինչև կեսգիշեր և հաջորդ օրը:

Այսպես է Երևան քաղաքում: Նույն կարգի սգո քայլարշավներ են փեղի ունենում հանրապետության փարբեր քաղաքներում, որփեղ, սակայն, ցեղասպանության զոհերի հիշարակին նվիրված հուշարձաններ չկան: Եղեռնից փրկվածներով բնակեցված



Եղեռնի զոհերին նվիրված Աշնակ գյուղի հուշարձանը

գյուղերում, որպեղ գործնականում բոլոր ընկերները զոհեր ունեն, նրանց հիշարարակի հարգան ձևեր են առաջացել, որոնք ուղղակի միրված են «թորքին հիշեցնելու»: Նարկապես այն բնակավայրերում, որոնք սահմանին մոտ են (իսկ փրկվածները ջանացել են սահմանին մոտ փրկվորվել՝ շուրով էրգիր վերադառնալու հույսով), և մոտակայքում բարձր լեռներ կամ բարձրադիր թաղամասեր կան, բնակիչները գիշերը մեծաթիվ խարույկներ են վառում ընտրելով Թորքիայից առավել փեսանելի վայրերը: Մովորաբար այրում են մաշված անվաղողեր, որոնք երկար են այրվում, և կրակն ու բոցը երկար ժամանակ փեսանելի է լինում: Ուջան գյուղում «Ապրիլի 24-ի առաւոյրյան գյուղի 90%-ն այցելում է Ծիծեռնակաբերդ, դրանից հեւրո գալիս ենք, արդեն երիտասարդները էդ անիվները թե ինչ ծանրությամբ, թե ինչ դժվարությամբ բարձրացնում են էդ սարը... Նազարավոր անիվներ, հազարավոր... Մենք մի հար «Փերի դոշ» ունենք, ամենաբարձր սարն է, որպեղի կրակները կարող են փեսանել ոչ միայն Թորքիան, այլև շար-շար այլ պեւրություններ էլ: Երիտասարդ փրանները հասնում են սարը, կարկուր լինի, անձր լինի, միևնույն է, պեւրք է կրակը վառվի, ու բոլորս պեւրք է շրջենք ամբողջ գյուղով... Ամեն մեկը ինչով կարող է՝ հովանավորում է, մեկը՝ վառելանյութով, մեկը՝ մեքենայով, մեկը՝ մի քիչ հացով, ջրով ու փենց կազմակերպում ենք: Կրակներով գրում ենք 90, 91, 92, որ թորքը, ամեն անգամ փեսանելով, հիշի, թե քանի փարի է անցել էդ եռնից» (Ուջան գյուղի գյուղապետ Առաքելի պարմածից):

Աշնակ գյուղում կրակներ վառելուց բացի հնչեցնում են նաև զոհերին նվիրված հուշարձանի զանգը, որը կառուցվել է վերջերս անհարական նախաձեռնությամբ: Նուշարձանը՝ երկու փարբեր քարերի ընտրությամբ և համադրությամբ, խորհրդանշում է

Տրապիզոնի, Խարբերդի, Բիթլիսի, Էրզրումի, Տիգրանակերտի, Վանի, Սեբաստիայի հայերի «Ճեղքված ճակարագրերը»:

Ավելի ուշ անհարական ու համայնքային նախաձեռնությամբ ցեղասպանության շրջանի հետ առնչություն ունեցող սիրված կերպարների հանրայնացումն զգալիորեն ընդլայնվեց (դրանք հիմնականում կա՛մ հայերի փրկությանը նպաստած, ցեղասպանության թեմայի հանրայնացմանը նպաստած անձիք էին, ինչպես, օրինակ՝ ավստրիացի ֆրանց Վերֆելը¹, նորվեգացի ֆրիդյոֆ Նանսենը² և այլք, կա՛մ հայերի ինքնապաշտպանական ջոկատների առաջնորդներ, կա՛մ որբախնամ գործունեություն իրականացրածներ), կերպվեցին դիմաքանդակներ կամ կառուցվեցին հուշարձաններ, հրատարակվեցին գրքեր, հոդվածներ, օրացույցեր, լայնորեն փարածվեց ինտերնետը, և բազմաթիվ նյութեր տեղադրվեցին ինտերնետային կայքերում: Անհարական ողբերգությունների հիշողությունները դուրս եկան «թաքստոցից», մի քանի տարի դարձան հանրային քննարկումների թեմա, և իհարկե մեղմացավ դրանց «անհարականացումը»: Այդ ընթացքում բազմաթիվ անուններ, բառեր ու եզրույթներ կորցրեցին իրենց «դիսիդենտական» ընկալումները և նույնիսկ մասամբ վերածվեցին առօրեականի: Այդ ամենի շնորհիվ այսօրվա երիտասարդների պարկերացումներն ավելի հավաքական ու սոցիալական են, սակայն այդ սերունդը թուրքերի հետ շփման ու պարկերացումների անհարական փորձի ու պարկերացումների պակաս ունի: Պետք է ասել, սակայն, որ այդ փորձը նույնպես կուրակվում է, մասամբ՝ Թուրքիա գնացած ու վերադարձած կամ Թուրքիայում ժամանակավորապես հաստատված մարդկանց պարմությունների, մասամբ ուսանող երիտասարդության միջազգային զանազան ծրագրերի ընթացքում թուրք երիտասարդության հետ փոխշփումների, մասամբ՝ ինտերնետային հաղորդակցության միջոցով: Բոլոր դեպքերում Նայասարանի բնակչության մեծ մասի պարկերացումները Թուրքիայի ու թուրքերի մասին շարունակում են սնվել ընդանեկան պարմություններից, այդ իսկ պարճառով «Քանավոր պարմությունների» վերլուծության միջոցով հայ-թուրքական հարաբերությունների նկարմամբ Նայասարանի հանրության վերաբերմունքի ըմբռնումը, հիրավի, կարող է որոշ հարցականների պարասխաններ փրկել:

1 Ֆրանց Վերֆել (Franz Werfel, 1890 -1945) ավստրիացի գրող, հունանիստ, 1932-1933 թթ. գրել է «Մուսա լեռան 40 օրը» վեպը՝ թուրքական կանոնավոր գործերի դեմ Մուսա լեռան շրջակայքի հայ բնակչության ինքնապաշտպանության մասին:

2 Ֆրիդյոֆ Նանսեն (*Fridtjof Nansen*, 1861-1930) նորվեգացի հեղափոխող, գիտնական, դիվանագետ և ականավոր հումանիստ, Ազգերի լիգայի Գաղթականների միջազգային գրասենյակի ղեկավար: Ազգերի լիգայի խորհուրդը 1924 թ. ստիպված էր հաստատել հայրենիքից զրկված հայ գաղթականներին ինքնության վկայական փրկու նանսենյան նախաձեռնությունը: 320 հազար հայ գաղթական տարբեր երկրներում նանսենյան անձնագիր ստացավ, որը նրանց անձը հաստատող փաստաթուղթ էր և միջազգային ճանաչում ուներ: Մինչև այսօր ապրում են նանսենյան անձնագրերով մեծացած հայեր: Նանսենի Գաղթականների միջազգային գրասենյակը 1938 թ. արժանացավ Նոբելյան մրցանակի՝ Նանսենյան անձնագրերի ստեղծման գործում ներդրած ավանդի համար:

ԱՆՑՅԱԼԻ ՆԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԻՍԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Դժվար է ասել, թե Նայասարանի Նանրապետության հայերի, որոնք կազմում են երկրի բնակչության մոտ 97 տոկոսը, որ մասն է ուղղակիորեն կապված Արևմտյան Նայասարանի հետ, և Թուրքիայի ու թուրքերի հետ միասին ապրելու ընդհանրական կամ անհատական հիշողություններ ունի: Բացի այն, որ Թուրքիայում երիտթուրքերի կազմակերպած ջարդերից հետո կենդանի մնացած հայերի մի զգալի հատված հեղափոխում հաստատվեց այն ժամանակ Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Նայասարանում (հիմնականում Վանից, Կարսից, Սասունից, Մուշից, Բիթլիսից), հեղափոխում նույնպես՝ 20-ական, 40-ական, 60-ական թվականներին այլ երկրներում ապաստանած որոշ թվով հայեր (Սիրիայից, Իրաքից, Լիբանանից, Եգիպտոսից, Իրանից, Նուսսարանից, Բուրլարիայից, Ռումինիայից, Ֆրանսիայից, Արգենտինայից և այլ երկրներից) մի քանի հոսքով հաստատվեցին Նայասարանում՝ իրենց հետ բերելով նաև իրենց ընտանիքների պատմությունները: Նրանք մեծ մասամբ Թուրքիայի արևմտյան և հարավային շրջաններից փրկված հայերն ու նրանց սերունդներն էին (Ադանա, Սեբաստիա, Մարաշ, Կեսարիա և այլն): Նրանք ոչ միայն Թուրքիայի տարածքում տեղի ունեցած ջարդերի ուղղակի հիշողությունների կրողներ էին, այլև այդ հիշողությունների ու զգացմունքների միջավայր ստեղծողներ:

Ջարդերից փրկվածների ընտանեկան պատմությունները «թափանցել» են նաև Արևելյան Նայասարանի՝ ներկայիս Նայասարանի Նանրապետության տեղաբնիկ բնակչության ընտանիքները: «Թափանցելու» ճանապարհները տարբեր էին: Նախ՝ Արևելյան Նայասարանի տարածքում հայտնվածներից առաջին փրկվածների մեծ մասը տևական ժամանակ ապրել է տեղացիների տներում կամ նրանց տների օժանդակ կառույցներում, և հյուրընկալներն այս կամ այն կերպ դարձել են նրանց տառապանքների, սուգի, զգացմունքների, նրանց պատմությունների ու հիշողությունների մասնակիցը: Երկրորդ՝ դրանք «թափանցել» են փրկվածների սերունդների և տեղացիների ամուսնությունների, հարևանական ու աշխատանքային հարաբերությունների միջոցով: Գործնականում այսօր Նայասարանի Նանրապետությունում շատ քիչ մարդ կգտնվի, որ որևէ որոշակի պատմություն չիմանա 1915-1922 թթ. դեպքերի մասին: «Իսկ իմ հարսի պապի ողջ ընտանիքից միայն նա է փրկվել» (և պատմվում է փրկվելու պատմությունը): «Նորեղբորս թոռի ամուսնու հոր հորաքրոջը թուրքական մի բնակի հարեմից փախավ...»: «Մեր հարևանի պապին շալակած բերել է իրենց հարևանը...»: «Իմ աշխատակցի պապը մեծացել է ամերիկյան որբանոցում և մինչև կյանքի վերջը չէր կարողանում մոռանալ, թե ինչպես են իր ծնողներին իր աչքի առաջ մորթել...»: Այս նախաբաններով սկսվող պատմությունների կարելի է հանդիպել ամենուրեք:

Նայերից բացի, այս կարգի հիշողություններ ունեն նաև 1915-1920 թթ. հայերի հետ միասին Թուրքիայում ջարդերի ենթարկված եզդիների փրկված և Նայասարանում հաստատված մարդկանց ու ընտանիքների հետնորդները: Կարելի է ասել, որ Նայասարանի ներկայիս բնակչության մեծ մասն այս կարգի «հիշողությունների» կրող է:

Նայասարանի Նանրապետությունում կան ընտանեկան հիշողություններ կրող և դրանցով ապրող խիտ տարածքներ՝ ամբողջ գյուղեր և որոշ քաղաքային թաղամասեր, որտեղ հաստատվել են փրկվածները և երկար դեգերումներից հետո Նայասարան տեղափոխվածները: Ներկայիս Նայասարանի Նանրապետության Թալինի, Կոփայքի, Արմավիրի, Վարդենիսի և այլ շրջանների բազմաթիվ գյուղեր ամբողջովին բնակեցված են Վանի, Բիթլիսի, Սասունի, Մուշի, Ալաշկերտի գյուղական և քաղաքային բնակավայրերի ջարդերից մազապուրծ հայերով, իսկ Երևանի Զեյթուն, Սեբաստիա, Բութանիա, Մալաթիա

**Աղարագարցի և մերսինցի
ձնողներից Բեյրութում ծնված
Աիդա Թոփուզյանը պատմում է
իր հորաքրոջ պատմությունը:**



Թաղամասերը ձևավորվել են Թուրքիայի հիշյալ քաղաքներից ու շրջակայքից փրկված և 1940-1960-ական թթ. Նայասպան Կրեդափոխվածներով: Այս կարգի բնակավայրերում անցյալը ոչ միայն հիշողությունների թեմա է, այլև կենդանի ներկայություն, քանի որ դեռևս շարունակում են միմյանց գտնել ազգակցական կապերով արդեն զգալիորեն հեռացած արյունակիցները՝ հոր եղբոր-մորեղբոր-մորաքրոջ-հորաքրոջ թոռները, նախկին համագյուղացիների-համաքաղաքացիների սերունդները, նախկին ընկերների երկրորդ-երրորդ սերնդի ժառանգները, և անցյալը, թերևս մասամբ առասպելացված, «վերադառնում է» ներկա կյանք՝ ծանրացած անցած փորձիների բեռով կրկնակի. հայախոս-անգլախոս-արաբախոս-խապանախոս ներկան երբեմն լցվում է անցյալի թրջախոսությամբ կամ քրդախոսությամբ (որպես թրջախոս-քրդախոս ձնողներից ժառանգություն դեռևս առկա է թուրքերենը կամ քրդերենը իմացող սերունդը, որի մի մասը փարբեր երկրներում հայտնվելուց հետո սովորել է այդ երկրների լեզուն, բայց ոչ հայերենը, և միմյանց հանդիպելու դեպքում հաղորդակցության լեզուն դառնում է ձնողներից ժառանգած թուրքերենը, որով միմյանց պատմում են իրենց ներկան կամ, հարկապես, ընդհանուր գոհերի հիշարարկներով լի ապրած կյանքը) կամ ոչ վերբալ՝ «համրությամբ»։ չի գտնվում ընդհանուր լեզվակիրը:

Այս հանդիպումները լցվում են որոշակի անձանց ճակատագրերի վերապատմումներով, նոր հիշողություններով (*«Իսկ ես քո հորաքրոջը տեսա թվականին, Ավստրալիայում, պարզվեց, որ փրկվել է...»*: «...Ըն փափի քրոջը հայրս դուրս գալուց առաջ, 20 թվականին հանդիպել էր Արդվինում, մի թուրքի կին էր...»): *«Նորեղբայրդ նույնպես փրկվել է, հինգ տարեկանում Դեր Զորում մնացել է մի արաբի վրանում: Ես նրան տեսա, ծերունի արաբ է դարձել, իսկական մուսուլման, բայց հիշում էր մանկությունը: Նորդ անունն անգամ հիշում էր: Երբ սասացի, որ հայրդ փրկվել է և Նալեպում*

խանութներ է ունեցել, գավակներ ունի, բոլորովին չհեղափոխվեց»): Եվ լսողը հաճախ «հիվանդանում է» հեռավոր ազգականին գրելու ցանկությամբ: Մեր ռեսպոնդենտներն այդ կարգի շար պատմություններ են պատմել: Այսօրվա սերնդից ոմանք իրենց կորած ազգականներին գրելուց հետո երբեմն ավելի շար բան են իմանում իրենց ծնողների անցյալից, քան իրենց ընտանիքում իրենց դժվարին անցյալը երբեմն լռության քողով ծածկած ծնողներից (աղաքագարցի և մերսինցի ծնողներից Բեյրութում ծնված Աիդա Թփուզյանը հենց այդպես է բախվել իր անցյալին, երբ 1970-ական թթ. ԱՄՆ-ում գտնվել է նրա հոր հորաքույրը):

Վերջին քսան տարիներին այս կարգի հիշողությունները սնուցման մի նոր աղբյուր են սրացել՝ Թուրքիա գնալու և կորցրած հայրենիքը փնտրելու հնարավորությունը (այս գրքում զեպրեղված է նման մի համառոտ պատմություն): Մարդիկ գնում են, գրնում են իրենց նախնիների գյուղը, երբեմն՝ նաև փունը, պապերի պատմած սրբազան կամ կարևոր տարածքները՝ զերեզմանոցը, եկեղեցին, ուխտավայրը, ծառը, անտառը (պատմելիս սովորաբար ասում են «մեր գյուղը», «մեր փունը», «մեր անտառը»), իրենց հետ նվիրական երկյուղածությամբ բերում են նախնիների փեսած ու սիրած ծաղիկները, մրգերը, նրանց կարոտած աղբյուրի ջուրը, երբեմն նույնիսկ հանդիպում են անցյալը համեմատաբար իմացող մարդկանց, գրուցում նրանց հետ, և այս այցելությունները դառնում են նրանց հիշողությունները սնող նոր աղբյուրներ, նոր նյութեր: Նրանց շուրջ հավաքվում են



Ծաղիկները բերվել են Ալաշկերտի Խասպուր գյուղի շրջակայքից



«Հայրենական» թերթը

համերկրացիները, ազգականները, մի կույմ խմում են հայրենիքի ջրից, բերված հողից շաղ են փալիս շիրիմներին... Չծրագրված, շար բնականորեն ծիսականացվում է անցյալի հիշողությունների հեք հաղորդակցությունը:

Էջ 30-ի լուսանկարի ծաղիկները Ալաշկերտի¹ Խասարոյ² գյուղի շրջակայքից 2007 թ. բերել և իր համերկրացիներին բաժանել է նախկին խասարոյցի Ռ-աֆայել Սահակյանը: Գյուղալ Ղովհաննիսյանի ընտանիքին նույնպես ծաղիկներից բաժին է հասել, և նրանք մեզ սիրով նվիրեցին մի փոքր փունջ՝ որպես իրենց ընտանիքի սրբազան մասունք:

Ռ-աֆայել Մուշեղի Սահակյանը հիմնադրել է «Հայրենական» թերթը (հայրենիքը կանչում է) և այդ թերթի փարբեր համարներում պարբերաբար փայագրում է «էրգիր» կափարած իր ճանապարհորդության փայավորությունները:

Անցյալի հիշողությունների ծիսականացման և դեպքերի հանրայնացման մեկ այլ օրինակ է ամեն փարի սեպտեմբերի 20-ին հաջորդող կիրակի օրը Միջերկրական ծովի ափին գրնվող Մուսա լեռան փեշերին ապրած, ջարդերի ժամանակ ինքնապաշտպանություն կազմակերպած և քառասուն օր թուրքական կանոնավոր բանակին դիմադրած գյուղացիների փրկության օրվա նշումը Մուսա լեռան մարտերին նվիրված, Երևանից մոտ փասնիկ կիրումեփր հեռավորությամբ գրնվող հուշարձանի մոտ: Մուսա լեռան փեշերի գյուղերից փրկվածների ներկայիս սերունդները աշխարհի փարբեր երկրներից այդ օրը հավաքվում են Հայաստանում: Շաբաթ լույս կիրակի գիշերը հուշարձանի մոտ բացօթյա, փասնյակ խոշոր կաթսաներում, օջախների վրա եփվում է ավանդական հարիսան: Հուշարձանի շուրջ հավաքված մուսալեռցիները, նրանց հայաստանյան

1 Ալաշկերտ- (Alashgerd, Էլեշկիր, Թ-փրագգալե, Թ-փրագղալա, Թ-փրախկալա, Թ-փրակկալա, Թ-փրակկալե, Թ-փրաղկալա, Թ-փրաղկալե, Թ-փրաքգալե, Թ-փրաքկալա, Թ-փրաքկալե, Թ-փրաքքալե, Վալարկերտ, Վալաշակերտ, Վաղաշակերտ, Վաղարշակերտ, Վաղարշակերտ): Մինչև 1914թ.՝ Կարինի (Էրզրումի) նահանգի Բայազետի գավառակ (կազի)՝ Ալաշկերտ կենտրոնով: Գրնվում է Արևելյան եփրափի աջակողմյան վրակ Շառիան գետի վրակներից մեկի հովտում, Տրապիզոն—Էրզրում—Մակու—Թավրիզ ճանապարհի վրա: Ծովի մակերևույթից բարձրությունն ավելի քան 1700 մ է:

2 Խասարոյ- (Խանզոր, Հագարոյ):



Մուսա լեռան հայ բնակչության փրկության փարելիցի նշումը, 2009 թ.

ծանոթներն ու ազգականները, հուշարձանի շրջակա բնակավայրերի բնակչությունը գիշերը անցկացնում են եփվող հարիսայի օջախների մոտ՝ հիշելով իրենց պապերի պատմությունները, միմյանց պատմելով փրկությունից հետո իրենց ծնողների ու ազգականների հետագա դեգերումները: Գիշերային այդ հավաքներն ուղեկցվում են մեծ թմբուկների ռիթմիկ հարվածներով՝ որոշակի խորհրդավորություն, ծիսականություն հաղորդելով երևույթին: Մեր բանասացը փվյալ դեպքում մուսավեցի չէր, այլ՝ փեղացի:

«Այսրեղ (նկարի ունի Մուսա լեռան բնակչության փրկությանը նվիրված հուշարձանի շրջակա հայաստանյան բնակչությանը) ամբողջ փարի սպասում են Մուսա լեռի օրվան: Մենք բոլորս էլ փանը պատրաստվում ենք: Բոլորս էլ հարիսա անում ենք էդ օրը, բայց դե աշխատում ենք ընդեղինը բերենք, որովհետև ընդեղինը մատաղ ա կոչվում: Մուսավեցիները գումար են հավաքում, մեզնից՝ չէ, հետո օգնություն ա

գալիս ինչ-որ էն կողմերից: Ը փենց անում են, հարյուր պղինձ, հարյուրից ավելի էլ անում են: Ամեն փարի ավելանում ա, սկի անասունի քանակն էլ չենք իմանում՝ ինչքան ա ըլնում, ուղղակի էն ենք փեսնում, որ պղինձները շարած են: Նարցնում են՝ ասում են 100, 110, 120: Պղինձների քանակը կախված ա, թե քանի փարին ա Մուսա լեռան: Սկզբում անում էին քառասուն պղինձ՝ կապված Մուսա լեռան 40 օրվա հետ, բայց հիմա անում են փարեղարձի թվով: Քահանան միսը մորթելիս չի օրհնում, հերիսան որ պատրաստ ա ըլնում, կեսօրից հետո ժամը 1-ից- 1.30-ի կողմերը քահանան գալիս ա օրհնում, նոր հերիսան բաժանում են: Տոնն սկսվում ա շաքաթ երեկոյան և ավարտվում հաջորդ օրը, կիրակի երեկոյան, որովհետև հերիսան բաժանելուց հետո սկսվում ա գեղարվեստական մասը, հետո էդ եկած հյուրերը, որ իրենց հետ իրենց քեֆի ուրելիքն էլ են բերում, ծառերի փակ միջև ուշ գիշեր քեֆ են անում, հետո նոր ցրվում են»:

«ԷՐԳՐԻ ՆՈՂՆ ՈՒԺԵՂ Է, ԷՐԳՐԻ ՄՐԳԵՐՆ ԱՆՈՒՇ ԵՆ, ԷՐԳՐԻ ԶՈՒՐԸ ԿՌՈՒՆԿԻ ԱԶՔԻ ՆՄԱՆ ԶՈՒԼԱԿ Է»

«Մեր պատկերը, որ Էրզրից են էկե, իրանց երազանքն է էղե, որ իրանց երկրի հողը լցվի իրանց գերեզմանի վրա: Միշտ պատրաստ ասում էր՝ եթե ընդեղ էլ չթաղվեմ, որ գնաք, ընդեղից մի բուռ հող բերեք» (Վարդ Աբաջյանի պատմածից): Սասունի Մջգեղցի Ռադիկ Շառոյանը շապերի նման երեք փարի առաջ հող է բերել հայրենիքից: «Բոլոր մջգեղցիներին, ովքեր որ մահացած են մջգեղցիներից, փարել, էս հողից գերեզմաններին լցրել էին: Էսքանն էլ ինձ հասավ» (Նամկեր Նովսեփյանի պատմածից):

Նայապարանում ձևավորվել է արևմտահայության որոշ սոցիալական ցանց, որը պայմանականորեն կարելի է անվանել «Էրզրային»: «Էրզրային» սոցիալական ցանցը ներառում է նախկին հայրենակիցներին և պարտադրում է վարքի ու հարաբերությունների որոշ նորմեր՝ միմյանց հետ խոսել բարբառով, օգնել միմյանց, մասնակցել կյանքի կենսացիկլի կարևոր արարողություններին՝ հարսանիքներին, կնուսքներին, թաղումներին, պարել «Էրզրի» պարերը, պատրաստել «Էրզրի» կերակրարեսակները և այլն: Նրանցից

Աշնակցի Նամկեր Նովսեփյանը ցույց է փալիս «Էրզրից» բերված հողը:





Ալաշկերտի Խասարուր գյուղից փրկվածների սերունդները Նայասարանի և Ռուսասարանի փարբեր մասերից ամեն փարի հավաքվում են մեկ օր միասին լինելու համար:

շաբերն ունեն նաև պարբերական հանդիպումների հարուկ օրեր, հարկապես այն դեպքերում, երբ ժամանակի ընթացքում նախկին համագյուղացիները ցրվում են, ապրում են փարբեր վայրերում:

«Էրզրային» միկրոաշխարհը մեծարում է «Էրզրային» մրավորականներին, ջարդերի ժամանակ ինքնապաշտպանություն կազմակերպած առաջնորդներին, ինքնապաշտպանության ընթացքում գոհվածներին, խոնարհվում է ցեղասպանության ժամանակ «Էրզրի» բնակչության փրկված մասի փրկության գործին մեծապես նվիրված Անդրանիկի առջև, փոխանցում է «Էրզրի» այցելածների փրկվածությունները, խստորեն հեղուկում սերնդեսերունդ ցեղասպանության հիշողությունների ժառանգորդմանը, դարապարտում նահանջը «Էրզրի» սովորույթներից և այլն:

Մեր համարյա բոլոր պարմողները հիշում են իրենց պապերի պարմությունները «Էրզրի» սքանչելի բնության, աղբյուրների, ջրերի, ծաղիկների, անտառների մասին. «Մամասսա սսում էր ամեն ինչը շար լավ ա աճել, համով ա եղել, սսում ա՛ կողքի գյուղը, եթե խնձորները հասնեին, մենք էս գյուղում հոտն առնում էինք, սսում էինք Տափալանի խնձորները հասել են» (Արփիկ Շահինյանի պարմածից): «Բինգյուլից մի հատ կին կար մեր մոտ, փարիկ էր, Բինգյուլից էր էկել, որ սենց մրգերը բերում-դնում էինք, էէհ՝ սսում էր, բինգյուլաջրեր, բինգյուլամրգեր, էս ուրեյու բա՛ն ա, որ դուք ուրում եք... Ասում ա մեր մոտ ձմերուկ էր լինում, որ էրեխեք նստում էին վրան, ուրբերներ չէր կպնում, փաս փարեկան էրեխի ուր գերնին չէր կպնում: Տարին փասերկու ամիս գարուն է էղել Բինգյուլ» (Վարդ Աբաջյանի պարմածից): Ալաշկերտիցի Նրաջյա Նովհաննիսյանը երագում է հայրական Խասարուր գյուղը գնալ. «Պասպին միշտ սսում էր՝ էդ մեր գյուղից մանասնա էր թափում, մենք ընտել էկրան հարստություն ունեինք, հենց ըրից էր գալիս, որ բնությունը մեզ փալիս էր, միշտ

ինձ ասում էր՝ մանասնա էր թափում: Մեր ցորենով մենք պահել էինք Սասունը: Շատ հարուստ գյուղ ա եղել, անծայրածիր: Ամբողջ դուրանը ցորեն ա, էն ժամանակ, դեռ նախքան եղեռնը, եղեռնից առաջ, հացով մատակարարել ա ամբողջ Սասունը: Ասում էր՝ մի հարքար չկար, բայա ջան, որ էդ քար վերցնեն, հող էր, մաքուր հող էր: Խասարուրի աղբյուրն էլ, ասում էր, կռնկի աջք ա դրա ջուրը, նենց գուլալ ա, ոնց որ կռնկի աջք լինի»: Ծնողներից շարերն էին իրենց գավակներին «կավակում» էրգիր գնալ. Գրիշ Բաղալյանի մայրը, որ շար ծանր կյանքով է ապրել նաև փրկվելուց հետո, իր գավակներին անընդհար հորդորում էր, որ հենց հնարավորություն լինի, իրենց կյանքի մասին աշխարհին պարզմեն և անպայման գնան իր հոր փունը քեսնեն. «Որ ես կմահանամ, որ ժամանակը կլի, դուք ամեն ինչը կպատմեք, ձեզի կթողան, կգնաք իմ հորս օջախը կրենաք»: Ասում էր՝ «կեթաք գյուղին էսենց բարակ, նեղ ճամփեք են: Գյուղի վերջը մեր փունը... Ամենավերջի փունը, ըսենց դռչին էր էդ գյուղը, ուրանց փարսածության...»:



Ալաշկերտի Խասարուր գյուղի ջարդերից 7 փարեկանում փրկված և ամերիկյան որբանոցում մեծացած Միհրան Նովհաննիսյանի թոռ Տաթևիկը ջորս-հինգ ժամ պարում է «Էրգրի» պարերը: «Ամբողջ գիշեր կարող եմ պարել մեր գովընդը», -ասում է Տաթևիկը:

«Էրգրի» անհավարալի գեղեցկության մասին պարմությունները շարերի մեջ անրջային պարկերներ են ձևավորել, և ոմանք փազնապներ ունեն, որ եթե իրականությունը չհամապարասխանի իրենց սպասումներին, կարող է մեծ հիասթափություն լինել: 2000 թ. Վասակ Թորոյանը կարողանում է գնալ իր պապերի՝ Բիրլիսի նահանգի Մուրկանի մուր գրնվող Արփի գյուղ: Նա պարմում է, որ գյուղին մուրենալիս լուրջ երկընարանք ուներ. «...Ես շար էի լարված, սհավոր... Էդ ժամանակ... շար մեծ երաշար էր, էդ փարին օգուտունին երաշար էր: Նիմա արդեն գյուղին մուրիկանում եմ, փեսա, որ երևի թե էն, որ հայրս էր պարմում, էդ դրախարի ծառերը չեմ փեսնում... Նիմա գյուղին եմ մուրենում: Անկեղծ ասած խնդրեցի մեքենան կանգնեցնել: Նիմա երկու քան կա, ո՞րն է ավելի կարևոր՝ հիշողությունը, հանկարծ էդ դրախարի հիշողությունը կորե՞ն է ճիշտ, գնալ ճիշտը փեսնե՞լ, թե՞ հետ գնալ: Վերջը որոշել եմ գնալ» (Վասակ Թորոյանի պարմությունից):

«Էրգրային» սոցիալական ցանցն, անկասկած, թուրքերի ու Թուրքիայի քրդերի մասին իր պարկերացումները խարսխում է գլխավորապես հայրենիքում ապրած փարիների հիշողության վրա, և սա մասամբ այն դեպքն է, երբ կարող ենք խոսել նաև հավաքական սոցիալական հիշողության ազդեցության մասին: Սույն աշխարանքում «Էրգրային» սոցիալական ցանցը ներկայացված է Աշակ և Ուջան գյուղերի բնակիչների պարմությունների օրինակով: Նույն ցանցից են ծագումով Ալաշկերտի Խասարուր գյուղից Նովհաննիսյանները, Դալարիկ, Դաշպաղեն գյուղերի մեր գրուցակիցները, «Էրգրի» այցելած Վասակ Թորոյանը, սասունցի Արեգնազ Պողոսյանը, Ալմաստ Նարությունյանը: Այս ցանցում ընարանեկան պարմությունները փոխանցվում են ամենայն խնամքով ու մանրամասներով:

ԱՆՑՅԱԼԸ ՆԵՐԿԱՅՈՒՄ, ՆԵՐԿԱՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ («Նորս անունը Սերոբ է, մորս անունը՝ Մոսե»)

Դժվար է նույնիսկ պարկերացնել, թե ինչ մանրամասնություններով են դրանք սերնդեսերունդ վերապարմվել ընդանիքներում, որի արդյունքում կուրակվել է «ցավի ու հիշողության վերաիմաստավորման» սեփական փորձը (երեխաները սերնդեսերունդ կրում են ջարդերին զոհ գնացածների անունները. «Պասպիս ընտանիքից միայն ինքն է փրկվել, կիսն ու երեխաները սպանվել են: Նեյրո ախտերի ամուսնացել է երկրորդ անգամ և նոր ծնված երեխաներին անվանակոչել է կորոտրածներին զոհված իր երեխաների անուններով» (Պավել Ավերիսյանի պարամադից); «Տալու իր սպանված եղբայրների անուններով իմ անունը դրել և Վարդան, եղբորս անունը՝ Սերոբ, քույրս Մարո է՝ քույրս ճանապարհին մեռած աղջկա անունով: Ծանապարհին հինգ երեխա է մահացել» (Վարդան Նակոբյանի պարամադից); «...Կեսրայրիս եղբայրը, ամեն քարի ապրիլի 24-ին, սեղան պրի գցեր, ամբողջ ազգին պիտի հավաքեր ու, ոնց որ սասած, հաշվեպու էր անում. ասում էր՝ որդի ինչքան փղամարդի ա կորցրել և քանիսն են ծնվել, նրանց փեղը, պիտի լրացվի, պարկերացնում՝ և՛ ք. փղուն ասում էր՝ դու իրեքը պիտի ունենաս, դու էրկու պիտի ունենաս, որ մեր կորած, սպանվածների փեղը լրանա: Եվ նա իր թոռան անունը Նարգիզ դրեց՝ իր սպանված քրոջ անունը: Վարսը դեմ կանգնեց, թե Նարգիզն ի՞նչ ա, ասեց՝ ես Նարգիզ եմ դնում: Իմ քույրը, ասեց, իմ աչքի առաջ ա արյան շիթերով գնացել...»)(Անահիտ Բարդակջյանի պարամադից): Անձնանունները զգալիորեն վերաձևավորվել են «Էրգրի» փեղանունների վերարտադրության սկզբունքով (բազմաթիվ են պարամական հայրենիքի փեղանուններով անձնանունները՝ Սիփան¹, Տավորիկ², Մասուն³, Մուշ⁴, Տարուն⁵ և այլն: Թալինի Ձորագյուղում մի կնոջ անունը Ջոզան էր՝ ի հիշարակ Մասնա հայրենի Գվարս գյուղի Ջոզան անունով արտավայրի): Ձևավորվել են հայրենիքի «թաքուն խորհրդանիշներ» (ինքնապաշտպանական շարժման առաջնորդների անձնանունների վերարտադրություն ընդանիքներում («...Իմ թոռու որ ծնվեց, ուզում էին անունը Առաքել դնել, ախիսնքն՝ իմ անունը: Ես չհամաձայնեցի, պահանջեցի Անդրանիկ դնել: Ասեցի՝ մինչև մեր քան մեջ Անդրանիկ չլինի, շարունակություն չի լինելու: Վորս անունը Սերոբ է՝ Աղբյուր Սերոբի⁶ անունով, մորս

1 Սիփան - լեռ Վանա լճից ոչ հեռու, բարձրությունը՝ 4443 մ. :

2 Տավորիկ - Տավորի, Դավորիկ. գավառ և գյուղ Բիթլիսի նահանգի Մասուն գավառում, Շաբախ (հնում՝ Ասպական) գետի ձորահովտում: 1915 թ. Տավորիկի բնակիչները դիմել են ինքնապաշտպանության: Բնակիչների փոքր մասն է փրկվել և ապաստանել Արևելյան Նայաստանում:

3 Մասուն - շախարհագրական փրամաք Արևմտյան Նայաստանում: Գրնվում է Նայկական Տավրոսի համակարգում: Որպես Մասունի գավառ մտել է Մեծ Նայքի Աղձնիք նահանգի մեջ: Օսմանյան վարչական բաժանումով Մասունի գավառակներն ընդգրկվել են Բիթլիսի վիլայետում համանուն, Մուշի և Գենջի սանջակների մեջ: XIX դարի վերջին Մասունը դարձավ ինքնապաշտպանական և ազգային ազատագրական շարժման կենտրոն: 1915- ին Մասունի բնակչությունը շուրջ 6 ամիս դիմադրեց թուրքական զորքերին և քրդական ջոկարներին (Մասունի ինքնապաշտպանություն)՝ փրկով ծանր կորուստներ: Փրկված սատուցիները գաղթել են Արևելյան Նայաստան բնակություն հաստատելով հիմնականում ներկայիս Թալինի և Աշտարակի շրջաններում:

4 Մուշ - քաղաք և գավառակ Արևմտյան Նայաստանի Բիթլիսի նահանգի Մշո գավառում: Գրավում էր Տարունի (Մշո) դաշտի մեծագույն մասը: 1915 թ. Մշո 109 գյուղերից փրկվել է հազիվ 1500 հայ: Ահռելի էր նաև Մուշի մշակութային կորուստը (վանքեր, եկեղեցիներ):

5 Տարուն - պարամական գավառ Մեծ Նայքի Տուրուբերան նահանգում: Գլխավոր քաղաքը՝ Մուշ: Նայերն այն անվանել են Տարուն Նոյի ժառանգներից Տարբանի պարվին: Գավառը Արարատի և Քաղավորի ժամանակաշրջանում հայերին է անցել Սելեկյաններից: Տարունում է ծնվել հայոց գրերի սրբեգծող Մեսրոպ Մաշտոցը: Տարուն անունը մշտապես ընկալվել է որպես արևմտահայության հայրենիքի խորհրդանիշներից մեկը:

6 Սերոբ Վարդանյան, ծնվ. 1864 թ. Խյաթի գավառում: 1895 թ. Խյաթում կազմակերպել է ինքնապաշտպանական շարժում: 1898 թ.՝ դիմադրության ժամանակ, վիրավորվել է Գեյիեցյուզան գյուղում: 1899 թ. նրան թունավորել են: Սպանվել են նաև նրա որդին և երկու եղբայրները: Աղբյուր Սերոբի սխրանքների մասին ժողովուրդը բազմաթիվ երգեր է հյուսել:



Թալինի ճանապարհին գտնվող «Էրգիր» անունով ռեստորանը

անունը՝ Մոսե!՝ Մեր գյուղում ամեն ընտանիքում Անդրանիկ անունով տղա կա, շատ ընտանիքներում՝ Սերոբ, Գևորգ» (Ուշան գյուղի գյուղապետ Առաքելի պատմածից)), լքված բնակավայրերի ինքնահնար քարեգների փոխանցում ժառանգներին, հայրենիքից բերված գրքերի սրբացում, բարբառների, հայրենիքից բերված երգերի ու պարերի խսրվապահանջ օգտագործում, հայրենակիցների պարբերական հավաքներ... և, վերջապես, «Էրգիր» բառը: Երկիր բառը, որ հայերենում առիասարակ մի քանի նշանակություն ունի («ամբողջ աշխարհ», «երկրի մի մասը, գավառ», «գետին, հող»), փախստական մուշ-սասունցիների բարբառով օգտագործվում է նաև «հայրենիք» իմաստով: Մուշ-Սասունի բարբառով այս բառը հնչում է «Էրգիր» ձևով: Մշեցիներն ու սասունցիները «Էրգիր» բառը գործածում են բացառապես իրենց թողած հայրենիքի առնչությամբ, «Էրգրի երգերը», «Էրգրի մրգերը», «Էրգրի հողը» ասելիս նկատի ունեն Մշո կամ Սասնա երգերը, մրգերը, հողը: Այս բարբառից «Էրգիր» բառն աստիճանաբար ձեռք է բերել «հայրենիքի» նոր՝ Արևմտյան Նայաստան իմաստը. «գնացել էի Էրգիր» նշանակում

1 Մոսե - Մոսե մայրիկ (Մոսե Վարդանյան), ծնվ. 1868 թ. Թեղուր գյուղում: Մահացել է 1953 թ. Եգիպտոսում՝ Ալեքսանդրիայում: Աղբյուր Սերոբի կինը և գինակիցն էր: Մասնակցել է ինքնապաշտպանական կռիվներին: 1899 թ. Գեղիեգյուզանի կովում վիրավորվել է, կորցրել որդուն: Նրա մյուս որդին ջարդերի զոհ է գնացել Կարինում: Անցել է Կովկաս, իսկ Նայաստանի խորհրդայնացումից հետո՝ Ալեքսանդրիա:

է «գնացել էի հայրենիք» կամ «գնացել էի Արևմտյան Նայասպան»: «Էրգրի» սոցիալական ցանցում «Էրգրի» բառով անվանվում են թերթեր, ռեսպորտաններ, գրվում են բանաստեղծություններ և այլն: Գլխավորապես «Էրգրեցիներով» բնակեցված Թալինի Երևան-Թալին ճանապարհին գտնվող «Էրգրի» անունով ռեսպորտանի ճիշտ դիմացի մայթի մեկ այլ ռեսպորտան կրում է «Կարոտ» անունը՝ միավորելով «Էրգրի կարոտը»:

«Էրգրին» իր միկրո-մշակութային առանձնահատկություններով, լեզվով, վարքի նորմերով, «Էրգրեցիների» ինքնությամբ ու ծրագրերով, անցյալի «այսօրով» թողնում է ժամանակի կանգ առնելու զգացողություն. այս մարդկանց կյանքը զգալիորեն այնպեղ՝ «Էրգրում» է, քսաներորդ դարի սկզբում, հատկապես պարմելիս, երբ անցյալի մասին պարմողը բայերը գործածում է ներկա ժամանակով:

2009 թվականին ծրագրավորելով հավաքել առանձին ընթանիքների անցյալից եկող «բանավոր պարմությունները» կամ, ավելի շուրջ, «պարմությունների հիշողությունները», մենք չէինք պարկեցանք, թե ինչքան կենդանի են դրանք, ինչքան մանրամասն և ինչքան «ներկա»: Վարաի լինելով, որ մարդն իր կենսագրության հեղադարձ հայացքով հաճախ ակամա ներկայացնում է սոցիալականացված անցյալը, սպասում էինք, որ մեր ռեսպոնդենտներն իրենց ընթանիքի անցյալի կենսագրությունը կպարմեն այն հասկացություններով ու եզրույթներով, որոնք ձևավորվել են իրենց ապրած շրջանի գաղափարախոսության կամ հասարակական մշակույթի միջոցով: Այս երևույթը, սակայն, գոյություն ունի միայն մասամբ: Ծնողների կամ պապերի պարմության ընթանեկան փարբերակը պարմելիս հաճախ էր հնչում, օրինակ, «ցեղասպանության ժամանակ» արտահայտությունը, որն, անշուշտ, հեղադարձ շրջանի եզրույթ է, սակայն պարմողի համար դրանք իր պարմած դեպքերի ընթացքում եղած ընկալումներ էին: Այսօրվա պարմողները երբեմն շատ ընդհանրական են ներկայացնում իրենց հարազատներին սպանողներին, ինչպես Գյոզալ Նովհաննիսյանը, որ, օրինակ, պարմելով իր սկեսորի սպանության պարմությունը, ասում է. «*Ոսկի են պահանջել, ասել ա՛ չունենք, քուրդն ու թուրքը վերցրել գցել են թոնրի մեջ, վառել*»: Նա, բնականաբար, չի կարող նկարագրել այդ «թուրքին ու քուրդին», ինչն, օրինակ, կաներ նրա սկեսորը, որի աչքի առջև փրկել է ունեցել սպանությունը, և ով հեղադարձ իր հարսին բազմիցս պարմել է այդ դեպքը: Ծնողների կամ պապեր-փարբերի պարմածների հիշողությամբ վերականգնումներում գերիշխում է «*թուրքերը հարձակվեցին*», «*թուրքերը մորսն փրկեցին*», «*թուրքերը մորթեցին*», «*քուրդերը փարսեցին*» ընդհանրական ձևերը: Նավանաբար ընդհանրական, սոցիալական հիշողության օրինակ է նաև դեպքերի ընթացքը պարմելիս «*քառասուն մարդ*», «*քառասուն օր*» արտահայտությունների օգտագործումը (ոմանց պարմություններում ընթանիքը «*քառասուն մարդ* ուներ, որոնցից փրկվել է միայն մեկը» (Էլեոնորա Ղազարյանի պարմածից), կամ՝ «*եկեղեցում քառասուն մարդ է լինում հավաքված, բոլորին վառում են*»; կամ՝ «*Էդ փրկեց լինում ա քառասուն հոգի, քառասուն փղամարդ, մի քանի կին*», որոնք հավաքվել էին քննարկելու իրենց փախուստի հնարավորությունը, բայց չեն հասցնում, ինչ-որ մեկը մարմնում է նրանց փրկողը, և բոլորին կոտորում են (Արեգնազ Պողոսյանի պարմածից); կամ՝ «*Էդ ընթանիքն էնքան մեծ էր, որ քառասուն էրեխայի օրորոց էր օրորվում... դրանց բոլորին՝ քառասուն հարսին, քառասուն փղամարդուն, էրեխեքին, բոլորին կոտորում են: Մի աղջիկ էրեխա է փրկվել հարևան թուրքի գոմում, մեր գյուղում հարս էր*» (Էլյա Դավթյանի պարմածից): «*Քառասուն*» թիվը հաճախ է հանդիպում նաև փախուստի, դեգերումների պարմություններում: Կարելի էր ենթադրել, որ «40» թվի բանահյուսական կաղապարն¹ ուղղակի լեզվամաթողության դրսևորում է և մեր այսօրվա պարմողների սոցիալական մարտցման ձևը, եթե մեր գրուցակիցներից մեկն այն ուղղակի չկապեր հիշողությունների հետ: Ամապ Նարությունյանի մայրը, որ փախուստի ժամանակ վեց փարեկան է եղել, իր դարերը պարմել է, թե ինչպես էին ինքը, իր մայրն ու կրթսեր քուրդ քառասուն օր ցերեկները թաքնվում արտերում, գիշերը դուրս գալիս ուրելի խոտաբույսեր հավաքելու. «*Մամաս ասում ա՛ քառասուն օր մնացինք: Ասում եմ՝ մա, ի՛նչ գիտես քառասուն,*

1 «40» թիվը հանդիպում է հայոց բանահյուսության փարբեր ժանրերում հայկական էպոսում, հեքիաթներում, խաղիկներում և այլն, և թերևս արմաբավորվել է Ասորվածաշնչյան բառամթերքից:

ասում և՛ 14-ին մեզ կոտորեցին, ցորենն արդեն հասել էր... մոտավորապես եւ ասում»): Եթե «40» թիվը լեզվական կաղապար է, ապա այն, հավանաբար, առաջին պարամոդների լեզվամթերքից է և նույնությամբ թափանցել է հաջորդ սերունդների միջավայր:

Պեպոք է ենթադրել, որ սեփական ընդհանրի անհատական պարմությունը ներկայացնելիս այն քաղաքական խոշոր իրադարձությունների հետ կապելու ձգտումը նույնպես հետագա սոցիալական հիշողության ազդեցություն է, և «դեպքերի» մասնակից սուբյեկտները, հավանաբար, այդպես չէին ընկալում: Օրինակ, ոմանք իրենց ծնողների պարամոդից հիշում են, թե ինչպես էին օտարերկրյա դեսպանաւորների ներկայացուցիչներն իրենց գրասենյակների պարմուններից դիտում հայերի ջարդերն ու փրկահանությունը, մինչդեռ *«նրանք էին խրատում ցեղասպանությունը»:* Իբրև հիշողություն է ընկալվում մասնավորապես Գերմանիայի մեղսակցությունը հայերի ջարդերին (*«Աֆիոնկարսիիսարցի իմ հորը փասանյոթ փարեկանում թուրքերը փարել են Բաղդադի երկաթգծի շինարարության վրա աշխատելու, որը ղեկավարում էին գերմանացիները, և նա այն քչերից էր, որ սովից չմեռավ և հետո գաղթեց Բաղդադ: Իսկ գերմանացիները նայում էին սովից մեռնող մարդկանց: Նայրս միշտ ասում էր, որ գերմանացիներն են մեղավորը, նրանք էին թուրքերի թիկունքին կանգնած»* (Նամեսարուհի Ավագյանի հետ զրույցից)):

Երբեմն, սակայն, հարկապես օգնության դեպքերը հիշելիս, գործող անձիք անհատականում են: Ավելիս Բեշիջյանը մինչև այսօր հիշում է, որ իր հորը փախուստի ճանապարհին օգնած թուրք ոստիկանի «անունն Իսմայիլ Չաուշ էր», չնայած հայրը շար կարճ ժամանակով և դիպվածով էր հանդիպել այդ ոստիկանին: Վասակ Թորոյանը պարմում է իրենց ողջ գյուղին օգնած քուրդ Մալոյի մասին, Ամասր Նարությունյանը մինչև այսօր հիշում է իր մորը մանուկ հասակում օգնած քուրդ երիտասարդ հարսի՝ Տավեի անունը, Արփիկ Շահինյանը՝ իր պապական գերդասարանի Կեն անունով թուրք ծառային, որ փրկել է իր մորեղբորը:

Մեր գրուցակիցներն ընդհանրապես հիշողությունների միջոցով «վերակենդանացնում էին» իրենց նախորդ սերնդի/սերունդների անցյալը և իրենց կենսագրությունը: Նրանցից շատերի կենսագրությունը պայմանավորված էր նախորդների ողբերգական անցյալով, ինչը միանգամայն բնական է, և նույնիսկ երրորդ սերնդի կյանքում էր նախորդների անցյալը որոշ իմաստով «ներկա»: Դրա ցայտուն դրսևորումն է հարազարների հետ փրկի ունեցած որոշակի դեպքերը ներկա ժամանակով պարմելու հաճախակի հանդիպող երևույթը: Մեր գրուցակիցներից շատերի պարմությունների կառուցվածքն այնպիսին է, որ կարծես հենց իրենք են ներկա եղել այդ դեպքերին. *«Մայրս գալիս ա ու ասում ա...», «մորաքույրս այդ մարդու, այդ թուրքի փանը խոհարարուհի էր, ու երեխային փարավ նրա մոր...», «բերում են թուրքերը էդ մարդկանց, լցնում են գունի մեջ...»* և այլ այս կարգի ձևակերպումները պարմելու ընթացքում սրբեղծում են պարմողի մասնակցության փավորություն: «Անցյալը ներկա էր» նաև այն իմաստով, որ որոշ ընդհանրությունում ոչ միայն կյանքի, հարաբերությունների կառուցվածքում առկա էր նախորդների հետ փրկի ունեցածի շարունակական ներկայությունը, այլև մասամբ վերաբարդված էր նրանց մշակութային և սոցիալական կյանքում: Ընդհանրությունում պահվում են «Էրզրից» բերված գրքերը, հմայիլները, որոնք սրբացվել են, և համերկրացիները գալիս են դրանք խնկարկելու (աղոթելու, մոմ վառելու): Օրինակ՝ Գեղարքունիքի մարզի ներկայիս Նորակերպ գյուղում հայրնի ոսկեկող Ավետարանը, որը հայրնի է նաև «Սուքոյի Ավետարան» (Սուքոյի փան Ավետարան) անունով, փախստականները 1915 թ. իրենց հետ բերել են Մշո գավառի **Օվ** գյուղից, և մինչև 1935 թ. այն գտնվել է նույն ընդհանրությունում: 1935թ. Ավետարան ունենալու պարճառով կրոնական մոլեռանդության մեջ մեղադրված այդ ընդհանրություն խուզարկություն է կատարվել, և պեղական անվտանգության ծառայողներն այդ Ավետարանը փարել են: Մշո Օվ, Բիթլիսի Սեխ, Վանի Մխկներ, Սոսրաթ, Ալաշկերտի Զիրո գյուղերի փախստականներով բնակեցված Նորակերպ գյուղում, սակայն, հայրենիքից բերված Ավետարանի նկատմամբ սրբազան նվիրվածությունը չի նվազել, և մինչև այսօր մարդիկ այցելում են Սուքոյի փան ներկայիս ժառանգ Արարակ Նովսեփյանի փուն, որտեղ Ավետարանին հարկացված հարուկ անկյուն կա, մոմ



Լուսանկար՝ Մուրթյի փան ոսկեկող Ավերարանը պահվել է այս սնդուկում:

են վառում և մաքրաղ են անում: Նամարվում է, որ այդ Ավերարանը, ի թիվս այլոց, նաև թուրքից պաշտպանելու հարուկ գորություն ուներ: Որևէ երկիր մեկնող մարդիկ, բանակ գնացող երիտասարդները գալիս էին այդ Ավերարանի մոտ աղոթում, դրա մոտ գտնվող մեղաքայա թաշկինակներից իրենց հետ վերցնում, որովհետև համարվում էր, որ այդպես նրանք երբեք թուրքին գերի չեն ընկնի և անպայման կվերադառնան (Անահիպ Նովսեփյանի պարամածից): Այսօր Ավերարանի դարարկ անկյունում շարունակում են մեղաքսե թաշկինակներ պահել, և բանակ մեկնող երիտասարդները շարունակում են իրենց նախնիների ավանդույթը:

«[Թալինի] Չորագյուղում մի ընտանիք կար, Մանազկերտից էին: Երանք ավերարարան ունեին, Նարեկ՝ էին ասում, ըդենց փոքրիկ գիրք էր: Ամեն շաբաթ օր գնում էինք, էդ գրքի դեմ մոմեր էինք վառում: Էդ էրգրից էին բերել, մի հատ սև շորերով, նիհար, բոյով փափիկ էր: Մամաս ամեն շաբաթ օր մոմ էր փալիս, ասում էր՝ գնացեք, ադեի Ավերարարանի դեմ վառեք, արեք: Գնում էինք, ըդենց մտնում էինք կամաց, առանց խոսալու, վախենալով, որ հանկարծ չխոսենք, էդ մոմերը վառում էինք: Գիրքն էլ սենց սիրուն փաթաթած Նարեկ էր, դրած էր, մոմերը վառում էինք ու դուրս էինք գալիս: Որգնում էինք, էդ փափիկը միշտ մաքրել էր փալիս մեր ձեռքերը, կոշիկները հանում էինք, մտնում էինք, փոքրիկ թոնդրատուն էր, ըսենց թարեք էր սարքած պատի մեջ, մի քարը հանած... Էդ ընտանիքը հիմա ապրում է Աշտարակի Էրզնկայում, գիրքն էլ են փարեկիրանց հետ» (Վարդ Աբաջյանի պարմությունից):


Գրքերից բացի, պահպանվում են նաև «Էրգրից» բերված այլ առարկաներ, որոնք սրբազան ֆունկցիա են կատարում, և այսօր էլ մարդիկ այցելում են դրանց գործոթյանը հաղորդակցվելու համար (օրինակ՝ Մարտունու շրջանի Չորագյուղ գյուղի ալաշկերտի մի ընտանիքում պահվում է «Էրգրից» բերված պղնձյա մի թաս, որից մարմնի վրա լցվող ջուրը զանազան հիվանդություններ է «բուժում»: «Էրգրի» թասի հետ հաղորդակցվելու նպատակով այցելող մարդկանց հոսքն այդ բուն չի դադարում):



Մամվել Միրզոյանը ցույց է փալիս իր կազմած փոստաձառը, որը սկսվում է Բիթլիսի նահանգի Մեխ գյուղում 1830 թ. ամուսնացած Նովհաննեսից ու Ալմաստից և ներառում նրանց հինգ սերունդները:

1 Միջնադարյան հայ հոգևորական, բանաստեղծ և փիլիսոփա Գրիգոր Նարեկացու (մոտ 951-1003) «Մարտյան ողբերգության» պոեմը: Նարեկացի անունը Գրիգորն ստացել է Ռշտունյաց աշխարհի Նարեկ գյուղի անունից, որտեղի վանքում անցել է նրա ճգնաժողովական կյանքը: Նայ Առաքելական Եկեղեցին «սուրբ» է հռչակել Գրիգորին, իսկ ժողովուրդը սրբացրել է նրա փիլիսոփայական-աստվածաբանական պոեմը՝ «Նարեկ» անունով, որը ժողովրդական բառազանձում երբեմն նաև Ավերարան է կոչվել: «Նարեկին» վերագրվել են բուժիչ հատկանիշներ, հիվանդների մոտ բարձրաձայն Նարեկից հարվածներ են ընթերցվել, գիրքը դրվել է բարձի փակ և այլն:

Մարդիկ շարունակում են փոհմածառեր վերականգնել՝ փորձելով ներառել ինչպես արևմտահայ անցյալը, այնպես էլ՝ իրենց դեգերումների պարմության շղթան, պահում են Իրաքի հպարակությունը հասարարող փաստարարողը, Լիբանանի անձնագիրը:



Ավերիս Բեշիշյանը հպարտանում է իր լիբանանյան անձնագրով՝ պարմելով հայրենագրված հայերի նկարմանը Լիբանանի արար ժողովրդի ցուցարերած աջակցության մանրամասները:

Որոշ վայրերում, եթե մահացածը Արևմտյան Տայաստանում է ծնվել, քապանաքարի վրա գրվում է նրա ծննդյան բնակավայրի անունը, թեև Տայաստանում բնակավայրերի անունները քապանաքարերի վրա փորագրելու ավանդույթ չկա:



**ԱՐՇԱԿ ԳԼՈՐԳԻ ՍԱՐՈՅԱՆ ծ.
1882 թ. ԲԻԹԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ
ՍԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ մ. 1946 թ.
ՆՈՐԱԿԵՐՏՈՒՄ**

**ՊՈՂՈՍ ՍԻՍԵ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐ.
Պ. /1861-1946/. Ս/1865-1948/
Ծ.Տ. ԱՃԿԱ. ԲԻԹԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ
ՕՎ. ԳՅՈՒՂ. ՏԻՇԱՏԱԿ ՈՐԴԻՆԵՐ
ԴԱՎԻԹԻՅ Ա ԱՐՇԱԿԻՅ**



Որոշ ընտանիքներում մասունքի նման պահում են մահացած ծնողների կամ պապեր-տատերի անձնագրերը, որոնցում գրված է նրանց ծննդյան վայրը՝ Թուրքիա, այսինչ գյուղ/քաղաք:



Գառնիկ Մանուկյանի հոր անձնագիրը, որում գրված է, որ Արսեն Մանուկյանը ծնվել է Թուրքիայի Վան քաղաքում, 1903թ. մայիսի 10-ին:

Մրանք վավերագրեր են, որոնք հաստատում են նախնիների անցյալը և այդ անցյալը մասամբ տեղափոխում ներկա սերնդի ամենօրյա կյանք:

«ՓԱՌ-ՔԴ ՇԱՏ, ԱՍՏՎԱԾ, ՈՐ ԻՄ ԵՐԵԽԱՄՆ ՄԱՔՈՒՐ, ԱՆՄԵՂ ՄԵՌԱՎ, ՄԻ ԹՈՒՐՔԻ ՊԵՏՔ ՉԵՂԱՎ»

«Կեսուրս մի աղջիկ էր ունեցել, Սաթիկ էր անունը: Դրան թուրքն ուզել ա տասնել, ինքը 14 տարեկան ա եղել, պունուր աղջիկ, մեծ մարդ, քաշքաշում ա, մայրը չի թողնում, խնդրում ա, որ փոքր ա, մեղք ա: Էդ աղջիկը դողում ա վախից, ընկնում ա, ուրքի ա գալիս, Էնքան փոքր էր, ընկել նստել էր: Մի շաբաթ հետո մահանում ա, Էնքան էր վախեցել էդ էրեխան: Միշտ գնում ենք գերեզման, ծաղիկներ ենք դնում, բայց տապալ ա ստում էր. «Փառքը շատ, Աստված, որ իմ երեխան մաքուր, անմեղ մեռավ, մի թուրքի պեղքեղավ» (Արփիկ Շահինյանի պարմածից):

Որքան էլ դաժան է հնչում այս արտահայտությունը, այն, այնուամենայնիվ, հաճախ է լսվել և նույնիսկ այսօր է լսվում: Նայերը չափազանց ծանր էին տանում, երբ աղջիկներին «տանում էին»: Իսկ, ըստ երևույթին, հաճախ էին տանում: Նույնիսկ մեր գրուցակիցների մեջ գրեթե ընտանիք չկա, որի հիշողություններում ընտանիքից տարած աղջիկ չլինի, կամ գոնե փորձը արված չլինի: Աղջիկներին տանում էին, հավանաբար, տարբեր պարզառենքով, բայց կա՛մ ծնողները, կա՛մ քույր-եղբայրներն այդ մասին խոսելիս սովորաբար պարմել են, որ աղջիկը չքնաղ գեղեցկություն ուներ. նրանց կնության էին տանում: Ընտանիքները շատ ողբերգական էին ընդունում թուրքերի կամ քրդերի կողմից աղջիկներին տանելու դեպքերը: Աղջիկներին «տանում էին» նաև ավելի վաղ շրջանում, և ջարդերի օրերից բազմաթիվ դեպքեր են հայտնի, որ թուրքի կամ քրդի մահմեդականացած հայ կանայք շատ հայրենակիցների են օգնել: Այսպես թե այնպես, ջարդի օրերին աղջիկներ շատ են տարվել, տարվել են նաև ամուսնացած երիտասարդ կանայք, և տարածված էր այն պարկերացումը, որ ավելի լավ է աղջիկը մեռնի, քան քրդի կամ թուրքի կին դառնա: Այս վերաբերմունքն այնքան արմատացած էր, որ նույնիսկ մայրերն էին գերադասում աղջիկների կյանքը գոհաբերել, քան փրկել նրանց թուրքի կամ քրդի կնության գնով: Դժվար է ասել՝ ինչքանով է համապատասխանում իրականությանը, բայց երբեմն պարմում են նաև, թե ինչպես են հայրերն սպանել իրենց դուստրերին: Պակաս հայտնի է, թե ինչպես էին «տարված» կանայք իրենց զգում նոր ընտանիքներում: Մեր այսօրվա գրուցակիցները միայն մի քանի այդպիսի դեպքեր են պարմում, որոնց նրանք փրկյալ են թուրք ամուսնուց փախած և հայկական միջավայր վերադարձած հայուհիներից: Օրինակ՝ Աիդա Թովուզյանի պարմությունը նրան հայտնի է դարձել միայն 1975 թ., երբ փրկին Աիդայի հայրն ԱՄՆ-ում գրել է իր կորած մորաքրոջը՝ Քնարիկ Ջանիկյանին: Գաղթի ճանապարհին անհետացած Քնարիկը տասնվեց տարեկան էր, ծնվել էր 1900 թ. Աղաբազարում: Քնարիկին կենդանի մնացած հարազատները երկար են փնտրել: 1975 թ. գործերով Վաշինգտոնում գրնվող Նովհաննես Թովուզյանը՝ փրկին Աիդայի հայրը, փրկի քահանայից լսում է, որ հայկական եկեղեցուն շատ է օգնում Քնարիկ Ջանիկյան անունով մի կին: Նովհաննեսն, իհարկե, անմիջապես հեղափոխվում է, ծանոթանում փրկիկուց հետ և պարզում, որ նա իր փնտրվող հորաքույրն է: Քնարիկ Ջանիկյանն ամուսնացած էր, ուներ երկու որդի՝ Պողոս և Ռիչի: Նովհաննես Թովուզյանը նրան հրավիրում է Նայաստան, որտեղ էլ Քնարիկը պարմում է իր անհետանալու պարմությունը, ինչն անջնջելի հետք է թողել լսողների, այդ թվում՝ Աիդա Թովուզյանի վրա: Գաղթի ճանապարհին փրկի էր ունեցել շատ սովորական մի դեպք, հայ գաղթականներին ուղեկցող զինվորներից մեկը տասնվեցամյա աղջկան վաճառել էր մի հարուստ թուրքի: Աղջիկը նրա յոթերորդ կինն էր դարձել: Չնայած ամուսնու բացառիկ սիրալիք ու բարի վերաբերմունքին՝ միշտ թաքուն մտածել է փախչելու մասին: Այդ ընթացքում ունեցել է երկու երեխա՝ Մուստաֆա և Ջամալ անուններով, որոնց ինքն իր մտքում Պողոս ու Արտաշես է անվանել: Քնարիկին հաջողվում է ամուսնուն համոզել, որ տան հայուհի խոհարարուհուն իր զավակների դայակը դարձնի, և հետագայում ամուսնու տանտիրոջ ուղևորություններից մեկի ընթացքում դայակի օգնությամբ փախչում է Նալեյ: Որդիներին թողնում է դայակի մոտ: «Նալեյում առաջին դուռը, որ ծեծում է, դուրս են գալիս իրենց աղաքազարցի բարեկամները:

Դա Արմինե Կայենցի, երևի գիրքը, նկարչուհի Արմինե Կայենցի քեռայրի տունն էր: Նրանք աղաքագարցի են և Քնարիկի ազգականները...Տեսե՞ք՝ ճակարագրի ինչխաղ է»: Նյութը նկատ ազգականները Քնարիկին շուրջով ուղարկում են Վաշինգտոն, որտեղ նա ամուսնանում է մեկ այլ փրկվածի հետ և կրկին երկու որդի ունենում, մեկը, ինչպես ասվեց՝ դարձյալ Պոզո: «Նորաքույրս պատում էր, որ երկրորդ Պոզոսին կերակրելիս միջոց առաջին Պոզոսի հետ էր խոսում, բայց այդպես էլ երբեք իր առաջին որդիներին զբնեյրս փորձ չարեց: Մասրիկ վախենում էր, որ երեխաներին կվնասեն: Այնքան էր վախենում, որ նույնիսկ իր թուրք ամուսնուքաղաքի անունը մեզ չասաց: Քնարիկի ամուսինն ու որդիները գիրք են նրա պատմությունը, բայց նրանք էլ երբեք չեն փորձել հեղափոխությունը իրենց եղբայրների ճակարագրով»: Ահա Թոփուզյանը պատմում է, որ հորաքույրը չէր սիրում իր կյանքի այդ հարվածի մասին խոսել, և առաջին հանդիպումից հետո հավիպյան լռել է:

Արիկի Շահինյանի պարմությունը որոշ գուգահեռներ ունի այս պարմության հետ: «...Մորաքույրս էր, շատ սիրուն կին էր, գեղի ա տարել մի թուրք, 7 տարի իրա կինն ա եղել... էր թուրքի մոտ շատ մնացել ա, շատ տանջվել ա, վերջը ուրեմն ազատվել ա: Շատ հարուստ իսան ա եղել, Մաքրոսիոս բացի 15 կին ա ունեցել: Մաքրոսիոս ասում էր, որ իրան շատ սիրում էր, բայց օրը երկու անգամ ծեծել ա: 7 տարի, քանի երեխա ունեցել ա, ինքը խեղդել ա, չի ուզել թուրքից երեխա ունենա... Վա՛յ, որ չէր պատում... Ասում ա՝ Աստված եմ կանչել, որ պրծնեմ էս գերությունից, հա, ասում ա՝ մարդս հայերին գերում էր աչքիս առաջ, վառում, ասում էր՝ «բեզ էլ սենց կանեմ, եթե էթաս, փախնես ինձնից, քեզ կվառեմ նախորդ»: Մի օր էլ Մաքրոսիոս ամուսինը կնոջն ասում է, որ հայկական եկեղեցում խոմբ են կազմել, ինչքան հայ աղջիկ, կին կա, եթե ուզում են, կարող են գնալ, փոխանակում են թուրք գերիների հետ, և հարցնում է, թե արդյոք ինքը չի՞ ուզում գնալ: Մաքրոսիոս, մրածելով, որ ամուսինն իրեն փորձում է, հրաժարվում է. «Տեսնելով, որ ես մտադրություն չունեմ գնալու, ինքը հանգիստ թողել գնացել ա Բեյրութ, վաճառական ա էր ժամանակ եղել, ես էլ չարշավում փաթաթվեցի, գնացի եկեղեցի... Գնացի, ասացի՝ «ես հայ եմ, գեղի եմ այսինչ տանը, այսինչ իսանի կինն եմ, բայց ես իմ կամքով չեմ կարող զալ, պիրի գաթ գոռով հանեք ինձ տնից, խնդրում եմ», և շուր վերադարձա: Վաղորդ օրը մեկ էլ առավոտը դուռը ծեծեցին, թե սրեղ հայ աղջիկ կա: Էդ կնանիքը՝ «չէ, չէ, չէ, չէ, սրեղ հայ աղջիկ չկա», բոլորը բրթում են դուրս... Ես էլ վերևից տեսա, որ եկել են, իջնում են, ասում են՝ «հայր ես եմ...»: Էդ կնանիքը հիմի էլ ինձ են բրթում, ներս են բրթում՝ «վա՛յ Մաքրոս, տենց բան չանես, մեզ կսպանի, սադիս կսպանի, սրի կքաշի, վա՛յ չթողես», մի լացել են լացում, չոքում են... Ես էլ ասացի, որ «էս եկողը քեռոս տղան է, ինձ գրել է, պիրի գնամ»: Տե՛նց փախել պրծել ա»: Մաքրոսիոս Վայսարանում հեղափոխում ամուսնանում և ապրում է Մարգարա գյուղում: «Բայց Աստված իրան էլ երեխա չորվեց: Դե որ իրա երեխեքին ինքը խեղդել ա... Մարգարա գյուղում էլ թաղված ա հիմա էդ կինը իրա ամուսնու հետ»:

Անահիտ Բարդակչյանի պարմությունը թե՛ նման, թե՛ փարբեր է: Նախ՝ ջարդերից հետո Վալեպում հասարակած Բարդակչյանների ուղ աղջիկներից՝ Անահիտի մորաքույրներից մեկին մի թուրք բռնի տարել է և մահմեդական դարձնելով՝ հետո ամուսնացել: Քանի դեռ նրանք Վալեպում էին ապրում, Անահիտի մորաքույրերն ու ծնողները որոշ չափով շփվում էին դստեր և քրոջ, նրա առաջին զավակի՝ Արաի հետ: «Բայց հետո, մայրս ասում է, որ նրա ամուսինը փեղափոխվեց Թուրքիա: Էդ մարդն առավ իրա քոչն ու գնաց Թուրքիա, ըտենց էլ էր քրոջս կորցրեցինք»: Ավելի ուշ Անահիտի մյուս մորաքրոջն էլ մեկ այլ թուրք է ուզում տանել, և ծնողները որոշում են աղջկան շրպա ամուսնացնել: «Էդ մորքորս շատ սիրուն աղջիկ ա էղել: Մամաս ասում ա՝ օժիրը փռած, պիրի գան հարս տանեն, հարսանիքն ա շաքաթ իրիկուն, առավոտ վեր են կենում, տենում են մորքորս մահացել ա, - փիկին Անահիտը դադար է փախս, փորձում է չլացել: - Վախից ա մահացել, քանի որ ասել են՝ «մեկ ա, քեզի պիրի տանենք, - ըստ փիկին Անահիտի՝ աղջիկը վախեցել է, որ հենց հարսանիքին իրեն կփախցնեն: Վամենայն դեպս երիտասարդ աղջկա մահվան ընդամենական բացատրությունն այդպիսին էր: -...Մամաս ասում ա՝ մի օր էլ դուռը խփեցին, մի հասարձիավոր, էրկու հասար էլ իրացանավոր մարդիկ էկան, պապայիս ձեռքերը կապեցին ու տարան: Ասում ա՝ ես էլ երեխա, հեղափոխություն գնում եմ: Տարս ներսը նստած լացելիս ա եղել: Գնացինք, ասում ա, գնացինք,

տեսանք գերեզմանը քանդում են, ասում են՝ «ցույց տուր, որ մահացել ա»։ Պատկերացնում՝ ես դու... Մամաս ասում ա՝ էդ բանը երբեք իմ աչքի առաջից չի հեռանում, ու ասում ա՝ ես ո՛նց չեմ վախեցել, էրեխա եմ եղել, ասում ա, չեմ հասկացել...»։ Երրորդ քրոջը նույնպես փախցնում են, և նրանք այդպես էլ երբևէ չեն իմանում նրա հեղափոխական գաղափարները։ Ութ քույրերից, ի վերջո, մնում են միայն երկուսը։ Անահիտի մոր ամենադառը հիշողություններից է քույրերից մեկի սպանությունը։ «Անցավ միառժամանակ, ասում ա՝ էն մի քրոջս մորթեցին։ Մորթեցին, ասում ա, գլուխը, ոտը առանձին-առանձին շարել են հայի պարիզի վ, նայեք, - լքում է, փորձում է հաղթահարել արցունքները։- Ասում ա՝ էլ ձար չկա, չեն թողում, որ պապաս մորենա իրա էրեխուն։ Ասում ա՝ պապաս գնում ա, ասում ա կառավարությանը, ասում ա, որ էս քանի օր ա իմ էրեխեն էս վիճակին ա, թուրթերը սենց բան են արել։ Կառավարությունը, ասում ա, զինվորներ ա տրախ, գալիս են, պապայիս հեղ օգնում են, տանում են, էդ էրեխու կտրտած մասերը հավաքում են, թաղում են...»։

Գարեգին Չուգասյանի պապի առաջին կնոջը գաղթի ճանապարհին փախցրել են։ Գաղթի ճանապարհին այս կամ այն ձևով զոհվել է Չուգասյանների ողջ գերդասարանը, բացի երկու երեխայից, որոնցից մեկն այն ժամանակ յոթ տարեկան էր և հեղափոխում ամենայն մանրամասնությամբ գրել է իր հիշողությունները. «Եղեռնի, ամբողջ էդ զաղթի պատմությունն էր, Մեքսասիայից դուրս գալուց հետո, կանգառներով, քանի կանգառ եղավ, որ կանգառում ինչ պարահեց, և հետո ինչպես է այդ 8 տարեկան տղան հերթով կորցրել իր բոլոր հարազատներին, աչքի առաջ ոնց են մարդիկ կա՛մ մահացել, կա՛մ անհետացել, կամ նրա շնորհիվ մենք գիտենք պապիս առաջին ընտանիքի ճակատագիրը։ Պապիս կինը շատ գեղեցիկ կին էր և ճանապարհին, դուրս գալիս արդեն անհանգիստ էին, որ նա առաջին զոհերից մեկը պիտի լինի։ Դրա համար փորձում էին նրան մի քիչ տգեղացնել, որ ճանապարհին չփախցնեն, բայց դժբախտաբար հենց էդպես էլ լինում է, ճանապարհին փախցնում են։ Պապիս առաջին կնոջ ճակատագիրն այդպես էլ անհայտ մնաց։ Իսկ պապիս մայրը, այսինքն՝ մեծ տարու, ինքն իրեն Եփրատ գետին է գցել»։ Գ.Չուգասյանի պապն այդ ժամանակ Ամերիկայում էր, որտեղից փորձում է վերադառնալ Ռուրիկա՝ իր ընտանիքին օգնելու, բայց ճանապարհին իմանում է կնոջ և զավակների անհետանալու, ծնողների զոհվելու մասին։ Այդ լուրն ստանալուց հետո նա միանում է հայոց ինքնապաշտպանական ջոկատներին, և ավելի ուշ հաստատվում Պարսկաստանում։

Ավելի ուշ, երբ փոխնիկական միջոցները հարստացան, արդեն ծերացած փայր ու պապերին թոռներն սկսել են հարցեր փայր և ձայնագրել: Ոմանց հասցրել են փեսանկարել: Մեր 35 բանասացների հեպ մեր հանդիպումների ընթացքում մեզ փվել են նկարահանումների, ձայնագրությունների պարճեններ, փայագրված գրքեր, ձեռագրերի պարճեններ: Խասպուրցի Միիրան Նովհաննիսյանի և նրա ընփանիքի անցյալին նվիրված ծավալուն ձեռագիրը, որի պարճենը մեզ նվիրեց նրա որդին, սկսվում է Խասպուր գյուղի առաջին ջարդերի նկարագրություններից՝ XIX դարի վերջից, ներառում եղեռնի դեպքերը, որի ժամանակ Միիրանը եղել է 6 փարեկան, շարունակում նրա որբանոցային կյանքի մանրամասները, մորը գրնելու պարմությունը և հասնում մինչև XX դարի 50-ական թվականները:

Գարեգին Չուգասյանի պապի հորեղբոր ու հորաբորջ որդիները, որոնք եղեռնի օրերին եղել են համապարասխանաբար 13 և 8 փարեկան, երկուսն էլ հեփագայում գրանցել են իրենց հիշողությունները: *«Մեկը՝ Վահան Ղազարյանը, եղել է հայրնի մրավորակյան, Միացյալ Նահանգներում թերթի ինքագրասպեր է եղել, նա գրավոր քազմաթիվ հիշողություններ ունի, մի մասը փրված է, մի մասը՝ ոչ... Մյուսը՝ Պարզև Չուգասյանն է: Նա գրավոր հիշողություններ չունի, քայց մենք քավակյան ձայնագրել ենք նրան... Ես ինքս արդեն 4 փարի առաջ՝ 2005 թ., երբ Մեծ եղեռնին նվիրված CD-ի էի պարրասպում, ես այդ ամբողջ նյութի հավաքողն եմ էղել...»:*

Ոմանք առհասարակ լռել են: Աիդա Թփուզյանի աղաբագարցի հայրը ջարդերից հեփո հայրնվել է Նունասպանում, մերսինցի մայրը՝ Միրիայում, հեփո միմյանց հանդիպել են Լիբանանում և ամուսացել: Աիդան ծնվել է Բեյրութում, որրեղ մեծ թվով փրկվածներ կային և նա, իհարկե, Եղեռնի մասին փեղյակ էր ականափեսներից: Բայց նրա ծնողները *«խոսասպում էին այդ մասին խոսելուց»*, Աիդան փեսել է միայն իր փարերից մեկին և գործնականում չգիփի իր ընփանիքի պարմության այդ փուլի մանրամասները: 1975 թ. նրա ազգականուի Քնարկ Ջանիկյանի գրնվելուց և նրա կյանքի պարմությունն իմանալուց հեփո նրա համար հայրնություն էին այն ապրումները, որ ունենում են թե՛ խոսող-պարմողները, թե՛ լռողները. *«Միայն մի անգամ խոսեցայդ մասին, միայն մի անգամ, պարմեց ու... հավիրյան լռեց: Նրա համար փառասպանք էր այդ մասին խոսելը, չնայած հայրնի էր, որ նա միշտ է փառասպում»:*

«ԶԳԻՏԵՄ...»

Ինչո՞ւ եղավ այդ մեծ ողբերգությունը: Ինչպե՞ս կարող է այն լուծվել: Մեր 35 գրուցակիցները գործնականում չեն պարասխանում այս հարցերին: Կարծում են՝ կարող ենք վավերացնել, որ նրանց պարասխանը հանգում է մի անորոշ ձևակերպման՝ «զգիլեմ»: Շափերը հենց այդպես էլ ասում են՝ «զգիլեմ»: Կան, իհարկե, պարզագույն պարասխաններ՝ «*թուրքերը հայերին չէին սիրում*», «*թուրքն ու հայն իրար չեն սիրում*» (Գյոզալ Նովհաննիսյան); «*Թուրքը միշտ էլ կոպոտելի ս, որ մեր հարստությանը, մեր հողին տիրանա*» (Ալմասր Նարությունյան); «*Որովհետև թուրքը դաժան ս*» (Էլեոնորա Ղազարյան); «*Որովհետև մենք քրիստոնյա ենք, թուրքն ասում էր՝ ձեր կրոնը փոխեք, թուրքի կրոն ընդունեք, մենք էլ մեր կրոնը չէինք ուզում թողնել*», «*թուրքերը չէին ուզում՝ հայերն սպրեն*» (Թամար Պողոսյան); «*Որովհետև թուրքը հային թշնամի է*» (Չափերը) և այլն: Այս անորոշությունն ու պարասխանները շար ուշագրավ են: Դրանք վկայում են առնվազն այն մասին, որ չնայած այսօրվա Նայասարանի սոցիալ-քաղաքական կյանքում ցեղասպանության պարճառների շուրջ փարբեր և հիմնականում աշխարհաքաղաքական բնույթի վարկածներ են քննարկվում, դրանք էականորեն չեն ազդում հասարակ բնակչության մտածողության վրա: Կարող է թվալ, որ ջարդերից փրկվածներին՝ գոնե մեր այսօրվա գրուցակիցներից Չափերին ավելի հասկանալի են թվում պարզ, զգայական պարճառները: Եվ դրա կողքին, թերևս, անըմբռնելի ըմբռնել մերժելու ցանկությունը: Ինչպե՞ս բացատրել, ինչպե՞ս հասկանալ, թե ինչո՞ւ եղավ այն, ինչ ոչ մի փրամաբանության չի ենթարկվում...

Այս հարցերը պարասխաններ են փնտրում: Մի կողմ թողնելով ցեղասպանության շուրջ Նայասարանի այսօրվա պարճա-քաղաքագիտական դիսկուրսը և վերադառնալով մեր գրուցակիցներին՝ հղում անեմ նրանցից մեկի՝ Գարեգին Չուգասյանի մտորումներին: Նա հրաշալի փեղյակ է քաղաքագիտական վերլուծություններին, բայց մեր գրուցի ընթացքում անում էր ավելի շուր փիլիսոփայական ընդհանրացումներ, մասնավորապես՝ «եղեռն» երևույթի իմաստի բացակայության շուրջ. «*Ես, ձիշուն ասած, բազմաթիվ մարդկանց հետ եմ խոսել, փորձել եմ հասկանալ այդ ողբերգությունը... Բայց դա նույնիսկ ողբերգություն չէ, ողբերգությունն իմաստ է ունենում: Երբ մի բան իմաստ չի ունենում, արդեն ողբերգություն չէ, մեկ այլ բան է... Եղեռնի իմաստը փորձել եմ գրկել գրականության մեջ, մարդկանց պարմություններում... Ինքս էլ էկզորտնային սկավառակ եմ սարքել, առեկի ծավալի ու քանակի նյութեր եմ նայել... Չուգասյաններից իմ պատյի եղբոր որդին Ամերիկայում գիրք է գրել, բազմաթիվ հոդվածներ... Նկարագրել է Դեր Զորի ձանապարհը, որով ինքն անցավ մեր հարազատների հետ, մեր ընտանիքի հետ և միայն ինքը փրկվեց... Միայն ինքը մնաց մեր ազգականներից մի ուրիշ երեխայի հետ... Երկու երեխա... Նայրու երկար ժամանակ փուն էր հրավիրում փրկվածներին, գրուցում հետները, ժամերով ձայնագրում: Ինչե՞րի մասին չեն պարունել այդ մարդիկ: Բայց ես այսօր փաստում եմ, որ այդ երևույթի իմաստը չեմ հասկացել... Ես այնքան եմ հասկացել, որ դա պարզ ողբերգություն չէ... Դա շար ավելի բարդ խնդիր է, դա ողբալի... Դրա մեջ իմաստ փորձել փեսնել, իմաստ փեսնել այդ ամեն ինչի մեջ... Չգիլեմ՝ ի՞նչ իմաստ կա... Ի՞նչ իմաստ կարող է լինել դրա մեջ... Ի՞նչի համար, հանուն ի՞նչի արվեց այդ զոհաբերությունը... Դրանից մի քանի փարի առաջ սեղանին էր դրված հայերի ու թուրքերի եղբայրության լուսավոր գաղափարը, և դա զոհաբերվեց... Ինչի՞ն... Ո՞վ է շահել... Ի՞նչ է շահել... Չեմ կարծում, որ միայն մենք ենք կորցրել: Միայն մենք չենք կորցրել... Ես չգիլեմ՝ նրանք ինչպես են գնահատում իրենց կորուստը, բայց նրանց... հիմքերն են կորել... Նրանք իրենց հիմքերն են կորցրել... Թուրքերը, թուրքերը իրենց հիմքերը կորցրել են... Երբ նայում ես Նրանս Դինքի սպանությանը... Կարողում ես թուրքական մամուլը, զգում ես, որ թուրքերն էլ չեն հասկանում, չեն հասկանում... Որովհետև անգամ այն*

մարդը, ով այդքան սիրում էր նրանց, չէ՛, և ուզում էր ինչ-որ բան արած լինել, այդ... Այդ մարդուն էլ են ոչնչացնում... Ես լավագույն թուրքական ելույթները կարդացել եմ, դա էղել է ուղղակի խորը, խորը, ոչ թե զարմանք, այլ, գիտե՛ս, ցնցվածություն... Բհարկե, ես շատ ուրիշ թուրքերի էլ եմ համադիպել, որ շատ հեշտությամբ ասել են, «Դե, գիտե՞ք, իհարկե ողբերգություն էր, բայց էնքան ժողովախառն կա սպանված Թուրքիայում, նա ժողովախառններից մեկն է», - և այնքան հեշտ են ասում: Այդ պահին մտածում ես, ավելի շուր՝ զգում ես, որ, ասենք, նրանց այդ ժողովախառն նույնքան անարժեք է, ինչքան Նրանի Դինքը նրանց համար... Ու շարունակ մտածում եմ, որ ուրեմն նրանք կորցրել են... Շատ բան... Թուրքերն իրենց հենարանը կորցրել են»:

Ավերիս Քեշիշյանն ինչ-որ փրամաբանություն փնտրում է ցեղասպանության խնդրում. «...Որովհետև դա չէր կարող չլինել, որովհետև Օսմանյան Թուրքիան երևի հասկացավ, որ հայերի մնալն առնվազն, առնվազն որպես պետություն վերահաստատվելն էր այնպեղ: Եթե կորոտածը չլինել, այդ կորոտածների շարքը, Թուրքիան կա՛ մ պիտի հաշտվեր հայերի պետականության հետ, կա՛ մ պիտի կորոտեր... Այսօր այդ նույն պրոբլեմը Թուրքիան ունի քրդերի հարցում: Կարծում եմ՝ այսօր ինակը ցույց է տալիս, որ եթե հայերին կորոտելով՝ մյուսներին վախեցնելու, լռեցնելու նախադեպ էր ստեղծվում, ապա նպատակը չիրականացավ»:

Ամփոփելով մեր զրույցների ընթացքում խնդրի լուծման հնարավոր ուղիների հարցի շուրջ հնչած պարասխանները, որոնք այս կամ այն չափով կրկնվում են («...եթե դները բացվեց, կամաց-կամաց, մի քսան, երեսուն, թեկուզ հիսուն փարի հետո նույն բաները սկսելու է թուրքը մեր դեմ» (Գառնիկ Մանուկյան), «Ես գրում եմ, որ եթե էսօր Թուրքիան չի ուզում ճանաչել ցեղասպանությունը, բացառված չէ, որ ինքն էսօր էլ կարող է նույնը անել, այսինքն՝ ինքն իր վրա վարած չէ՛ ինքը քաղաքակրթված է, թե՛ չէ» (Նամիկ Նովսեփյան)): Մեջբերենք Ավերիս Քեշիշյանի ընդհանրացումը. «Թուրքիան ինքն իր քաղաքացիների հանդեպ չի կարողանում բարեխիղճ ու լոյս լինել... Դրա համար անհրաժեշտ բարոյական մակարդակ չկա... Քանի դեռ այդ վերևում կանգնածն բոլոր լծակներն իրենց ձեռքերում պահողները չեն մարդկայնացել, հարցը չի լուծվի: Ժողովուրդները, ես հավատում եմ, գիտե՛ք, շատ հեշտ կարող են բարեկամանալ: Բոլոր ժողովուրդներն իրենց մեջ ունեն այդ աթափ բնազդային պոպեկցիալը, բայց վերնախավերը օգրվում են ժողովրդի գիտակցականության ցածր մակարդակից և անկարողությունից և անում են այն, ինչ որ ուզում են: Օրինակ՝ յոթանասուն փարի թուրք ժողովրդին լցրեցին մեր դեմ, և որոշ արևում արագավ թուրք ժողովուրդը, մի քիչ ավելի շարացան մեր նկատմամբ արելությանը լցվածները... Դա հատուկ, այդ վերնախավի հատուկ քաղաքականությունն էր: Եթե նրանք դա չանեին, էլի թող գեևոցիդը չընդունեին, բայց բարեկամությունը շատ ավելի հեշտ րեղի կունենար: Նայե՞ք, մարդը սխալական է: Սա աքսիոմն է: Ուրեմն կյանքում ներողամտության անհրաժեշտություն է ստեղծվում: Սա շատ կարևոր է, շատ դժվար է, բայց շատ էական է ու շատ անհրաժեշտ, եթե ուզում ենք մարդավարի սպրեյ: Սակայն ներողամտությունը սկսվում է սխալվողի պահվածքից: Սխալվողը պիտի պարտապար լինի սխալը չկրկնելու, սխալը չկրկնելու համար պիտի հասկանա, պիտի ընդունի, որ սխալ է արել: Այդ դեպքում ներողամտությունն իմաստ կունենա: Առանց ասպաշխարանքի ներելն անհիմաստ է: Ո՛րն են երես, ի՛նչը ներես: Ունե՛ն արդյոք նրանք մեր ներողամտության կարիքը: Թե՛ ասպաշխարանքը, թե՛ ներողամտությունը բարձր քաղաքակրթության վկայություն են: Ունե՛ն արդյոք թուրքերն այդ քաղաքակրթական մակարդակը: Ունե՛նք մենք այդ մակարդակը: Զգիտե՛ն»:

«ԱՄԱՍ ՋԱՆ, ԳՐԻ՝ ԳՐԻ՝»

Ալմաստ Նարոությունյանն իր ընտանիքի պատմությունը պարմել է 2009 թ. նոյեմբերի 4-ին, Ուշան գյուղի իր տանը: Պատմությունը գրի է առել Ավերիս Քեչիշյանը: Զրույցին մասնակցել են Ն. Խառապյանը և Ն. Երզնկյանը:

(Պատմությունը տպագրվում է հատվածաբար)

Երբ տիկին Ալմաստին խնդրեցինք պարմել իր և ծնողների կյանքի պատմությունը, շատ ոգևորվեց և անմիջապես ասաց. «Գիրք եմ գրել՝ «Անշուք մանկությունս», դա ծնողների մասին է, մորս մասին է: Մի գիրք էլ նոր եմ տպագրելու, էս մի գիրքս Սպարիսի դաժանությունների մասին է: Ամուսինս աստորված էր է՛հ՝ Նարավային Ղազարյան: Մեն-մենակ, ո՛չ լեզու գիրքեր, ո՛չ բան: Գնացել եմ, տեսել 80 հազար երկրասարդ նստած էղտեղ... Ի՛նչ ողբալի... Բոլորը գրել եմ էս գրքում, մինչև ամսվա վերջը լույս կտեսնի...»:

Տիկին Ալմաստին խնդրեցինք վերադառնալ իր ընտանիքի կենսագրության այն հատվածին, որը թուրքերի հետ է կապված:

- Ես ծնվել եմ 1920 թվի դեկտեմբերի 24-ին: Այ, մի քանի օր հետո կլինեմ 90 տարեկան: Ծնվել եմ ճանապարհին՝ մի մարզում: Մերոնք դեռ նոր փախստական են եղել այստեղ: Նիմի հուշեր եմ գրում իմ կյանքից, 36 տարի ուսուցչուհի եմ աշխատել, հինգ հարյուր մեդալ եմ ստացել: Մասունցիների մեջ եմ աշխատել, որոնք դեռ հարգանք-պատիվ, մեր հին օրենքները գիտեն:

Առաջ մորիցս սկսեմ: Պապս ու տատս ինչքան երեխա են ունեցել, մահացել են, բայց պապս յոթ լեզու է իմացել: Տիգրանակերպում է սովորել: Նրանք սկզբից Մասունում են ապրել՝ Դավորիքում: Տեսել են թուրքերն անընդհատ կզան հարկ կհավաքեն, կթալանեն, կտանեն: Մի գիշեր ամբողջ ընտանիքով՝ չորս եղբայր, իջնում են... Բշերիքի դաշտ է կոչվել, Բաթմանա գետի ափին: Իջնում են էղտեղ մի գյուղում, որ անսպասար տեղ է եղել, սկսում են աշխատել: Կոտորումներից շատ առաջ: Կողքի գյուղի քուրդ բեկը տեսնում է, որ սրանք լավ աշխատավոր են, ասում է. «Եկեք իմ գյուղ, ձեզ հող կտամ, ջուր կտամ, մենակ եկեք, ապրեք իմ գյուղում»: Վերցնում, բերում է Գրասիրա: Պապիս, որ կրթություն է ունեցել, նշանակում են էնտեղի ռես: Պապս ամուսնանում է Տիգրանակերպի տերերի աղջկա հետ: Երեխաները ծնվում էին ու մահանում: Մնացել են երեքը՝ մերս, իր եղբայրը, իր փոքր քույրը: Պապս մտածում է, որ անպայման պետք է դպրոց կառուցի էղտեղ: Մի շենք է մտրավորապես կառուցում՝ դպրոց, և մասնա առաջին դասարան գնում է էղտեղ, ասում է. «Մարխով էինք գրում: Փայտը վառվում էր, մարխով գրում էինք տախտակի վրա»: Էղտեղ մինչև չորրորդ դասարան: Թուրք համարյա չի եղել էղ գյուղում: Քրդեր են եղել, բայց հայերն էլ շատ են եղել: Մի 15-20 տուն հայ են եղել: Կոտորումներից առաջ պապիս բռնել են, բոլոր տղամարդիկ վախից փախել են, պապիս են բռնել: Շատ դժվարություններով մամայիս հորեղբայրը գնում է, բանտի պահակին ոսկի է տալիս, ասում է՝ մի անգամ թող ընտանիքով գան իրենց հորը տեսնեն: Էղ հիշելիս մայրս գիշեր-ցերեկ լաց էր լինում: Մայրս ասում էր, որ 13 տարեկան է եղել, ասում է՝ հայրը չէր կարողանում քայլել: Ասում է՝ հարուկ սարք են սարքել, որ պատկեցնում են, ուրքերը տնկում են, էնքան են ճիպտությունով խփում, մինչև ուրքի տակից արյուն է դուրս գալիս: Էղ 1914 թվին էր: Պապս իր կնոջն ասում է. «Կզնաս, հարստության չես նայի, երեխաներին բոլորին կվերցնես, կզնաս Բասորք, Բասորքի աղան լավն է, հայերին սիրում է, ձեզ կփրկի»: Բասորքը գյուղ է: Բասորքի աղին հույս են բռնում, որովհետև դրանից առաջ՝ 1896 թվին, միօրյա կոտորում էր եղել... Ուրեմն մերոնց բոլոր


փղամարդիկ գնում են Բասորք, Էնփեղ հունական բանկ է եղել, սկսում են բանկից կռվել թուրքերի դեմ: Կռիվը որ վերջանում է, թուրքերը գալիս են Բաթմանա գետը՝ Էդ Գրասիրա գյուղի մոտ նստում են: Էդ Գրասիրայի աղայի ախպեր Միրզան գալիս է մորս փափիկին, շաք գեղեցիկ կին է եղել, փախցնում փանում է: Իրենց պապը գալիս փեսնում է՝ իր կինը փանը չի, գիտի՞ Էդ թուրքերն են փարել, գնում է Բաթմանա Էդ գետի ափին նրանց օրենքը հայտնում է: Բռնում կապում են ծառից, քիթը կտրում են, լեզուն կտրում են, Էդպես այլանդակում, ծառի վրա սպանում են: Երբ թողնում գնում են, մերոնք գնում փեսնում են խեղճին... Անունն Էմիշ է եղել: Ուրեմն Էդ ժամանակվա հիշողությամբ էլ պապս իր կնոջն ասում է՝ կգնաք Բասորք: Տաքս էլ հղի է եղել, օրերի վրա¹: Էն վախար մայրս է եղել, իր եղբայրը, իր փոքրիկ քույրն է եղել. երեք երեխա: Բոլորին հավաքում է, ու պապիս եղբայր Կարապետի հետ գնում են Բասորք: Որ գնում են Բասորք, Էդ իրենց ամբողջ նախիրը փանում են Բասորք, հանձնում են Էդ աղային, ասում են՝ քեզ լինի: Աղան էլ վերջում շաք վաճառություններ է անում: Սկզբից խաբում է, ասում է՝ աչքիս վրա փեղ ունեք: Մերս ասում է. «Նասանք Էնփեղ, Էդ գիշեր մերս ազափվեց, Էդ քրոյի կանայք չթողեցին իմանայինք՝ փղա է, աղջիկ է, մորս շորի մեջ կենդանի-կենդանի փաթաթին, փարան դուրս, գարգառի քարի մեջ կենդանի-կենդանի թաղեցին»: Մամաս գիշեր-ցերեկ լաց էր լինում, մամաս է եղել պարճառը, որ ես գիրք եմ գրել: Ասում էր «Ալմասպ ջան, գրի՛, գրի՛»: Իրս փապը խնդրել է իրան, որ գրի: Ասում էր «Տաքի, ես ո՞նց կարող եմ գրել, հլը չորորդ դասարանում եմ»: Նիմի մերս ինձ էր խնդրում: Մի օր էլ Էդ Բասորքում փապս մորս ասում է. «Նայկանուշ, լուսադեմին Պայծառին կշալակեմ, կգնանք»: Կոտորումը վերջացել էր: Լսել է, որ իմ քեռիներից մեկը կա Էնփեղ՝ Տապի գյուղում, Էնփեղ է ուզում գնա:

Ուրեմն լուսադեմին գրկում է Պայծառին, մամաս ու ախպերն էլ քայլելով գնում են: Մի ամիս, որ Էդ փանը ապրել են, Էդ փան շունը ծանոթացել է նրանց հետ ու գնում է նրանց հետևից: Ինչ անում են՝ հետ չի դառնում: Ահագին ճանապարհ են գնում, արդեն լույս է: Մի հաք քանդված վանք է եղել ճանապարհին, փապս ասում է. «Նայկանուշ, նաքի Պայծառի մոտ, ես մի ծուկ աղոթք անեմ, նոր գնանք»: Էդ ընթացքում քուրդը արթնանում է, փեսնում է՝ չկան: Ելնում, հրացանը վերցնում ու վազում է: Ծունը զգում է՝ մարդ է գալիս, հաչում է: Էդ շան հաչոցի վրա գնում, Էդ խեղճ փապիս աղոթքի փեղը խփում սպանում է: Սպանում է (լացակումած ձայնով): Մամաս բոլորը իրա աչքով փեսել է: Ասում է՝ «Պայծառին շալակեց, ինձ գցեց իր առաջ»: Քուրդը սրանց բերում է փուն: Մի հարս է ունեցել, Տավն է եղել անունը, շաք բարի հարս է եղել, կանչում է նրան, ասում է. «Լաց մի էղի, Նուշե ջան», - Նայկանուշ է անունը, իրանք Նուշե են ասել: - Նուշե ջան, լաց մի էղիր, ես քեզ վաղը կփանեմ, որպեղ քո մերն է, կարող է՝ կենդանի է»: Մամաս ասում է՝ մինչև լույս չկարողացա քնեմ: Ասում է՝ առավոտ Տավեն իրա կեսրարին ասեց. «Պայծառ թող մնա սրեղ, ես Նուշեի հետ գնամ մի քիչ բանջար հանեմ»: Վերջը գնում են փեսնում՝ Էդ վայրի շներ փափիկիս գզել են: Աղիները մի կողմ, թոքերը մի կողմ: Մամայիս ուշքը գնում է (փիկին Ալմասպը շարունակում է լացակումած ձայնով): Խեղճ Տավեն ուշքի է բերում մի կերպ, փորում են, թաղում: Մամաս ասում է. «Մի սենց փոքր քարի վրա խաչ սարքեցի, փարա դրեցի մորս գլխավերև, մի քիչ բանջար Տավեն հանեց, կիսեց, կեսը ինձ, կեսը՝ իրեն, եկանք փուն»: Ասում է. «Եկանք փուն, դե ո՞նց կլինեմ, լաց եմ լինում, Տավեն ասում է՝ լաց մի էղի, կիմանա իմ կեսրար, քեզ կծեծի»: Առավոտ վերցնում է մամայիս ու Պայծառին, փանում է իրանց գետի ափը՝ շոր վվանալու: Տանում է գետի ափ... Թուրք հրամանարարը, կոտորումը վերջացել է, հավաքում է, ով մնացել է հայերից, երկու հարյուր մարդ, փանում է մամայիս ու իրա քրոջը: Տավեն Էնքան է խնդրում, ասում է՝ Էս մեր հարսն է: Բայց փանում է: Տանում է ձորի ափին երկու հարյուր հայի՝ բոլորին սպանում է: Մամաս ասում է. «Պայծառը շալակս է, ես վախից դողացի, ընկա, Պայծառը շալակիցս թռավ գնաց Էդ սպանվածների մեջ»: Ուրեմն որ կոտորում են, բոլորին սպանում են, իրանք գնում են: Ասում է՝ արդեն մութ էր: Մերս ուրբից վիրավոր է, բայց չգիտի, որ Պայծառը կենդանի է: Ասում է՝ լույսը որ բացվեց, մեկ էլ Պայծառը ելնում է՝ «քույրիկ, քույրիկ, ո՞ր ես»: Ասում է՝ կանչեցի, փեսա մի ծանր վիրավոր կին իմ կողքին. «Բալա ջան, քո քույրիկին ասա, թող գա սրեղ, ես ասեմ, դեղաբույս ցույց փամ, թող բերի, դնենք մեր վերքերին»: Ասում է՝ Պայծառը հինգ փարեկան է եղել, գնացել է, հավաքել է, բերել, ծամել դրել: Մամաս ասում է՝ «քառասուն օր մնացինք»: Ասում եմ՝ «մա, ի՞նչ գիտես՝ քառասուն», ասում է՝ «14-ին մեզ կոտորեցին, ցորենն արդեն հասել էր, մոտավորապես եմ ասում, հունիս ամսին էր»: Ասում է՝ «Էդ դիակները

1 Այսինքն՝ ծննդաբերելու ժամանակը մոտեցել էր:

արևից ուռել էին, ոնց որ հրացան պայթեր՝ կպայթեին»: Ասում է՝ բարակ ջուր էր գալիս, Պայծառին ասեցի՝ արի անցնենք էն կողմ, էդ թփուրների մեջ մնանք: Ասում է՝ էդ կիներ իր շալակում փոխինդ է ունեցել, մեծ կին է եղել: Բանջար, սինձ քաղում, ուրում էինք: Ահավոր բան էր պարսում: Ասում է՝ «գնացինք առուն անցանք, առավոտը տեսանք՝ քրդի կանայք եկել են, մանգաղներով ցորեն են քաղում, -ասում է,- կեսօրին եկան էդպեղ հաց կերան. հացի փշուրներ, ժածիկի, պանրի մնացորդներ... Պայծառը վազեվազ գնաց հավաքեց»:

Ասում է՝ հաջորդ օրը կգա մի ուրիշ թուրք, հեռվից կտեսնի՝ մի երեխա է գերափին: Ասում է՝ «սպեղ հայ կա»: Իրա ջոկարին ասում է՝ «գեփի ափով գնացեք»: Պայծառը, որ ձիու ամբակների ձեն լսում է, գալիս փաթաթվում է. «Քուրի՛կ, կգամ մեզ էլ կսպանեն»: Ասում է՝ «էդ հրամանարարը երկու թուրք ուղարկեց, եկան մեզի գրան,-ասում է,- եղել ենք ուրվական, ոջիլները սենց թափվում էին, կեղտոտ... Ասում է՝ փարան մեզի էդ թուրք հրամանարարի մոտ: Նայեց մեզ, ասեց. «Մրանց Աստվածը մեծ է, ձեռք չտաք սրանց»: Թուրքերեն խոսացին, ես չեմ հասկանում: Ասում է՝ ես քրդերեն խոսացի, ասեցի. «Մենք էս սպանվածների մեջ ենք եղել»: Ասում է՝ ինձ դրեց իրա ձիու վրա, Պայծառին իրա առաջ, եղբայրս էլ իրա հետևից ուրքով է գալիս, բերեց էդ թուրք աղայի փուն: Էն նույն քրդի փուն: Ասում է՝ էդ թուրք աղան, որ տեսավ, չճանաչեց մեզ: Մենք եղել ենք ուրվական՝ սով, կեղտ: Ասեց. «Էդ երկուսին կպահես աչքի լույսի նման, եթե մի մազ պակասեց սրանցից, կգամ քո փունը կվառեն: Ինքը ասում ա, որ իրանց հարազատներ Տապի գյուղն են, եթե մի քիչ առողջանան, կրանեք կհանձնեք հարազատներին»: Ու իրանք թողնում գնում են: Իսկ հորեղբայր Կարապետին, այ էդ թուրք աղան, երկու հարյուր հայ երիտասարդի հետ, ասում է՝ գնացեք, արքի մեջ ապահով է, մինչև թուրքերը անցնեն: Բայց րեղը հետո հայտնում է, գնում են բոլորին սպանում են:



«Զառասուն Օր Դիակների Մեջ»

Մամաս ասում է՝ Տավեն առավոտը մեզի լողացրեց, մաքրեց էդ ոջիլներից, իրա շորերից բերեց մեզի: Շատ բարի կին է եղել: Մի շաբաթ մեզի լավ կերակրում էր գաղտնի: Մի օր էլ իրա կեսրարին ասեց. «Չտանե՛մ սրանց հանձնեմ Տապի, զահլես գնացել ա դրանց համար»: Ասեց. «Տենց բան անես՝ շալ լավ կանես, մեզանից հեռացրո՛ւ»: Առավոտը Տավեն կելնի, Պայծառին կշալակենք կգնանք: Մերս ասում է, որ տեսա հորեղբորս կին, իրա հորեղբոր կինն ու հորեղբոր փղեն մի ընկերություն են եղել, բոլորին կտորեղ են, էդ երկուսը ազգաբազակ են: Ասում է, որ տեսա մամիին, փաթաթվեցի, հո չի՛ գոռում...

Էնպեղ մի պարսություն էլ կա: Իրանց ազգից մի հորեղբոր փղա, մի հորեղբոր աղջիկ սիրահարվում են իրար վրա ու ամեն օր հանդիպում են գոմում: Մի օր էլ մեկը գնում տեսնում է, ասում է՝ սափանա կա մեր գյուղում: Գալիս են, տեսնում են՝ Մուրադն ու Մարոն են: Տերտեր են կանչում, տերտերը հրաժարվում է պսակելուց: Ասում է՝ սրանք հորեղբոր երեխաներ են, հրաժարվում է: Սրանք գնում են, նախքան կոտորում, գնում են Տապի, քրդանում են, էնպեղ ամուսնանում են, բայց երեխա չեն ունենում: Նիմի էս մերոնք գնացել են նրանց մոտ: Մուրադը հոգով հայ է մնացել, բայց կիներ թուրք է: Մամաս ասում է՝ մերոնք գոմում էին մնում: Ասում է՝ մի օր էլ մուրի մեջ Պայծառին գրկած, Պայծառը սառել սառույց է եղել, ասեցի. «Մամի, Պայծառը սառը սառն է»:

Մամին գլխի ընկավ, որ մեռել է, բայց ինձ չասեց: Առավուրդ եկան Պայծառին փարան թաղեցին: Իրա ախպերն էլ, մորիցս փոքր է եղել՝ փասը փարեկան, ասել է. «Նայկանուշ, գնա էսքան մեղր բեր ուրեմ» (ճկույթի վրա ցույց է փալիս մեղրի չափը): Մամաս ասում է՝ գիտեի, որ քրդի երեխեք շնեթին մեր վրա են թողնում: Ասում է՝ չզնացի, ահագին մնացի դուրսը, էկա ասեցի՝ չկա, Մերոք ջան: Էդ օր էլ ախպերը մեռավ սովից: Իրան էլ փարան Պայծառի մոտ թաղեցին:

Մամաս ասում է՝ մեզնից վերև մի փոքրիկ քրդի գյուղ կար: Ասում է՝ էդ քուրդը եկավ, էդ Մարոն, անասաված Մարոն ինձ ցույց փվեց, որ փանի իրա կին: Ասում է՝ ինձի դրեցին իրա ձիու վրա, փարավ ինձի իրանց փուն: Նինգ կնիկ է ունեցել: Էդ օր էլ քնացնում են էդ քրդի մոտ: Քուրդը խղճում է մորս, գիշերը նախ մամաս ելնում փախնում է, ասում է՝ փախել, փախել, նորից ետ է եկել էդ քրդի փուն: Քրդի կնանիք լավ կջարդեն, բայց քրդի մեղքը կգա, մորս կղնի ձիու վրա, կբերի կհանձնի Տապիի իր հարազատներին:

Մերոնք որոշում են, որ գնան Մուշ, ռուս բանակն էնտեղ է, գնան, հասնեն ռուս բանակին: Գիշերը ելան, թե պիտի գնանք Նայասփան: Էդտեղ՝ Տապիում մի կին էլ է եղել, Մուրադ անունով մի փղա է ունեցել՝ ութ փարեկան: Մերս ասում է. «Ալմասպ, էնքան գեղեցիկ երեխա էր»: Մերը մահացել է, մերոնք ասել են՝ մեր հետ փանենք: Ճանապարհին մաման ու էդ Մուրադ չեն կարողացել քայլել: Մերս ասում է. «Էս դարպասի մոտ մեզ նստացրեք»: Ոչ գիտեն՝ հայի գյուղ է, ոչ գիտեն՝ թուրքի, ասում է՝ դուք գնացեք: Մերս ասում է. «Մալոներս կպել էր քարերին, այրուն, չէի կարող քայլել: Նույն էլ էդ խեղճ Մուրադին: Նտրանք էդ դարպասի մոտ: Լույսը որ բացվավ, փեսանք՝ մի հսկա թուրք կնիկ դուռը բացեց: «Էս դուք հայ ե՞ք, փրկվել ե՞ք: Որտե՞ր ղից եք եկել»: Մեզ ներս փարավ, թուրքերեն չգիտեինք, քրդերեն ասեցի՝ բոլորին սպանել են, քայլելով հասել ենք ստեղ, սա էլ իմ եղբայրն է»: Ասում է. «Ես երեխա չունեմ, ձեզի որ փանեմ մզկիթ, անուններդ փոխեմ ու ինձ սարքեմ փղա ու աղջիկ, կուզե՞ք»: Ասեցի՝ կուզենք: Մի ամիս մեզի լավ պահում էր, լողացնում էր: Ես էլ ելնում էի, սաղ գործերը անում էի, աման-չաման լվանում էի, ավլում էի: Մի օր էլ լուսադեմին մի մեծ փետր ձեռք նե՛նց է խփում մեզի քնած տեղ... Լսել է, որ Անդրանիկ փաշան իր կամավորներով գալիս է: Մաղ գյուղ քոչել փախել են, իրան իմաց չեն փվել, նոր է իմացել: Մեզի բերեց Մուրադ գետի ափ: Ում որ փախցրել էին՝ սիրուն հարսներ, բերել էին լցրել էդ գետը: Ասում է՝ «Ես ասեցի՝ անա ջան, մենք ոչ Անդրանիկ ենք ճանաչում, մենք չենք փեսել, մենք քեզի չենք դավաճանել, դու մեզ մի գցի գետը»: Ասում է՝ «սկզբից Մուրադին գցեց, Մուրադը փենց ճվալով էդ Բաթմանա գետի միջով գնում էր...Ընկա իրա ոտքերը, համբուրի, ափ՝ անա ջան, մի սպանի ինձի, ես քեզ լավ աղջիկ էի»: Ասում է՝ «բրթեց ինձ էլ գցեց: Ես մի քիչ լողալ եմ իմացել, բայց ոտքս որ դնում էի՝ ընկնում էի նորից»: Վերջը մի կերպ մերս դուրս է գալիս ափ, ուշաթափ ընկնում է: Անդրանիկ փաշան մարդիկ է ուղարկում, որ գնան սարուզեն գետի ափ: Կիջնեն մորս կգրնեն: Էդ մասը ինձ քեռիս է պատմել՝ մորս հորեղբոր փղեն, գյուղի անուն չգիտի, բայց թուրքի գյուղ է եղել՝ Բաթմանա Մուրադ գետի ափին: Մամաս ասում է՝ «բերեցին ինձ մինչև Մուշ, փարան հանձնեցին ամերիկյան մանկապարտ»: Դե մերս էդքան բան փեսել է, ասում է՝ գիշեր-ցերեկ լաց էի լինում: Դաստիարակչուհին ասում էր. «Նայկանուշ ջան, ինչի՞ լաց կեղնես, մենք կզնանք մինչև Նայասփան, քեզի կփանենք մեր հետ»: Մերս մնում է ըտեղ: Մերոնք էլ իրանց ճանապարհով են գալիս հասնում Մուշ, դրանք էլ բերում են իմ երկու քեռիներին՝ իմ մամայիս հորեղբոր փղաներին, էդ նույն մանկապարտ: Բերում են էդ մանկապարտ, փեսնում են՝ մերս ըտեղ է: Մերս մեծ է եղել՝ 13 փարեկան, իսկ դրանք փոքր են եղել: Ասում է՝ մի ամիս հետո էկան, էդ երեխաներին վերցրին, որ ոտքով պիտի գնան Նայասփան: Ինչ արել է մերս, իրան չեն վերցրել իրա հորեղբայրները: Չեն վերցրել, որովհետև մի անգամ բերել են ոտքով, չի կարողացել քայլի, նստացրել էին, չէ՛, օտար գյուղում, մի դարբասի մոտ: Դրա համար չեն վերցրել: Ասում է՝ էնքան լաց եղավ, մայրապետս եկավ. «Դու լաց մի եղիր, մենք սայլով կզնանք, իրանք ոտքով կզնան: Մենք քեզ կփանենք մինչև Նայասփան»: Վերջը ուրեմն մամաս մնում է մանկապարտ, իրանց հետո սայլերով բերում են: Գալիս են սկզբից Լենինական, Լենինականից՝ Երևան, Երևանից կբերեն Աշտարակի մանկապարտ:

Նիմա հորս մասին: Չորս քույր են եղել, երեք եղբայր: Քույրերը ամուսնացած են եղել: Բոլորին սպանել են ընդամենըներով, ոչ

մեկը չի ազարվել: Քույրերից ոչ մեկը չի ազարվել: Ո՛չ քույրեր, ո՛չ էլ իրենց զավակներ: Նայրս Երկիր¹ ամուսնացած է եղել, մի աղջիկ է ունեցել: Կոտորումի ժամանակ կնոջը, աղջկան, ծնողներին բոլորին կոտորել են: Եթե մի բարի թուրք չլիներ, հորս էլ ջրաղացում կսպանեին: Ներս ջրաղացական է եղել...Աշեն... Ալոդինա, Տիգրանակերտի մոտ թուրքական գյուղ: «Աշեն» ջրաղաց է նշանակում, Ալոդինը էդ ջրաղացի տերն էր: Ուրեմն ըստեղ աշխատում էր մի բարի թուրք: Նախ իրա հերը՝ հորս հերը, իրանց ամբողջ ոսկիները լցնում է կճուճի մեջ, երեխաներին ամեն մեկին հիսուն-հիսուն ոսկի է տալիս, կճուճը փորում է բխերիկի սալի տակ, ասում է. «Ով կենդանի մնա, թող գա տեր կանգնի»: Մի ախպերն էլ էլի թուրքական գյուղում ջրաղացական է եղել, երեք տղա է ունեցել: Նորս փոքր ախպերն ազարվել է, բայց հայրս մինչև վերջ չի իմացել:

Ներս ջրաղացում է եղել, մի բարի թուրք գալիս ասում է. «Ճար ունես՝ փախի, հիմա կգան քեզ կսպանեն»: Ներս անմիջապես, ըստեղ փոքր ծառեր են եղել, փախնում է դրանց մեջ: Ասում է՝ «հարյուր մեկը չէի գնացել՝ ձիավորներ կանգնեցին ջրաղացի մոտ»: Ներս էդպես կփախնի, կգա մինչև Ասի գյուղ: Ծեկո տան քրդերը շար լավ քուրդ են եղել, բազմաթիվ հայ են փրկել: Կգա դրանց տուն, կտեսնի ահագին հայեր կան էդտեղ: Ներս կգա էդ Ասի գյուղ: Էդ քրդի կինը մեծ կին է եղել, ասում է՝ գլգլի հաց էր թխում սաջի վրա: Ասում է՝ նույն ձևի մեր հայերին թխում, տալիս էր: Էնքան լավ կին էր: Լավ մարդիկ են եղել: Ըստեղ եղել է Նազո քաղաքից Պողոս անունով... Էնքան քաջ տղա է եղել, թուրքը չի կարողացել դրան հաղթի: Թուրքը դրա գլուխ գնահատել է 100 ոսկի: Ով որ սպանի Պողոսին, գլուխը բերի, 100 ոսկի կտանա: Ուրեմն տան մեծ տղեն մեռել է, հարսը սիրահարվել է էդ հայի՝ Պողոսի վրա: Կառաջարկի, էդ հազվեցին կմերժի: Ասում է՝ մեր օրենքում չկա՝ էս բարի մարդկանց դավաճանեն: Բայց վերջը էդ հարսը կսպանա, կկտրա դրա գլուխ: Էն վախար թոնիր խառնելու շիջ չի եղել, թիակի պոչի նման փայտեր են եղել: Ասում է՝ «կարմիր բաղդադեն փաթաթել էր էդ բանին, հերս էր պարսում... Նենց ըստեղ է եղել, միասին են եղել էդ բարի տունը: Ասում է՝ զարկել էր անթրոցի վրա Պողոսի գլուխ, իրա ձիու վիզը կարմիր բաղդադեն կապել էր, նստել էր ձիուն, կտաներ Մուշ հանձներ, որ հարյուր ոսկի ստանար էդ կինը» :

Ներս ասում է՝ դրանից հետո Չաուշ ու Նուր քրդեր են եղել, ամեն հայից մի ոսկի առել են, որ բերեն մինչև Մուշ: Ներս էլ իրանց հետ ա եղել: Ամեն հայից մի ոսկի են ուզել, որ պիտի հասցնեն Մուշ: Կբերեն կհասցնեն Մուշ, բայց էդ գիշեր էնքան ձյուն կգա, որ նրանք չեն կարողացել վերադառնալ Ասի: Ներս ասում է՝ փախած հայեր Նուրոյին սպանեցին, կուզեին էդ Չաուշին էլ սպանել, բայց մեր գյուղի տեր Մանուկ կհասնի, կասի. «Ձեր տուն քանդվի, ձեզ հաց են տվել, ամիսներով պահել են, ձեզի բերել են»: Կասի. «Մեզնից ոսկի առան, հետո բերեցին»... Դե բա հայերի մեջ էլ վար կա: Ամբողջ երկու հարյուր հայ էր շեկո տան քրդերը փրկել, բերել են մինչև Մուշ: Մուշ հիվանդություն է եղել: Ով մեռել՝ մեռել, ով որ կենդանի է մնացել, հասել է մինչև Ուջան: Անդրանիկն է բերել Մուշից: Նայրս Անդրանիկի կամավոր բանակ է մտնում: Ուրեմն Մուշից էկան, իրանց հետ էլ բերեցին Չաուշին, հասցրին սրտը: Չաուշ ապրավ սրտը: Ինքը որ էդ ժամանակ փախցրեց էկավ սրտը, ինքը հույս ուներ, որ պիտի հետ գնար: Նենց եղավ, որ կարգերը փոխվան, էս սահման-մահման փակվան, էլ ինքը հետ չգնաց: Ուջանցիները լավ էլ նայում, լավ էլ պահում էին իրան, վերջում էլ իրա թաղումը իրա արարողությունը արին: 1985 թվականին էր կարծեմ, որ մահացավ:

Ինքը որ էդ ժամանակ փախցրեց էկավ սրտը, հերս Անդրանիկի բանակի հետ կապված, բոլորով, էդ բոլոր փախստականներով, Չաուշն էլ իրանց հետ: Ուր Անդրանիկ, ըդրանք էլ՝ հետը: Ներս գորքի մեջն էր, փախստական՝ կին, էրեխա՝ գորքի հետևից: Անդրանիկն է բերել էդ մարդկանց Ուջան գյուղ: Էստեղ՝ Ուջան, թուրքեր են ապրել: Որ կլսեն՝ Անդրանիկ փաշան եկել է, վախից սաղ կգնան Մեյմանդար:

Նայրս կգա, կիմանա, որ ռես Նարությունի աղջիկ մանկատուն ա եղել: Դե Տիգրանակերտից պապիս գիտեր: Կգա կիմանա, որ Աշտարակի մանկատունն ա: Կգնա էդտեղ, կտեսնի մորս, կուզի: Մայրապետը ասում ա. «Ամոթ չի՝ քեզի, դու իրան հոր տեղ

1 Երկիր՝ Կոտայքի ղեկավար հայրենիքում:

կգաս, մենք չենք քա թեզի»։ Ներս քսան քարով մեծ էր մորիցս։ Ներս հաջորդ օրը կգնա, ասում ա. «Կտաք՝ քվեք, չեք քա՝ կգամ համ աղջկան կփախցնեմ, համ ամբողջ մանկատուն կթալանեմ»։ Ուրեմն հերս մորս մանկատնից կբերի մի աշտարակցու քուն։ Էդ աշտարակցու քուն, քե՛ս, Նարութի ընքանիք, Մինասի ընքանիք և իմ հերս ու մեր մնացել են Էդքեղ քասն ամիս։ Էդքեղ մամաս կողիանա ինձանով։ Օրերի վրա կլինի։ Ուրեմն հերս մի քաս-քասնհինգ մեծ մարդկանց հերս կգան Էսքեղ, Ուջան, քուն կբռնեն իրանց։ Մարդ չի եղել, թուրքեր գնացել են, հայերն էլ դեռ չեն եկել։ Ներս՝ մի հին խալի շալակած, մորս հերս ուքթով Աշտարակից կգան Ուջան, ճանապարհին՝ Ագարակում, մորս ցավերը կբռնի։ Ներս կքանի մի փլաքակված մարագ, ցուրք, դե դեկքեմբեր է, և Էդքեղ ես կծնվեմ։ Երկու ժամ հերս մամաս իրա շորերից կհանի, ինձի կփաթաթի, երկու ժամ հերս կգան Էս ցյուղ։ Առաջին ցավակը ես եմ եղել։ Ես ծնվել եմ դեկքեմբերի 24-ին, 1920 թիվն էր։

Ներս Երկիր իրա մոր հերս ուքթով մի ամիս եկել է Երուսաղեմ, Էսքեղ վարդապետներ իրան օծել են մուխսի, իրա անունը Միմոն է եղել։ Ես դեկքեմբերի 24-ին եմ ծնվել, բայց հերս քեսել է, որ վեց օր է մնացել մինչև 1921 թիվ, Էդ վախար դե ոչ ծննդական է եղել, ոչ մի բան, ավերարանի երև մեր բոլոր երեխաների ծնունդ գրել է։ Ինձ էլ գրել է հունվարի 6-ին։

Ես յոթը ավարքել եմ՝ գերագանց, գնացել եմ Էջմիածնի մանկավարժական ուսումնարան, ընդունվել եմ, սովորել եմ։ Էդ օր, որ դիպլոմս պիտի սքանայի, ճաշարանում ճաշում էինք աղջիկներով, սաղ իրանց ճաշեր թողին, վազին։ Եկանք հանրակացարան, ռադիոն հայարարեց, որ Գերմանիան հարձակվել է մեր վրա։ Այ, Էդ օրը ես դիպլոմ եմ սքացել։ Ինձ գոռով ուղարկեցին Թալինի ռայոն։ Ամբողջ երիքասարդներ վերցրել էին բանակ։ Որ քեսնեիր Էդ գրոռնի պունկքը՝, որ հիշում եմ... Դուրս եկա, քեսնեմ՝ մեր ցյուղից Էս Տիկոյի հերը, Մուշեղը, Ագարը ուքթով, չարեխներով՝ բերել էին մինչև Էջմիածին, բանակ էին վերցրել։ Իրանց ուքթերը սաղ վերք էին եղել, այ սենց պառկել էին հանրակացարանի պարի քակ... Ողբի երկիր էր։

Նիմի որ աշխարում էի, ամեն անգամ որ ցալիս էի քուն, մերս. «Ալմասք ջան, մեր մասին գրի, մեր կուրորումը գրի»։ Ասեցի՝ գնամ քեռուս մոք։ Տասնյակ քրդերի, թուրքերի անուններ է քվել, ամեն մեկի հերս մի պարմություն է կապված։ Ես Էդ գիրքը որ գրեցի, չորս քեքր գրել էի, ասեցի՝ քանեմ՝ քեռիս կարդա, քեսնի։ Տարա, քեռիս կարդաց, սենց արեց. «Շան ծիծ կերած, իմ ասած թուրքերի, քրդերի մի մասն ես միայն գրել»։ Ասեցի. «Այ քեռի, բա ես գիտե՛ս ինչ պայմաններում էի գրում, աշխարում էի»։ Դասամիջոցին գրում էի, դասի ժամանակ որ գրավոր կքայի աշակերտներին, կգրեի, մի ահավոր վիճակի մեջ էի։ Բայց որ բերեցի, մերս կարդաց, հոնգուր-հոնգուր լաց էր լինում և իրա ձեռով մարիքով գրել էր. «Ալմասք ջան, Էս որ գրել ես, Էդ բոլոր իմ ցլիով անցել է»։ Տենց Էսքան գրել էր։ Էդ էլ քպել եմ քվել, մամայիս նկարն էլ է գրքի վրա։ Մերս գիշեր-ցերեկ լաց էր լինում։ Դե մորը քենց սպանել են, հորը, ամբողջ ընքանիքը։ Ինչքան հարուստ են եղել, ինչքան բան են ունեցել, բոլորն Էդ քրդեր ու թուրքեր քարել են...

ՆԽ - Նիմա մի բան էլ հարցնեմ, քիկին Ալմասք, քո կարծիքով Էդ կուրորումը ինչի՞ համար եղավ։

ԱՄ - Թուրքը միշտ էլ կուրորել է, որ քիրանա։ Ամբողջ հայերի հարսքության քիրացավ։

ՆԽ - Կուրորել է, որ հայերի հարսքությանը քիրանա՞ :

ԱՄ - Նողին քիրացավ, հարսքության քիրացավ։ Իմ հոր մի ախար 18 քարեկան է եղել, Փարման է եղել անունը։ Էն էլ կփախնի, կազարվի, հերս չի իմացել։ Մեր հարևան Զավենը սքեղ կար, իրա հոր հերս։ Իրա հերը եկավ մեր քուն, պարմեց։

1 Յոթերորդ դասարանը։

2 Նորակոչիկների հավաքակայանը։

3 Նում կաշվից քնայնագործ ագանելիք։

Ես յոթերորդ դասարան էի: Նորս պարմեց, ասեց, որ Փարմանն էլ փական կկարեր ջորիների համար: Ասեց՝ մի օր Փարմանն ինձ ասեց. «Քեռի Կարապետ, մեր ոսկիների րեդ ես գիտեմ, որ էս մեր աղային ասենք, գնանք հանենք, կեսը՝ իրան, կեսն էլ՝ ինձ ու քեզ»: Կսա՝ «Վաղը կասեմ իրան»: Ասում է՝ հենց ասեցի, էլ չթողեց, որ Փարմանն աշխատեր, առավ Փարմանին ու գնաց: Ոսկիները հանում է, թաք երկու ոսկի է փայխ իմ հորեղբոր, մի ուրիշ թուրքի ասում է՝ գնա սպանի, էդ երկու ոսկին էլ առ քեզի: Նրան էլ ըզրեղ էդ երկու ոսկու համար են սպանում:

Թուրքը մեր հողին փիրացավ, հարստության փիրացավ: Տես, քեզ մի ուրիշ պարմություն պարմեմ: Էդտեղ որ ուսուցչուհի էի, Սաթիկ կար, շար խելացի կին էր: Մի օր պարմեց՝ արդեն կոտորում սկսել էին, կսա՝ իմ մեր շալակեց մեր յուղ, փկերի մեջ է եղել, փարավ որ գցի գետի մեջ, յանի կոտորում պրծնի՝ գնան հանեն: Ասում է՝ իմ ախպերների հետ իմ մեր գնացել է, իմ հեր ու հորեղբայր հիվանդ պառկած են գետնի վրա, ես կանգնած եմ, օջախն էլ ուժեղ կվառվի: Տեսա՝ թուրքական մի խումբ ներս մտավ. «Ելի ոսկիներ փոր»: Իմ հեր ասեց. «Մենք ոսկի չունենք, փավար, ոչխար շար ունենք, բոլորը քշեք փարեք»: «Չէ, վեր կաց ոսկիներդ փոր, թե չէ ախպորդ կողքդ կսպանեն»: Ուրեմն սպանում են հորեղբորը, կսա՝ իմ հեր ավելի կարաղեց, ասեց. «Ես ոսկի չունեմ, ինձ էլ սպանեք իմ ախպոր հետ»: Կսա՝ «Երկուսով մի րեդաշորի մեջ են պառկած, հիվանդ են: Խփեցին, հորս էլ սպանեցին: Արյունը եկավ լցվավ օջախ, օջախը թշշում էր էդ արյունից: Մերս եկավ որ րեսավ, հավաքեց մեզ՝ իմ ախպերներին ու ինձ, որ փաներ...»: Մի ախպերը փոքր է եղել՝ ութ փարեկան: Իշխան էր անունը: Նարևան քորդ եկավ ասեց. «Էս փոքր փոխն՝ Իշխանին մի փար, Մարիամ, թող, էս չի կարող ձեզ հետ փախնի, երբ կոտորում պրծավ, կգաս րեր կկանգնես»: Կսե էդ Իշխանին թողեց էդ քորդի մոր: Ներս էդ Սաթիկի մի ախորը համալսարանում սովորելուց են սպանել, մեկին էլ կուզեին բռնել, փախավ Պարսկաստան: Էդ արդեն Սփայինի ժամանակ էր: Կերթա Պարսկաստան, շար ծարավ կլինի, կգնա մի դարպասի մոր, դուռը կծեծի: Մի հարս հարս կգա, կասի. «Քույրիկ ջան, շար ծարավ եմ, մի բաժակ ջուր բեր»: Կգնա իրա մարդին կասի. «Մի մարդ է եկել մեր փուն, ջուր է ուզում, մի խնձոր ոնց որ կիսես՝ էնքան նման եք իրար»: Մարդը կելնի ափալ-թափալ, կրեսնի՝ իրա եղբայրն է: Վերջը ինքն ու էդ ախպերը մնացին էդտեղ՝ Պարսկաստան: Իրա ու իրա կնգա նկար ուղարկել է, բայց Սաթիկ իրա մոր ցույց չտվեց: Կսեր՝ պառավ կնիկ է, կելնի մի րեդ կխոսա: Իրա՝ Սաթիկի մարդը աքսորված էր, րենց՝ կսեր, որ ինձ էլ իմ փղեքի հետ կաքսորեն: Սփայինն էլ շար դաժան բաներ արեց:



Ամասրի մայրը՝ Նայկանուշը, Բաթմանա դաշրի Գ-րասիրա գյուղից

ՆԽ - Ձեր գյուղին վնաս փվե՞լ է Սփալինը:

ԱՆ - Էրեխես մի ամսական էր՝ մարդիս բռնեցին: Գերի է եղել, 25 փարի փվին, բայց ներում եղավ, ինքը ութ փարուց եկավ: Մի փասը ամիս էի ապրել հեփը, իմ էրեխեն մի ամսական էր: Տղես գնաց առաջին դասարան, ինքը նոր եկավ:

Մի հասր էլ գիրք եմ փպել՝ «Փշալարերի ողբը», Սփալինի դաժանությունների մասին: Գնացել եմ, հասել եմ Ջիսկասկան՝ ութանասուն հազար երիփասարդ փղաներ էդտեղ բռնված: Դաժան, դաժան է եղել մեր ժողովրդի կյանքը:

«ՊԱՊԱՍ ՏԱՆԸ ՄԵՋ ՊԱՏՄՈՒՄ ԷՐ»

Ալբերտ Մամիկոնյանն իր ընկերակիցի պատմությունը պատմել է 2009 թ. նոյեմբերի 2-ին, Երևան քաղաքում՝ իր բնակարանում: Պատմությունը գրանցել է Լ. Խառապյանը: Զրույցին ներկա են եղել Ս. Նարությունյանը և Ն. Սահակյանը:

(Նախկին գրույցից)

Ալբերտ Մամիկոնյանն իր պատմությունն սկսում է լուսանկարների ցուցադրությամբ: Առաջին լուսանկարում պապն է, քապրը, մանկահասակ հայրը և հորեղբոր որդին:

Պապայիս անունը՝ իսկական անունը, Մարկոս է եղել, հետո փոխել է: Տաքիս անունը Սրբուհի էր, իսկ պապայիս հորոգբոր փոխյի անունը՝ Խաչիկ: Բոլորը Ջամջյաններ են: Այս լուսանկարները դեռ Արդվինում են արված, նրանք ապրել են Արդվինի մոտ՝ Արդանուջ քաղաքում: Քաղաք չէր իրականում, բայց գյուղ էլ չէր, գյուղաքաղաք երևի: Պապայիս հորեղբոր փոխյի իրենց ազգանունը Ջամջյանից փոխել է Չամջյանի, որ հեշտ արտաբերվի: Ջամջյանը «ջամ»՝ ապակի բառից է, երևի ապակու հետ գործ են ունեցել, դրա համար Ջամջյան են եղել: Մենք Մամիկոնյան դարձանք Պարսկաստանում: Թուրքիայից գաղթել են, էկել են Բայթուն, Բայթունից՝ Խարկով, հետո Խարկովում գործարան են ունեցել, էղել են Խարկովի մեծահարուստներից: ՆԷՊ -ից հետո, ով հարուստ է էղել, նրան կա՛մ աքսորել են, կա՛մ գնդակահարել են... Սյրայիկի ժամանակները: Դա մտրավորապես 33 թվականի բան է: Խարկով քաղաքում երկու հարյուր մեծ շենք ունեին, մի հարյուր մեծ կանգիտերսկի ունեին: Որպեսզի էղ սյրայիկյան ռեպրեսիայից փախչեն, շար հեշտ է էղել, ընդունել են պարսկական հպարակություն, գնացել են Պարսկաստան: Բոլորը գնացել են Պարսկաստան, իսկ պապաս գնացել է... Պապաս՝ որպես մեծահարուստի էրեխա, ոնց որ հիմա ուղարկում են արտասահման սովորելու, պապայիս ուղարկել են, Մխիթարյան վարժարանն է ավարտել: Մխիթարյանից հետո գնացել է Իսրայիլա, սովորել է Նոմի համալսարանում: Ներո, որ ավարտել է, էկել է, դե ծնողները որ Պարսկաստանում էին, էկել է Պարսկաստան: Պարսկաստանն էլ պարերագմի մեջ է էղել, ուզեցել են իրեն փանակ: Ընկերներն ասել են՝ եկեք փախչենք: Ու որպեսզի փախչեն, ազգանունը... Նոր պասպորտ են հանել, ազգանունով - բանով փոխել են, պապաս եղել է Մարկ Ջամջյան, դարձել է Արա Մամիկոնյան:

Արդանուջում լավ դիրք են ունեցել, լավ ապրուստ են ունեցել: Երբ որ սկսվել է կոտորածը, թուրքերը զինված մտել են, մի մասը փախել է, իսկ մի մասը թաքնվել է, որովհետև, ասում է, սկզբում կանանց, երեխաներին ձեռք չէին փախիս, փոխարկվանց էին սպանում: Նավաքում էին, իբր թե փրկափոխեն... Թուրքերը որ մտել են իրենց փուն, պապս, Սյրեփան Ջամջյան էր անունը, թաքնվել է նկուղում: Տանն էին երեխաները, կանայք, բայց քանի որ էն ժամանակ դեռ ձեռք չէին փախիս երեխաներին, թաքնվել է նկուղում: Թաքնվել է նկուղում, ձայն է լսել, իրենց կանանց աղմուկը: Ասել է՝ ես ինչի՞ եմ թաքնվում, վախկոտ մարդ չեմ, ավելի լավ է՝ ես մեռնեմ, քան թե մերոնց չկարողանամ պաշտպանել: Դուրս է եկել, հարձակվել է թուրքերի վրա, բայց նրանք շար են եղել, փրկում գնդակահարել են: Դա եղել է 15 թվականին, պապաս եղել է երկու փարեկան, հորեղբայրս եղել է մեկ փարեկան: Պապաս ունեցել է հորեղբայրներ: Երեք եղբոր փոխյի են եղել, հորեղբայրներ: Էն մյուս էրկուսին էնպեղ բռնել փարել են, փոխարկվանց բոլորին հավաքել են. չգիտեմ՝ ինչի չեն փրկում գնդակահարել: Բոլորին հավաքել փարել են ձորի բերանը՝ ժայռի վրա, ու բոլորին գնդակահարել են, զցել ձորը:

Միայն մի հորեղբայրն է կարողացել փրկվել: Դրանից հետո, պապիս որ սպանել են, հիմա արդեն սկսվել է փախեփախը: Տարս չափից դուրս գեղեցկուհի է եղել: Նկարները ունեն, եթե կարող է պերք գա, հեպո կգտնեն, բոլորը կտամ: Շարս գեղեցիկ, չափից ավելի գեղեցկուհի է եղել: Որպեսզի փախեփախի ժամանակ թուրքի ձեռք չընկնի, հագցրել են փղամարդու շորեր, երեսին մուր են քսել, հարուկ, շալվարով-բանով, էսպես մի կերպ փախցրել են դեպի Բաթում: Ուրքով, իհարկե, էն ժամանակ բոլորը ուրքով է եղել: Էդ փախսարականների հեպ մնացել են պապաս, Էդ եղբայրը, պապայիս մայրը, պապայիս փայրը և պապայիս քեռու կինը, որովհետև քեռուն նորից էնպեղ, քեռուն էլ էին էնպեղ գնդակահարել: Քեռու կինն էլ հղի է եղել: Ու՛ր գնա: Մտիպված մնացել է մերոնց հեպ, մինչև փախչելը: Ու դրանից հետո փախել են, հասել են մինչև Բաթում: Պապայիս քեռու անունը Մկըր է եղել, Մկրտիչ... Ճակարագիր է, Էդ երեխան դեռ չծնված՝ հորը սպանել են: Էսպեղ ծնվել է, Էդ երեխու անունը դրել է ամուսնու անունը: Էս փղան բանակում, սովեփական բանակում, ինչ-որ թոքերի բորբոքումով, բանով, հեպո էկել է փուն, մահացել է: Էդ կինն ամուսնացել է ուրիշ մարդու հեպ, նորից փախսարականի հեպ: Ամուսնացել է, նրանից երեխաներ է ունեցել: Նրա երեխան էլ է մեկի անունը Մկըր, իրա թոռի անունը դրել ա էլի ամուսնու անունը: Մի հինգ փարի առաջ նա էլ մահացավ:

Բաթումում դե փախսարականները չափից դուրս շար են եղել: Իրանը էլ էնպեղ, ասենք, մի քիչ ունևոր մարդիկ են եղել, փեղավոխվել են Խարկով: Տարս գնացել է Խարկով, մի որոշ ժամանակ հորս էդ քեռու կինն է պահել, երևի մի փարի մնացել են Բաթումում: Նոր Խարկովում, դե շնորհքով մարդիկ են եղել, փարս առևտրոր է արել, հեպո կարողացել են, ինչ որ կարողացել են, հեպ են բերել իրենց աշխարանքով: Տարս Խարկովում երկրորդ անգամ է ամուսնացել (*ցույց է փարիս լուսանկարները*): Մա փարիս մաման է, հայրս, հորեղբայրս: Մա Նոբիփսմեն է՝ հորս քեռու կինը, և նրա ամուսինը՝ փարիս եղբայրը, որ մահացել է, էնպեղ սպանել են: Այ էս մարդուն են սպանել:

Տարս շար երիտասարդ էր: Ինքը 1897 թիվ... Այսինքն՝ փասնութ փարեկան էր: Երկրորդ անգամ է ամուսնացել, նորից փախսարականի հեպ: Էլի շար լավ մարդ է եղել: Ես չեմ փեսել, բայց և՛ հայրս, և՛ հորեղբայրս պարմում էին նրա մասին, որ շար լավ մարդ էր, փարբերություն չէր դնում, որ իրանք իր հարազատ զավակները չէին: Որովհետև ինքն էլ է ընփանիք ունեցել, իրա ընփանիքին լրիվ կոտորել են: Ինքը ինչ-որ պարահականության բերումով ողջ է մնացել: Քերոք Մադոյան: Նորեղբորս, արդեն որպես իրա հայր, երկրորդ հայր, հորեղբորս իրա ազգանունն է փվել, և հորեղբայրս Մադոյան էր: Պապաս Ջամջյան էր, հորեղբայրս՝ Մադոյան, բայց էդ Պարսկասարանից հեպո Ջամջյանն էլ փոխվեց, հիմա Մամիկոնյան դարձանք:

Խարկով գնացողների մեծ մասը ցրվեց: Էնպեղ մնացել էին շար քիչ ազգականներ, մնացածը ցրվեցին փարբեր փեղեր՝ Մոսկվա, Նովոռոսիյսկ, Անապա, Ամերիկա, Ֆրանսիա, փարբեր փեղեր: Ամբողջ աշխարհում ազգականներ ունենք, բոլորը ցրված են էսպես, շար են ցրված... Պապայիս հորաբույրը և հորաքրոջ փղան, նրանք էկել են Թիֆլիս:

Պապաս, որ Մխիթարյանը ավարտել է, դրանից հետո Նոմի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը, փիլիսոփա է եղել: Իմացել է փասներեք լեզու, որից յոթը՝ մաթուր գրական, գրել-կարդալով (*ծիծաղում է*). ռուսերեն, հայերեն, թուրքերեն, պարսկերեն, ֆրանսերեն, իրալերեն, լարիներեն... Պարսկասարանից որ փախել է, Եվրոպաներում ինչ-որ աշխարանքներ են արել, Ծվեյցարիայում են աշխարտել, շար մարդիկ են փեսել: Նեպո պարբերազմ էր, էսպես փախելով փարբեր փեղեր են գնացել: Է, հեպո, ոնց է եղել, երևի ընկերներն են որոշել, ինչ, հասել են Բեյրութ: Նասել են Բեյրութ, ինքը Բեյրութում աշխարտել է, էնպեղ մեկը պարճառ է եղել, ասել է. «Էսպեղ լավ կին կա, աղջիկ կա, արի ծանոթացնենք, ամուսնացեք»: Նեպո դը Գոլը, դե Լիբանանը ֆրանսիական գաղութ է եղել, եկել է Բեյրութ, մաթուր ֆրանսերեն իմացող մարդ են փնտրել, որ կարողանա թարգմանիչ լինի, ու պապայիս են փարել: Ճաշկերույթի ժամանակ պապաս է թարգմանել:

Մայրս... Մայրական կողմից էլ են փախսարական եղել: Մայրական կողմի պապս Կարսից էր, մայրը՝ փարս այսինքն՝ Արդահանից: Իրանը էլ են էդ գաղթի ժամանակ փախել: Տարս... Տարս ո՛վ ուներ... Մարդ չուներ: Չէ, փարս ուներ

մի եղբայր: Մի եղբայր ուներ: Ասում էր՝ երկու երեխաներով փախել են, առանց ծնողների, գնացել որբանոց են մտել: Դե պապս էլ է որբ եղել, հեպո իրար հեպ ամուսնացել են, որբանոցի երկու որբեր, հա: Բեյրութում: Ամուսնացել են, երեխաներ են ունեցել:

Պապս շենք էր կառուցում: Ծենքից ընկել է պարահական, ջահել, ջահել ասելով՝ երևի ջահել չէ, 50 փարեկան է եղել, մահացել է: Տափս է ընդունվել պահել: Չորս փղա, երկու աղջիկ: Ծար դժվար է եղել: Պապս որ մահացել է, քեռիս, Լիբանանում ծխախոտի գործարան է եղել, մտել է գործարան, սկսել է աշխատել, էսպես պահել է: Ներսի որ մեծացել են, Նայասփանը ներգաղթ էր անում, 1946 թվականին ներգաղթի համար դիմել են, որ գան Նայասփան: Մամաս, քեռիներս էին պնդում, պապաս չէր ուզում: Էնտեղ ինչ-որ երկու գույնի քարտեր էին փախս, դեղինը՝ պարաստվելու, կարմիրը՝ գալու: Քեռիներիս կարմիր են փվել, մերոնց՝ ծնողներիս՝ դեղին: Մամաս էկել է, պապայիս մոտ լացել է, թե. «Ես էստեղ չեմ մնա, ամբողջ ազգականներս գնում են, ես մենակ մնամ՝ ի՞նչ պիտի անեմ»: Պապաս գնացել է ռուսական դեսպանատուն, դե ռուսերեն վարժ գիրի, գնացել, խնդրել է: Կարմիր քարտը փվել են, ասել են՝ դե գնա: Քեռիս էլ էր ժամանակ փաքսու վարորդ էր: Էդ ժամանակ ինչ-որ երկու հոգի գողություն են արել, մեկի փանը գողություն են արել, փանտիքոջը կորապել են, լցրել են ճամպուրակի մեջ, դուրս են էկել, փաքսի են կանգնեցրել: Պարահական քեռուս փաքսին է եղել, դրել են բազաժնիկը: Կամրջի վրայով գնալիս ասել են՝ մի թուպ սպասեք: Էդ ճամպուրկը գցել են գեպը: Ծամպուրկը գցել են գեպը, հեպից մարդ էլ փեսել, քեռուս փաքսու մեքենայի համարը գրել է, ու ճամպուրկը հեպո բացվել է, էդ կորորներն ընկել են: Էդպես էլ քեռուս բռնել են, մինչև իրանք գրել են իսկական մեղավորներին, մինչև բաց են թողել, իրենք էդպես էլ մնացին էնտեղ ու էլ չեն կարողացել գան Նայասփան:

Դե, եկել են, իրենց հեպ բերել են, ասենք, իրենց... ոսկիները, ոսկիներն են բերել, հագուստներ են բերել, սնունդ են բերել: Երբ որ հասել են Բաթում, Բաթումում իրենց ասել են, որ կարանտին է, մինչև ծովափ հասնելը պեպք է ինչ որ ունեք, թափեք ծովը: Ոչ մի սնունդ էլ չպեպք է բերեք հեպներդ: Դե, դա արդեն սովետական քաղաքականություն էր, չէին կարող թույլ տալ, որ սրանք գան լիք-բով, փեղացիները ուրելու բան չունեն... Ու պահանջել են սնունդը թափել: Կարանտին է, սնունդը թափեք: Դե, մի մասը թափել են, մի մասը պահել են... էսպես էկել են, հեպո որ հասել են, Կիրովական են իջել: Իրենց ուղարկում էին Իջևանի գյուղերից մեկը, բայց մերոնք Կիրովականում իրենց կամքով իջել են: Իջևանում երևի փուն կրային, բայց որ իրենց կամքով Կիրովականում են իջել, իրենց փուն չեն փվել, փուն են վարձել: Նիմա պեպք է վարձը տային:

Պապաս ամբողջ կյանքն ուսանել է, ոչ մի բան չէր կարողանում անել: Ինչ անի, ինչ չանի՝ իրենց ունեցածից սկսել են վաճառել: Քիչ-քիչ վաճառում են, ժամացույց են վաճառում, կոսպյում են վաճառում, կոշիկ են վաճառում, էսպես վաճառելով՝ մի քիչ կարողանում են գոյություն պահպանեն: Նիմա փունը փաքացնելու համար փայտ է պեպք, բոլորը գնում են անփառ: Տանտերը կացինը փվել է ձեռքը, ասել է՝ գնա բեր: Ինքն էլ ոչ կացին բռնել գիրի, փունն էլ մի հար հեջ մեխ խփել էլ չգիրի: Մենք էինք անում ամեն ինչ: Մամաս ավելի շար էր անում, քան նա (*ծիծաղում է*): Էդպես հեպո մտել է փայարան: Չէ, մինչև փայարան մտնելը իրեն մեկը ասել է՝ ես գնում եմ հյուսիսից ապրանք եմ բերում, վաճառում եմ: Էդպես, ասում է՝ արի դու էլ, գնանք, գոնե փունդ կպահես: Գնացել է, ասում է՝ իր հորաքրոջ փղան էնտեղ օգնել է: Ընկույզ, մրգեր, փարբեր, ձուկ է բերել, էստեղ Կիրովականում վաճառել: Ու սկսում են լավ ապրել: Դե առևտուր էր, սկսում են լավ ապրել: Մի օր միլիցիան մտնեցել է, իրեն ասել է. «Արա, դու համեստ մարդ ես, ես քեզ հարգում եմ, ուրիշին չասես, մենակ քեզ եմ ասում, երկուշաբթի օրվանից ով որ առևտուր է անում, պրի բռնեն»: Ու մտնում է փայարան էդպես: Մինչև գնաց թռչակի, փայարանում էր, հեպո աչքերը, գլաուկոմա ուներ: Ոչ մի բան չէր կարողանում օգտագործել, իր գիրտիլիքները, բոլորովին: Երբ որ գաղթել են էստեղ, իր ընկերոջը, նորից լեզուներ իմացող մարդ էր, փարել են, իբր թե Կագերեն փարել է, թե՛ Չէկան , որ թարգմանություններ անի ինչ-որ տեղ: Ներսի էդ մարդը չի գալիս, չի գալիս երկար ժամանակ, հեպո կինն իմացել է կողքից, որ էդ մարդուն վերացրել են: Անհետացել է: Էկել է պապայիս ասել է, որ ով գա՛ կասես լեզու չգիրեմ, էդածն էլ մոռացել եմ: Ու պապաս վախից ասել է՝ բացարձակապես լեզուներ չգիրեմ, ինքը մտել է փայարան որպես գրագետ մարդ, սրբագրիչ է աշխատել: Ինքն սկզբում սրբագրիչ է եղել: Էնտեղ «Կայծ» թերթ կար, էդ «Կայծ» թերթի սրբագրիչն էր, հայերեն և աղբյուրներն էջեր կային: Երկուսն էլ ինքն առաջին օրինակից հեպո սրբագրում

էր, նոր փրվում էր արդեն փախաբերության: Աշխարհավարձն էլ որ քիչ է էղել, հետո էլ գրաշարություն է արել, ու դրանից աչքերը փակեց փչացան: Դրանից հետո, Խորուշովից հետո արդեն մի քիչ ազատություն եղավ, նոր արդեն կարող էր օգտագործել իր գիրքերը, լեզուն, բայց արդեն մեծ էր: Իրեն՝ որպես լատիներեն իմացողի, կանչում էին բժշկական, որ էսպերո դաս փա, բայց արդեն աչքերը լավ չէին, չգնաց:

Ուրեմն, որ պետք է փախչեին Պարսկաստան, ավելի շուր փախարակություն էին ընդունել, դե պապաս Իրախայում է էղել, եղբայրն է էղել Խարկովում: Որ պետք է գնային Պարսկաստան, հորեղբորս անունով էլ են անձնագիր հանել: Ինքն էլ են ժամանակ սովորելիս է էղել Խարկովի պոլիտեխնիկ ինստիտուտում, ճարտարապետական բաժնում: Ինքը բավականին կառույցներ ունի Սովետական Միությունում: Ասել է՝ ես չեմ գալիս: Ինքն ասել է. «Ես չեմ գալիս, ես կոմսոմոլ եմ, հետո էլ ես սովորում եմ, կիսապ չեմ թողնի, գնամ Պարսկաստան, ի՞նչ անեմ»: Ծնողները գնացել են, ինքը մնացել է: Նարևաններից մեկը խոսակցությունից իմացել է, որ նրա անունով անձնագիր կա պահած, գնացել մարտի է Կազբեթին: Նորեղբորս բռնել են, ինստիտուտից հեռացրել են, կոմսոմոլից հեռացրել են, փարել նստացրել են: Նստել է, ու՞մ հետ էր, մեկի հետ՝ էլի մեր ազգականներից, չեմ կարողանում հիշել: Նրա հետ նստել է բանր: Ներսիսը ինչ-որ բավական ժամանակ հետո ազատել են: Ազատել են, եկել է, ուսումը շարունակել, ավարտել է: Երբ ավարտել ու սկսել է աշխատել, սկսվել է 1941 թվականի պարերազմը: Գերմանացիները որ եկել են, հասել են մինչև Խարկով, և անցել են, հետ գնալիս, 44 թվականին կարծեմ, թե՛ 45 թվականին, հետ են գնացել, երևի 45-ին կլինի, հետ գնալուց առաջ ասել են՝ ով ուզում է՝ մեզ հետ կարող ա գնա Եվրոպա: Նորեղբայրս էլ, ամուսնացած, ինքը, կինը, երեխան, ասել են, որ սրախինյան ռեպրեսիայից փրոժեցինք, մեր ազնվությունը մեզ չփրկեց, ավելի լավ է՝ գնանք, քանի որ էսպերո ապագա չենք փեսնում: Գնացել են, հասել են Լեհաստան: Տարիկիս քույրը իրենց հետ է էղել, էսպերոյից գնացել է Ամերիկա, իսկ իրենք ասել են՝ էսպերո լավ է, մնանք էսպերո: Իրենց հետ կնոջ մայրն է էղել, կնոջ եղբայրն է էղել: Նա, ինքն աներոջ հետ էր, ինքը աներոջ հետ է փախել, նոր հիշեցի: Էդ բանը աներոջ հետ էր նստել: Վերջը Էդրեդից, երբ որ Սովետական Միությունը հասավ Լեհաստան, Լեհաստանը եղավ կոմունիստական, ու Լեհաստանում գրավող բոլոր փախստականներին, որպես պետության թշնամիների, բոլորին աքսորեցին: Միքիլ: Մի անգամ որպես կոմերիստական նստեց, մի անգամ էլ՝ հակասովետական մտրեցման համար:

Ուղարկեցին Ղազախստան՝ Կուստանայ քաղաք: Քանի որ ավարտած էր, իրեն էսպերո գործ փրկել են, հետո արդեն, երբ որ սրախինյան էդ բաները՝ ճնշումները, մի քիչ թուլացան, ինքը քաղաքի գլխավոր ճարտարապետն էր: Տարիս մաման իրենց հետ էկել էր Խարկով, հետո հորեղբորս հետ մինչև աքսոր ամեն փրկ գնացել է, էսպերո Կուստանայ քաղաքում՝ Ղազախստանում էլ մահացել է, էսպերո էլ թողված է: Նա, փաստորեն, հա, աքսորի ժամանակ: Փաստորեն հորեղբորս հետ գնացել է Լեհաստան, Լեհաստանից էլ՝ Կուստանայ: Ուրեմն հորեղբորս առանձին են ուզեցել աքսորել, կարող էին կնոջը ինչ-որ ձև ձևակերպելին, չարաներին աքսորի, բայց կինն ասել է՝ որտեղ ինքը, էսպերո էլ ես: Իր աղջիկը, հորեղբորս աղջիկը, Նայաստան մի քանի անգամ էկել է, ասում էր՝ պետք է գնամ Նայաստան: Էկավ, էսպերո պոլիտեխնիկ ինստիտուտը ավարտեց, հետո նույն համալսարանում դասախոս էր: Ծնողներն ասում էին՝ արի, ասեց՝ չէ, ավելի լավ է՝ դուք էկեք: Ու իրենք էկան: Քանի՞ փարի հետո, երկու փարի հետո մահացավ աղջիկը: Գլխի ուռուցք ուներ, մահացավ: Երկու փարի հետո մահացավ, մնացին հորեղբայրս և կինը: Վերջում էլ իրենք մահացան: Ես էի իրենց վերջում խնամում:

Տարիկս, ասեցի, գնաց Պարսկաստան: Պարսկաստանում են երկրորդ ամուսինը մահացել էր, ինքը մենակ էր մնացել: 1968 թվականին, չէ, ներողություն, 1970 թվականին, հա, 70 թվականին Պարսկաստանից նորից ներգաղթ կար Նայաստան, էսպերոյից եկավ, ես ու պապաս գնացինք Ջուֆա, դիմավորեցինք, Ջուֆայից բերեցինք Կիրովական: Իրեն առանձին փուն փրկեցին, հա, մի քանի սենյակ փրկեցին, հետո էս մեծ հորեղբորս հետ էր մնում: Էսպերո մահացավ:

Բաթումից ցրվել են ամենքը մի կողմ, էդ քեռու կնոջը կորցրել էին: Ներքերը կորցրել էին, չէին կարում գրնեթին: Էդ են կինն էր, որի ամուսնուն սպանել էին, Նոբիսիսին: Ներսիսը բավականին անցավ: Մոտավորապես դա կլինեք երևի էլի 1960-ական թվականները,

գյուղում, Երևան



Նայրը և փայրը՝ Բիթլիսի
նահանգի Մոսկան գավառի
Արփի գյուղից-Արևելյան
Նայասարան



Վասակ Թորոյանի հայրը

33 Վազգեն Ղուկասյան,
1933թ., Աշնակ



Ծնողները՝ Խուրի Ավարբ
գյուղից- Արևելյան
Հայաստան: Լուսանկարում
հայրն է՝ Խուրթեցի Խաչոն,
Սովետական Հայաստան
թերթի 1988թ. հունվարի 1-ի
համարում



34 Վարդան Հակոբյան,
1960թ., Գեղարքունիքի
մարզի Նորակերպ գյուղ



Պապերը՝ Վանի Մխկներ
գյուղից- Արևելյան
Հայաստան

35 Տաթևիկ Հովհաննիսյան,
1983թ., Երևան



Պապերը՝ Ալաշկերտի
Խասարուր գյուղից-Արևելյան
Հայաստան

Ներագրություններ Թուրքիայում՝
«Երանի նրանք գնացած չլինեին»
Նայկական հիշողություններ հրեոյ
Թուրքիայում

Լեյլա Նեյզի



«Երանի նրանք գնացած չլինեին». հայկական հիշողությունների բեռը Թուրքիայում

Թուրքիայում մեր գրույցի մասնակիցներից մեկը, խոսելով հայերի մասին, օգտագործեց վերը բերված արտահայտությունը. «Երանի նրանք գնացած չլինեին»: Այս արտահայտությունը նշանակալից է, քանի որ այն մարմնանշում է անցյալի հանդեպ կարողի վերջերս դրսևորվող երևույթը: Դրանով ընկալվում/պարկերացվում է մահմեդականների և քրիստոնյաների միջև գոյություն ունեցող ներդաշնակ հարաբերությունների վրա հիմնված մի կորուսյալ հասարակություն, որպեսզի վերջինների արդիականությունը հակադրվում էր առաջինների հետամնացությանը: Անցյալն իդեալականացնող այս դիսկուրսը միաժամանակ լռելայն, հարմարորեն խուսափում է խորթին հարցերից, իր իսկ լռությամբ ենթադրելի փախույթ, որ այս հողի զգալի մասը կազմող քրիստոնյա բնակչությունը «գնացել է» իր սեփական կամքով:

1990-ականներին առաջացած կարոպախարի այս դիսկուրսը կարող է դիտարկվել որպես փաստանյայտների ընթացքում հանրային ոլորտում լռության մարմնաված անցյալի մասին խոսելու երկչոր փորձ: Մեր հետազոտությունը ցույց է տալիս, սակայն, որ անհավանական իրենց փորձը փոխանցել են սերնդե սերունդ, և Թուրքիայում հայերի մասին անձնական ու տեղական հիշողությունները միանգամայն կենդանի են: Մենք նախընտրեցինք անցյալի հիշողություններին անդրադառնալ ներկայի համար դրա կարևորության փաստանկյունից: Նախորդ սերունդների փորձի մասին տեղեկություններից զարդ հայկական հիշողությունների բեռը, որը մարդիկ Թուրքիայում շարունակում են կրել, կարող է դիտարկվել մեր հասարակության՝ իր ոչ վաղ անցյալի, արդիականության և ազգային ինքնության դեռևս չլուծված և շփոթիչ հարաբերությունների փոխաբերություն:

1923 թվականին հիմնադրված Թուրքական Հանրապետության նպատակը նոր, ժամանակակից ազգ ստեղծելն էր: Արդիականության դիսկուրսը խիստ հաջողակ էր մեծ չափով ներգաղթածներից կազմված հասարակությունում, որոնք հույս ունեին բարելավել իրենց հետնորդ սերունդների կյանքը: Հանրապետությունը նոր կյանքի սկիզբ էր, և «Աթաթյուրքի զավակների» սերունդը սովորեցնում էր կենսականապես ապագայի վրա: Թուրքական ազգային ինքնությունը, սակայն, անխուսափելիորեն իր երևից բերում էր նոր պարմության անհրաժեշտություն: Պարմությունն այնպես, ինչպես շարադրված է դասագրքերում, կենսորոնանում է ոչ թե վաղ անցյալի պարմությունների, բռնությունների և փրավմանների վրա, այլ՝ Կենսորոնական Ասիայիում թուրքերի ծագման խնդիրների: Թուրք լինել՝ ենթադրում էր խոսել թուրքերեն, ունենալ սուննի մահմեդական ծագում և նույնականանալ էթնիկ թուրքերի հետ: Հաշվի առնելով օսմանյան հասարակության բազմալեզու, բազմէթնիկ և բազմակրոն բնույթը, միասնական ազգային ինքնության պահանջի համառությունը շարունակելով հարկադրում է կամ հրաժարվել իրենց բոլոր փարբերություններից, կամ փարանջարել իրենց հասարակական ու անձնական ես-երը (ինքնությունները): Այս մոլորեցումը կադապարին մասամբ չհամապատասխանող մահմեդական համայնքների հանդեպ էր, այնպիսիք, ինչպիսիք քրդերն ու ալավիիներն են: Օսմանյան հասարակության անքակտելի մասը կազմող քրիստոնյաները (և հրեաները) բացառվում էին: Պարմության դասագրքերը քիչ էին անդրադառնում նրանց, բացառությամբ թուրք ժողովրդի համար պտրենցիալ վրանգ ներկայացնող «այլոք» հիշարակումների:

Կրթական համակարգի կամ լրավության միջոցներով մարմնավոր ազգային պարմությունը մարդկանց մարտելու աստիճանը պայմանավորված է դրանց, ինչպես նաև այլ՝ անցյալի մասին գիտելիքների այլընտրանքային աղբյուրների մարտելիությամբ: Ժամանակակից թուրքական ինքնություն ստեղծելու փորձը հիրավի ձևավորեց թուրքական ազգայնամտությունը ներառող

հզոր միջին խավ, սակայն դրա հետ միասին քեմալական վերնախավն անընդհատ բախվում էր հակամարտող շարժումների մարտահրավերներին: Այս պրոբլեմները մշտապես ուժային մեթոդներով ճնշվում էին: Գոբալ գործընթացներից հետո թուրքական ազգային պետության ամենագորեղ մարտահրավերն առաջ եկավ 1980-ական թվականներին, երբ ինքնության քաղաքականությունից բխող հակամարտությունները սկսեցին սպառնալիք դառնալ ազգային ինքնության բեկուն հիմքերին:

Ազգ-պետություն կայությունն այսօր հեղափոխական ժողովրդավարացման ուղղությամբ համարձակ քայլեր է պահանջում, ներառյալ ոչ վաղ անցյալի պարմության վերազնահարումը որպես քաղաքացիների և պետության միջև նոր պայմանագրի միջոց: Նորագույն պարմության վերաբերմունքն հնարավորություններից մեկը հանրային/ազգային պարմության և փեդական ու անձնական հիշողությունների խզման մարտահրավերն է:

1980 թվականի զինվորական հեղաշրջումից սկսած վերջին երեսուն տարիների քաղաքական ցնցումները, այդ թվում աշխարհիկ-իսլամական հակամարտությունը և թուրքական բանակի ու ՔԲԿ-ի (Քրդստանի Բանվորական Կուսակցություն) միջև զինված բախումները հանգեցրին պարմության ու ազգային ինքնության հարցերի հանրային քննարկումների ծավալմանը: Ռևիզիոնիստական (քննադատաբար վերանայող) պարմությունը մարտահրավեր է նետում պաշտոնական պարմությանը և փոքրամասնությունների նկատմամբ հեղափոխությունն աճում է: Անհատները և համայնքները, հաճախ հիշողությունների օգնությամբ, սկսել են իրենք հեղափոխել այլընտրանքային պարմությունները և ինքնությունները: Պարմական իրադարձությունների ոչ վաղ անցյալի անձնական և փեդական հիշողությունների կենսունակությունը հնարավորություն է տալիս մուրթ գործել փարատեսակ, երբեմն հակասական դեպքերի շրջան:

Տայկական հիշողությունների բեռը Թուրքիայում իր անցյալի հետ շիզոֆրենիկ հարաբերությունների օրինակ է. այսօրվա հանրության լռությունը կամ մերժումը գոյակցում է նրա հետ, ինչն իրականում «բաց գաղտնիք» է: Թուրքիայում



կան որոշ համայնքներ և փրաածքներ, որոնց վրա 1915 թվականը չի ազդել և որպեսզի հայերի մասին հիշողություններ գոյություն չունեն: Լրավամիջոցների քննարկումները մեծ մասամբ կենտրոնացած են միջազգային քաղաքական խնդիրների վրա, այդ դեպքերի ազդեցությունը Թուրքիայի անհատների և բնակավայրերի վրա հաշվի չեն առնվում և չեն վերլուծվում: Ինչու՞ է նորագույն պարմությունն այսպես կրքոտ քննարկվում այսօրվա Թուրքիայում: Ինչպե՞ս են անհատները և համայնքները վերականգնում նորագույն պարմությունը: Ինչպե՞ս են 1915 թվականի իրադարձությունները փոխանցվել սերնդե սերունդ: Ի՞նչ կարծիք ունենք մենք պարմության հակասությունների և լռությունների մասին: Ինչու՞ Թուրքիայում հայերի մասին հիշողություններն այսքան նշանակալից են ազգային և այլ ինքնությունների կառուցման համար: Մրանք այն հարցադրումներից են, որոնք մենք առաջադրել էինք մեր հետազոտության ընթացքում:

Մեթոդաբանությունը

Նկարի ունենալով հայերի հարցի նրբությունը Թուրքիայում, լուրջ խնդիր էր հասարակության փարբեր շերտերից պոբենցիալ գրուցակիցներ գրնել, ովքեր կկամենան խոսել այս հարցի շուրջ և կհամաձայնվեն, որ գրույցը գրի առնվի: Մենք չէինք ցանկանում նաև հարցազրույցի թեման սահմանափակել այնպես, որ հնարավոր քննարկումների ընդգրկումը նեղանա: Մեր գլխավոր ռազմավարությունը անձնական վարահելի կապերի միջոցով գրուցակիցներ գրնելն էր: Օրինակ՝ յուրանքանչյուր հարցազրույց անցկացնող գրուցակիցներին որոնում էր իր անձնական ծանոթների ցանցի միջոցով: Այս ցանցերի միջոցով մենք կարողացանք



պարմություններ գրանցել փարբեր սեռա-փարիքային խմբերի և էթնիկ, կրոնական ու սոցիալական միջավայրերի պարականոց հասարակ մարդկանցից: Մեր սեփական ինքնությունները և մեր անձնական կապերը գրույցների ընթացքում կարևոր դեր խաղացին վերջնական արդյունքի և հաջողության հասնելու համար: Զրույցի մասնակիցներին մենք խնդրում էինք պարմել իրենց ընտանիքի և ծննդավայրի պարմության մասին այն, ինչ իրենք գիտեն: Իրականում դրանք ոչ թե հարց ու պարասխանի վրա կառուցված հարցազրույցներ էին, այլ՝ պարմողին ունկնդրելու փորձ: Մեր նպատակը գրուցակիցների համար իրենց սեփական պարմությունները կառուցելու մթնոլորտի ստեղծումն էր:

Վարցազրույցները մենք իրականացրել ենք անցյալում հայերի ցայտուն ներկայացվածության փարածքներում: Մենք աշխատել ենք Սրամբուլում, Կենտրոնական Անապոլիայում և մասնավորապես Վարավ-Արևելյան Անապոլիայում: Մեր գրուցակիցները սերնդային, սեռային, փարածաշրջանային և հասարակական պարականությունից առումներով շար փարբեր էին: Վարցազրույցների մեջ ընդգրկված էին մարդիկ, ովքեր իրենց նույնացնում էին որպես թուրքեր, քրդեր և հայեր: Այս ծրագրի համար գրանցվել, վերձանվել և արխիվացվել են շուրջ հարյուր հարցազրույց:

Այստեղ մենք հրապարակում ենք փաստերը անձի պարմություն իրենց սեփական մարմուցմամբ: Յուրաքանչյուր անհար, անշուշտ, եզակի է, սակայն մենք փորձել ենք ներկայացնել հնարավորինս փարբեր փաստի անձանց, ինչպես նաև պարմություններից բխող փարբեր թեմաներ: Քանի որ մեր հարցվողներից ոմանք անանունություն պահանջեցին, մենք ամենուր օգրագործել ենք ծածկանուններ: Տեքստերին ուղեկցող լուսանկարները նույնպես պարզ դիմանկարներ չեն, այլ՝ յուրաքանչյուր հարցազրույցի ոգին ներկայացնելու փորձ:

Թեմաները

Մեր գրուցակիցներին մենք խնդրել ենք խոսել իրենց ընտանիքների և իրենց ծննդավայրի պարմության մասին: Նրանց պարմություններն ըստ էության փարբեր աղբյուրներ ունեն՝ իրենց սեփական հիշողությունները, նախորդ սերունդներից փոխանցված հիշողությունները (երպիշողություններ), գրավոր պարմությունը և լրավամիջոցները: Պարմությունները հաճախ մանրամասն փրդեկություններ են պարունակում գրուցակիցների, նրանց ծնողների, պարբերի-փարբերի և, որոշ դեպքերում, նրանց պարբերի և փարբերի ծնողների մասին: Սա հնարավորություն է ընձեռում վերլուծել, թե մեր գրուցակիցներն ինչ կերպ են վերականգնում մտրիկ անցյալը:

Մեր գրուցակիցների մեծ մասը, եթե նույնիսկ մենք ինքներս չէինք ընդգծում հարցը, 1915 թվականը նշել է որպես 20 դարի Անապոլիայի պարմության ըստ երևույթին ամենացավալի իրողություններից մեկը: Վայկական բնակչության համար խիստ աղերպալի հեղանակներից գար 1915-ը հսկայական աղբյուրություն է թողել Անապոլիայի բնակավայրերի և մարդկանց վրա, որոնց արձագանքները կարելի է գգալ միջև այսօր: Նյութական մշակույթի մնացորդները, որպիսիք են ավերվող եկեղեցիները, փները, գերեզմանոցները, անհամար իրերը, ինչպես՝ պղնձյա սկուրեղները, կարի մեքենաները կամ դաշնամուրները ամենուրեք են: Վայերի մասին փրդական պարմությունները նույնպես կենդանի են պահում հիշողությունները: Առանձին անհարների, հայերի մասնակցությամբ փրդի ունեցած փրդական իրադարձությունների, թաղված հայկական գանձերի մասին պարմությունները փոխանցվում են սերնդե սերունդ: Կյանքում հայերը «հայտնվում են» նույնիսկ մարդկանց երագներում, անեծքների և մոգական խոսքերի միջոցով, որոնք, ըստ շարբերի, հայերը հեռանալիս թողել են իրենց հայրենիքի լանդաֆարներում:

1915 թվականը մեր գրուցակիցների մտր ներկայանում է որպես կյանքի առանձին դրվագ: Քրիստոնյաների և մահմեդականների փոխհարաբերությունները միջև 1915 թվականը նրանց պարմություններում ներկայանում են խաղաղ գոյակցության

նկարագրությամբ: Պատմողներն ընդգծում էին մահմեդականների և քրիստոնյաների մշակութային ընդհանրությունն ու պատմում էին միախոյունված կյանքի առանձին դրվագներ: Մահմեդականները մանրամասն պատմություններ էին հիշում իրենց ընտանիքների կողմից ճանաչված առանձին հայերի մասին: Դրանք հաճախ հարևաններն էին կամ գործարարները, ինչպես, օրինակ վարպետ արհեստավորները [*ասուս*]:

Խիստ ուշագրավ են Անարոլիայի հայ բնակչության ոչնչացմանը հանգեցրած դեպքերի նկարագրությունների ընթացքում մեր գրուցակիցների կողմից գործածվող արտահայտությունները: Նրանց կողմից օգտագործված տերմինների շարքին են պատկանում ռազմական մորթիլզացիա [*seferberlik-սեֆերբերլիկ*], պատերազմ [*savas-սավաշ*], հակամարտություն [*catısma-չաթռնա*], 1915, 1915 թվականի դեպքերը [*1915 olayları-օլայլարը*], արտաքսում [*tehcir, kaffe-թեհչիր, քաֆլե*], գնալ կամ մեռնել [*gitmek- գիթմենկ*], կտորած [*katliam, kıym, kırım, kesim -քասուլիսմ, քըլըմ, քըրըմ, քեսիմ*], ցեղասպանություն [*soykırım-սոյքըրըմ*] բառերը:

Զրուցակիցների կողմից օգտագործված տերմինները թույլ են տալիս դատարկություններ անել, թե ինչպես են նրանք նախընտրում ներկայացնել իրադարձությունները: Մահմեդական գրուցավարի հետ խոսելիս հայ գրուցակիցն, օրինակ, օգտագործեց *սեֆերբերլիկ* տերմինը, ասելով. «Եկեք օգտագործենք ավելի փափուկ բառեր, դրանք չափազանց մեծ ցավ չեն պատճառում»:

Յուրաքանչյուր պատմություն, անշուշտ, եզակի է, սակայն պարբեր համայնքների պատկանող անհատների պատմությունների համեմատությունը հնարավորություն է տալիս ուրվագծել որոշ հիմնական թեմաներ: Նայ գրուցակիցների պատմությունները թույլ են տալիս ենթադրել, որ Նրանտ Դինքի սպանությունը շրջադարձային էր, այն ձևափոխեց ինչպես հայկական համայնքի ներքին, այնպես էլ հայ համայնքի և թուրքական հասարակության միջև առկա հարաբերությունները: Նրանտ Դինքի սպանությունը և հանրության արձագանքն այդ սպանությանը հայերին խրախուսեց, որպեսզի նրանք հրապարակայնորեն խոսեն 1915 թվականի մասին: Այս երևույթն իր մեջ ներառում է թե ընտանեկան պատմությունները ներկայացնելը, թե օսմանյան պետության պատրասխանավորության մասին խոսակցությունները: Մեր հայ գրուցակիցները հղում էին անում հայերի ու մահմեդականների մտերմիկ հարաբերություններին, ընդհանուր մշակույթին, հողին կապվածությանը, 1915 թվականին տեղացի մահմեդականների կողմից հայերի պաշտպանության դեպքերին, անցյալի դեպքերի ընդունման անհրաժեշտությանը, որպեսզի կարողանան որպես հավասար քաղաքացիներ միասին ապրել ժողովրդավարական հասարակությունում:

Նայ գրուցակիցների պատմությունները վկայում են նաև, թե ինչ է նշանակում մեծանալ գլխավորապես պաշտպանողական բնազդներ ունեցող քայքայված փոքրամասնության համայնքում: Նրանք խոսում էին ընտանիքների կործանման և քրոհման պատճառով իրենց ընտանեկան պատմության թերի իմացությունների մասին, հաջորդ սերնդի պաշտպանության նպատակով 1915-ի դեպքերի շուրջ ընտանիքի ներսում լռության պատմելի մասին: Նրանք քննարկում էին, թե ինչքան դժվար է հայերի՝ որպես փոքրամասնության կյանքը և Թուրքիայի մահմեդական հասարակության ազդեցությունը վախեցած հայերի ինքնության ընկալման, ներկայացման և հանրային կիրարկման վրա: Նրանք դառնությամբ հաստատեցին, որ համայնքից դուրս իրենք ընկալվում են որպես ներգաղթածներից սերած օտար մահմեդականներ: Շարքերը խոսում էին անունների փոխաբերական դերի, զինվորական և քաղաքացիական ծառայությունների խորականության և Թուրքիայում ապրող հայերի վրա միջազգային հակամարտությունների վնասակար ազդեցության մասին: Չնայած ներհամայնական ամուսնությունների և համայնքի դպրոցներում իրականացվող հայալեզու կրթության միջոցով հայերը վերարտադրում են իրենց համայնքը, անընդհար նվազում է համայնքի դպրոցները հաճախող, մայրենի լեզուն օգտագործող, հայերի հետ ամուսնացող երիտասարդների թիվը, և շարքերը արտագաղթում են արտասահման: Միանգամայն հնարավոր է, որ Թուրքիայում փոխվում է հայի բնութագիրը, քանի որ երիտասարդ սերունդն իր հայկական ժառանգությունը հրապարակայնորեն հաստատելու և զուգահեռ իրեն ավելի հարմարավետ է գտնում թուրքական հասարակության մեջ ինտեգրվելով:

Այն փաստը, որ ՔԲԿ-ն 1915 թվականի իրադարձություններում ճանաչել է քրդերի դերը, քրդերի հանրային դիսկուրսի, մասնավորապես երիտասարդ սերնդի ներկայացուցիչների վրա ունեցել է կարևոր ազդեցություն: Շարք գրուցակիցներ բացիեբաց քննարկում էին Նարավ-Արևելյան Թուրքիայում հայերի դեմ սանձազերծված բռնությունների հարցում քրդերի պարասխանարվությունը: Այս իրողությունները բացառելիս հղում էր արվում պետական քաղաքականությանը, կրոնական առաջնորդների ազդեցությանը և նյութական շահախնդրություններին: Քուրդ գրուցակիցները դեպքեր էին պատմում հայերի դեմ կիրառված բռնությունների, հայերի սեփականության բռնագրավման և հայ կանանց ու երեխաների առևանգման մասին: Նարցագրույցները հաստատում են, որ լայնորեն տարածված էին հայ աղջիկների (հավաքված և նաև փղաների) ներառումը մահմեդական ընտանիքներ: Պարմությունները վկայում են այս հարաբերությունների շահագործողական բնույթը՝ կանայք բռնությամբ տարվում էին սեռական ծառայություններ մատուցելու, աշխատանքի և երեխաներ ունենալու համար: Պարմությունները ցույց են տալիս նաև, որ տեղական հակամարտությունները քրդերի միջև արդյունքում կարող են հանգեցնել հայերի պաշտպանությանը: Պետական բռնության և բռնագաղթի քրդական փառապանքների փորձն այսօր շարքերը նույնականացնում են հայերի անցյալ փառապանքների հետ: Տն u posiv (*շիվ ու պոշիվ*) քրդական արտահայտության իմաստը հենց նշանակում է, որ եթե հայերին խժռել են որպես «առաջին կերակուր», ապա քրդերը կդառնան հաջորդ կերակուրը:

Քանի որ հայկական ծագում ունեցող ընտանիքները և անհատները Անատոլիայում հայտնի էին, հայ հարսնացուների մասին պարմությունները կարող են հայտնաբերվել հաջորդ սերունդների, ներառյալ նրանց հետնորդների պարմությունների մեջ: Միջոցներից մեկը, որով հայ կանայք իրականում կարող էին արտահայտել իրենց ներկայացվածությունը, իրենց մահմեդական զավակներին իրենց պարմությունները փոխանցելն էր: Նույն կերպ, քանի որ հայերին պարկանած շարք տներ, դաշտեր և նույնիսկ ընկերություններ՝ աշխատանքային գրասենյակներ հայտնի են, ապա նրանց պարմությունները նույնպես սերունդներ հերո կարող են ի հայտ գալ:

Կանանց և սեփականության մասին պարմությունները ցույց են տալիս, որ դժվար թե 1915 թվականը կարելի է վերագրել անցյալին. այն մնում է ժամանակակից Թուրքիայի ամենօրյա կյանքի անբաժանելի մասը:

Խիստ ուշագրավ միտում է դիտվում մահմեդականների, մասնավորապես երիտասարդների պարմություններում սեփական ընտանիքներում հայկականություն վերահայտնաբերելու և հայերի հետ իրենք իրենց նույնականացնելու: Զոհի հետ նույնականացվելու նրանց այս մղումը կարող է դիտարկվել որպես ժամանակակից քաղաքական ինքնության արդյունք և իր պարասխանարվությունը հրապարակայնորեն ընդունելուց հրաժարվող հասարակությունում՝ մեղքի դեմ պայքարելու միջոց: Երիտասարդ քուրդ գրուցակիցներից մեկի խոսքերով՝ այս համարեքստում ինքն իրեն գոհ ներկայացնելը կարելի է դիտարկել որպես իշխանության աղբյուր:

Թուրքերի պարմությունները շարք հստակ արտահայտում են ազգային պարմության և տեղական հիշողությունների հակասությունները: Նարցագրույցների թուրք մասնակիցները նույնպես ընդգծում էին մինչև 1915 թվականը մահմեդականների և հայերի միջև առկա մերձիկ կապերը: Նրանք պարմում էին իրենց կամ իրենց ընտանիքների հարևանների, ընկերների կամ աշխատակիցների՝ անհատ հայերի մասին: Այդ հայերի մասին հիշողությունները սովորաբար երանգավորված են կարողով և ափսոսանքով: Պարմությունների հայերի կերպարները հաճախ իդեալականացված են՝ խելոք, աշխատասեր, կարգապահ, կրթված, առարածեռ: Մահմեդական գրուցակիցների անցյալի վերականգնումը միտված է հայերի արդիականությունը մահմեդականների թերզարգացությանը հակադրելուն: Դավաճանելով արևմտականական մտքեցմանը, իդեալականացված արդիականությունը թուրքերը նույնականացնում էին եվրոպական լուսավորվածության ենթադրվող համընդհանուր արժեքների հետ: Անցյալում մահմեդական էլիտան հավատում էր, որ օսմանյան հասարակությունը կարող է արդիականության հասնել միմիայն մահմեդականների առաջընթացին խոչընդոտող տեղացի քրիստոնյաների վերացումից հետո: Դրան հակառակ

ներկայումս խոսող մեր գրուցակիցների կարոտախարային կարծիքով եթե հայերը «չգնային», ապա նրանց գյուղը, ավանը, քաղաքը և երկիրն այսօր կարող էին ավելի բարգավաճ լինել: Այս փարբերությունը կարող է պայմանավորված լինել հանրապետության նվաճումները ներկայացնող ցինիզմով: Նաշվի առնելով հայաջնջման քաղաքականության հաջողությունը, այն կարող է մեկնաբանվել նաև որպես մեղավորության արտահայտություն:

Թուրք գրուցակիցների մեծ մասն, այնուամենայնիվ, 1915 թվականի մասին խոսելիս վարանոք և խուսափողական է: Նրանք գերադասում են չմասնակցել երևույթի և պարասխանարվության հարցերի ուղղակի քննարկումներին: Տեղացի անհարկների և փրկական իրադարձությունների մասին պարամությունների փխրությունն ու ավստսանքը շարք դեպքերում հակադրվում է 1915 թվականի ընդհանուր քննարկումներին բնորոշ լռությանն ու պաշտպանվողական կեցվածքին: Տարօրինակ է արդյոք, որ հայկական և քրդական հանրային դիսկուրսն, ըստ երևույթին, ավելի է փոխվել, քան թուրքերինը: Ներքին հակասություններով, լռությամբ և խուսանավումներով ապրելու գինն, այնուամենայնիվ, շարք բարձր է, և երևում է, որ նույնիսկ թուրքերի մեջ հասունանում է փրկական հիշողությունների ու հանրային դիսկուրսի խզվածքը հաղթահարելու անհրաժեշտության գիտակցությունը: Դա նկատելի է հարկապես երիտասարդության մեջ, որոնց անձնական պարամության որոնումները բախվում են ազգային ինքնության սահմանների հետ:

Մերժողականության և անցյալի մասին հանրության լռության խախտումը, անհարկների, ընդհանրիքների և համայնքների փորձի մասին միմյանց հետ գրուցելը կարևոր քայլ կլինի խաղաղության և փոխըմբռնման ճանապարհին թե Թուրքիայի ներսում, թե Նայասարանի և Թուրքիայի միջև: Բանավոր պարամության հետազոտությունները կարևոր միջոց են, որի օգնությամբ անձնական հիշողությունները կարող են արտահայտվել և կիսվել հասարակական ոլորտում:

Ինչ վերաբերում է հաշտությանը, մեր գրուցակիցները շարունակ ընդգծում էին այս փարածաշրջանում հայերի և մահմեդականների մշակութային ընդհանրության մասին, չնայած այս համայնքների միջև անցյալում թափված արյանը: Մեր գրուցակիցներից մեկի խոսքերով, «Եթե դուք նույնիսկ սպանել եք միմյանց, եթե դուք նույնիսկ միմյանց դեմքին չեք նայում, ձեզ երջանիկ դարձնում են նույն բաները»: Նրա կարծիքով երբ դուք դեմ առ դեմվում եք անցյալի հետ և պարասխանարվություն ընդունելն անխուսափելի է, այդ ամենը պետք է գուգորդվի ներմամբ և մոռացությամբ՝ որպես համարեղ ապագա անցնելու միակ հնարավոր միջոց: «Ինչպե՞ս կարելի է մոռանալ ջարդված ձեռքի ցավը: Դա կարելի է մոռանալ ներելու դեպքում: Մի բան է քննարկել, մի այլ բան՝ հարցականի փակ դնել, սակայն, ի վերջո, պետք է սիրես: Իսկ նրանք, ի պարասխան, պետք է քե՛զ սիրեն»: Նույն փրամաբանությամբ մեկ այլ գրուցակից անդրադարձավ անցյալ և ներկա սերունդների փարբերությանը, պնդելով, որ մեզ շրջափակող սահմաններն անհրաժեշտ է բացել, որպեսզի Արաքս գետն այլևս «վախի սահման» չլինի:

Գալիլեոյի մենությունը. «Պապիկ, ովքե՞ր են այդ Գյավուրները»

1960-ական թվականների սկզբներին Քամիլը հաճախում էր կենտրոնական Անատոլիայի Աքշեհիր քաղաքի Վերերան Մուսարաֆա Քեմալի անվան տարրական դպրոցը: Չնայած խորհրդավոր և վախեցնող դպրոցի շենքը գրավում էր Քամիլի և նրա ընկերների հեղափոխարարությունը, միայն տարիներ հետո նրանք իմացան, որ այն նախկինում եղել է աղջիկների կրոնական դպրոց: «Դուք գիտե՞ք նատարանները, որոնք օգտագործվում են եկեղեցիներում աղոթքի համար, մենք սովորում էինք դրանց վրա: Իհարկե դա առեղծված էր մեզ համար: Նրանք ասում էին. «Ահա «*քիրստեն*» [եկեղեցի], կամ նույնիսկ «*քիրստե*» [տեղական բարբառով]: Նկուղում մեծ երգեհոն կար: Մենք բոլորս հեղափոխված էինք դրանով: Երբ մենք ստեղծ էինք սեղմում, դրանից ծայն էր գալիս և մենք փախչում էինք: Ուսուցիչները մեզ զգուշացնում էին, որ դրան ձեռք չդրանք: Բայց մենք ոչ մի բան չգիտեինք այն մասին, որ երգեհոնը եկեղեցիներում են նվագում: Մեզ ոչ ոք այդ մասին չէր ասում, դա գաղտնիք էր: Կարծես թաքցրած մի բան լիներ»:

Մարդիկ չեն ցանկանում խոսել այդ բաների մասին

Ներաբրբասեր մանուկ Քամիլն ուզում էր այդ գաղտնիքն իմանալ և միշտ հարցնում էր պապին. «Պապիկ, ովքե՞ր են այդ *գյավուրները*» [«անհավարները»]: Նա աղաչում էր պապին. «Պապիկ, խնդրում եմ ասա, պապիկ, խնդրում եմ ասա», և բրթբրթում էր նրան, բայց պապը խուսափում էր. «Է՛, Քամիլ, ես հոգնած եմ: Է՛, Քամիլ, մի ստիպիր ինձ այդ պատմությունները պարմել»: Այնտեղ այնպիսի տեղեր կային, ինչպես *գյավուրների* թաղամասը, *գյավուրի տունը*, *գյավուրի համալիր* [հանրային բաղնիքը], բայց *գյավուրներն* իրենք այնտեղ չէին: Ոչ ոք նրանց մասին չէր խոսում ու Քամիլի հեղափոխարարությունը չէր բավարարվում: «Դա նման էր նրան, որ պետությունը, կամ, ասենք, ոչ թե պետությունը, այլ ինչ որ մեկն արգելել էր: Մարդիկ չէին կամենում խոսել այդ մասին: Ես ճշգրտորեն չգիտեի՝ վախի թե այլ պատճառով»:

Փոքրիկ Քամիլից թաքցված տեղեկությունները հետևյալն էին. «Այս եկեղեցին հայկական եկեղեցի էր, այս եկեղեցում աղոթող մարդիկ Գրիգորյան հավատի քրիստոնյաներ էին, սա միանձնուհիներ պարտաստող եկեղեցական դպրոց էր աղջիկների համար»: Դրա մասին նա իմացավ մեծանալուց հետո:

Չնայած ուսուցիչները փորձում էին երեխաներին հեռու պահել երգեհոնից, նրա պապը հոգնածության պատրվակով հրաժարվում էր և «ինչ որ մեկը» նրան արգելում էր խոսել դրա մասին, այնուամենայնիվ հնարավոր չէր երեխայից թաքցնել *գյավուրների* հեղափոխությունը:

«Ո՛վ է այն մարդը, որ ասել է «երկրագունդը կշարունակի պտրվել, եթե նույնիսկ դուք ինձ կախաղան հանեք»-, Գալիլեյը, դուք գիտե՞ք, նրան ինկվիզիցիայի մոտ էին բերել: Նա ասել է՝ «եղավ, երկրագունդը չի պտրվում»: Իսկ երբ նա հեռանում էր, նա ասել է. «ընկեր, դու հիմար ես, երկրագունդը պտրվում է»: «Ներիք է քեզ այդպես պահես», - ասել է նա: Նայերն ու թուրքերն միասին այնքան երկար են ապրել, որ ինչքան էլ ուզենանք դա մոռացության փակ, վերջացնենք այդ, մեկ է՝ չենք կարողանա: Դա հնարավոր չէ, որովհետև մենք ունեցել ենք այդքան մտերիմ, այդքան ընկերական և այդքան հարևանական հարաբերություններ»:



Քամիլը փորձում է պաշտոնական պարմագրության միջոցով հասկանալ այս դրացիության պարմությունը, անտեր մնացած եկեղեցիների կամ թաղամասերի, սեփականատերերին փոխած փնտրի և *համամների* գաղտնիքը. «Մենք այստեղ եկել ենք 1071 թվականին: Ո՛վ կար այստեղ: Նայե՛րն էին այստեղ, հույներն էին այստեղ»: Պաշտոնական պարմագրության համաձայն այդ օրերից Անարուխայի դռները բացվեցին թուրքերի համար մինչև առաջին համաշխարհային պատերազմը, երբ արտաքին ուժերը «թշնամություն հրահրեցին երկու ժողովուրդների միջև, հայ և թուրք բնակչությունը շար լավ հարաբերություններ ուներ»: Ըստ Քամիլի պարմության առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ րեղի ունեցավ «սադրանքների» մի շղթա. Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը հրահրեցին հայերին, Գերմանիան գրգռեց թուրքերին. «Այս մարդիկ պարկեշտ և ազնիվ էին: Սակայն մի րիմար բան եղավ, ինչ որ մեկը նրանց շեղեց ճանապարհից, քարոզեց նրանց և երկու ժողովուրդները թշնամացան: Իմ պապ Ալիի խոսքերով նրանք հաճելի մարդիկ էին: Մինչև է՛րբ: Մինչև այդ սադրանքները րեղի ունեցան»:

Սադրանքի ենթարկված հայերը «արտաքսվել են»: Քամիլի համար դա անընդունելի մեծ մեղք է. «Դու մարդկանց պոկում ես հողից, որպեսզի նրանք հազարավոր փարիներ ապրել են, և արքորում ես նրանց: Ես հարցնում եմ ձեզ, կարո՞ղ է արդյոք նման դաժան բանն ընդունելի լինել, ճիշտ չէ՞»: Եվ նրանք, ովքեր պարասխանապու են պարահաձի համար, ոչ թե Թալեաթը, Էնվերը կամ Քեմալ փաշաներն են, այլ այն մարդիկ, ովքեր հրահրել են նրանց. «Երեքն էլ այս երկրում մեծացած ամենախելոք մարդկանցից են: Բայց պարերազմի ժամանակ գերմանացիք խառնաշփոթ սրեղծեցին նրանց մեջ: Գերմանացիք օգնում էին մեզ այդ պարերազմի ժամանակ: Եվ դրա դիմաց խառնեցին մեզ ու հայերին քշեցին այսպեղից»:



Այս պարմությունը բացառում է այն գաղտնիքը, որով նա մտածված էր փարբական դպրոցում և պարասխանում է իր կողմից պապին ուղղված մշտական հարցին, թե «ո՞վքեր են այդ գյուղացիները»: Սակայն այն չի բացառում, թե ինչու՞ այդ պարմության մասին չի խոսվում, կամ արգելված է խոսել: Չնայած մեղավորները դիտարկվում են որպես դրսում գրնվողներ, այս պարմությունը ավստասանքների պարմություն է. «Դա սխալ էր, օսմանների կողմից թույլ վրված բացահայտ սխալ էր»:

Նամենարենք այն րները, որպեղ նրանք էինք ապրում, մեր րների հեպ

Այդ սխալը շար թանկ նարեց Աքշեհիրի վրա: Նին ժամանակների Աքշեհիրի նկարմամբ Քամիլի կարոպը և հայերի մասին հիշողությունները խառնվում են. «Սա առնարի և արհեսարների ոլորումը շար զարգացած քաղաք էր, շար ավելի առաջադեմ, քան Կոնյան և Աֆիոնը: Սա զարգացած էր, որովհետև հայերը այսպեղ էին ապրում»: Մեծ փարբերություն կար Աքշեհիրի և այն շրջապարող բնակավայրերի միջև, Աքշեհիրի հայերի և այն շրջապարող բնակավայրերում ապրող հայերի միջև. «Այս փարածքում, - ես մի հար եկեղեցի եմ րեսել Աֆիոնում,- ոչ մի րեղ սրա նման մեծ, շքեղ, հսկայական եկեղեցի չկար: Ինչու՞: Որովհետև Աքշեհիրի բնակչությունը իրենց մասնագիարություններում շար աշխարասեր, հմուտ և փորձառու էին ու շար հարուստ»:

Նայերի և թուրքերի Քամիլի համենարությունը հիմնված է նաև ասարիճանարար աճող քննադարության վրա. «Եթե համենարենք այն րները, որպեղ նրանք էին ապրում, մեր րների հեպ, նրանց աշխարարեղերը և մեր աշխարարեղերը, նրանց այգիները և մեր այգիները,

ապա վիթխարի փարբերություն կրեսնենք: Ինչպես Ամերիկայի և Թուրքիայի միջև: Դա շար հեփաքքի է: Ուզում եմ ասել, որ մի կողմից փողկապ կապող ու գլխարկ դնող մարդիկ էին, մյուս կողմից՝ բոկամաշիկներով ման եկողներ, մեծն անվաները»:

Իր հասարակության քննադատության հետ մեկտեղ Քամիլն իդեալականացնում է հայերի նկարագիրը: Քամիլի կողմից երկու հասարակությունների ընդգծված փարբերության ընդգծումը հաճախ ոչ թե հակամարտության, այլ համերաշխության պատկեր է ներկայացնում: Աշակերտներից մեկը, որոնց առասպելականացված հայ արհեստավորները «պաշտպանել և աճեցրել են», - Քամիլի պատյն էր: Վարպետը պատյն մաթեմատիկա էր սովորացրել: Նա մի արհեստավոր էր, որ այդ արհիներին կարկին, քանոն, չափիչ և անկյունացուցիչ ուներ: Պատյիլը միայն գրել և կարդալ գիրքեր, բայց դա նրա հայ վարպետն էր սովորեցրել: Փայր կրթելու ժամանակ նա կանգեցնում էր Ալի պատյիկիս. «Ալի, փղաս, լ՛ավ ես չափել, գծել, թղթի վրա նախագիծ, մի փոքր գծագիր կազմե՛լ ես»: Քամիլը հպարտ է, որ հայերից խոհարարական մշակույթ է սովորել. «Այդ մարդիկ հեքիաթային *մեղե* [ախորժաբեր միջոց] էին պարասարում Աբշեհիի *մեյխանսներում* [ռեստորաններում]: Շար համով ծածան, գայլածուկ, ծածանի ձկնկիթից և ուղեղից աղցան պարասարելը հայերից ենք սովորել»:


Մեղքի վիթխարիությունը, այդ մեղքի հեփանքով առաջացող ափսոսանքը այստեղ է թաքնված: Երբ հայերը, որոնք ապահովել էին Աբշեհիի գարգացումը, հեռացան, այն երբեք այլևս առաջվանը չհարձավ. «Տես, շար հեփաքքի բան էի նկարել, այս մարդիկ շար կիրթ էին: Երբ նրանք հեռացան, թուրքերը շվարել էին, թե ո՛վ պետք է մեր ասփճանները սարքի, մեր շորերը կարի, երկաթագործությամբ զբաղվի: Նրանք ոչ մի բան չգիրքին»: Քամիլի պարմածը բացաբորում է Աբշեհիի անցյալի նկարմամբ նրա կարտը և այսօր զգացվող ափսոսանքը. «Եթե այդ բաժանումը չլինեք, եթե մենք հայերի հետ միասին ապրեինք, հնարավոր է, որ Աբշեհիը առևրի և արդյունաբերության րեսանկյունից շար հարուստ, շար հաջողակ րեղ լինեք»: Եվ հնարավոր է, որ նույն բանը ճշմարիտ է ամբողջ Թուրքիայի համար. «Նարավոր է, որ եթե նրանք այստեղ մնային, Թուրքիան շար առաջադեն հասարակություն լինեք: Սա այն բաներից մեկն է, ինչի համար ես ափսոսում եմ»:

«Բաժանման» համար ցավող Քամիլի նման մարդկանցից բացի կան նաև մարդիկ, ովքեր ուզում են մոռանալ և թաքցնել «միասնությունը»: Ինչպես իր մանկության ժամանակ, Քամիլը շարունակում է հանդիպել նրանց, և շարունակում է չհամաձայնվել նրանց հետ: Երբ որոշվեց լքված եկեղեցին որպես թարրոն օգրագործել, րարիներով կուրակված փոշին պետք է մաքրվեք. «Երբ եկեղեցին լվանում էին, աշխարողներից մեկը ցանկացավ ջրի շիթն ուղղել պարերի վրա: Երբ ջուրը շիթում էին պարերի վրա, րարբեր նկարներ էին հայտնվում: Նրանք լվանում-սայիրակեցնում էին այդ պարերը, որպեսզի ոչ ոք չիմանա, որ հայերն ապրել են այստեղ: Կարո՞ղ եք պարկերացնել, թե ինչ ավերածություն էր սա»: Որքան Քամիլն ուրախ է իր մանկության ժամանակ «գրավորի համան» անունով հայրնի *համանի* վերականգման համար, նույնքան նա րխտը է սայիրակեցված-լվացված պարերի համար: Նա հույս ունի, որ ժամանակին որպես աղջիկների կրոնական, իսկ հեփազայում իր համար նախնական դարոց ծառայած շենքը նույնպես կվերականգնվի: Խոսելով զբաղեցված հայկական րների մասին, նա ասում է. «Գրողը րանի, մենք նույնիսկ չէինք մրածել դրանցից մեկ-երկուրը վերականգնելու մասին»: Վերականգնումը երեխաներից թաքցված գաղրնիքների բացահայրման ձևերից մեկն է, թաքնված պարմության համապարասխանեցումն է իրականությանը: Դա առնվազն հարգանքի նշան կլինի այն «համերաշխությանը», որ որոշ մարդիկ ուզում են մոռացության րալ, և դա Քամիլի համար չափազանց կարևոր է, այնպես, ինչպես 1915 թվականի հեռանալու ժամանակ հարևանների կողմից նրանց թողնված կարի մեքենան, որը փոխանցվել է սերնդե սերունդ. «Պատյիկիս հայրը: Նրանց կողքը Օնիկ անունով հարևան էր ապրում: Նա այնպես լավ, անկեղծ, մրերիմ հարևան էր, որ նրա հեռանալուց հեփո պատյիկիս մայրը՝ Փայթման գիշեր ցերեկ լաց էր լինում Օնիկի հեփուից: Այդքան շար էին միմյանց սիրում: Կա նաև շար հայրնի մի պարմություն: Երբ նրանք հեռանում էին, հույս ունեին, որ կվերադառնան: Նրանք իրենց շար իրեր հարևաններին պահպանությանն էին հանձնել: Կարի մեքենան, ձեռքի կարի մեքենան, որը իմ պատը սրացավ: Դա հեփո մորս կողմից պատյին հանձնեցին, մորս մայրը դա րարիներով օգրագործում էր: Այն հիմա մեր րանն է գրնվում: Դրա պես կարի մեքենա չկար»:

Ինչպես համակերպվել ֆանտոմային ցավի հետ

Արամը Ստամբուլում ծնված 50 տարեկան հայ բժիշկ է: Նոր կողմից պապը Բիթլիսից է, տատը՝ Կայսերիից: Մայրը կաթոլիկ է, ծագումով՝ Իտալիայից: Մի շարք պարճառներով Արամը սերտորեն ներգրավվել է թուրքական հասարակության մեջ: Որպես նախկին ազգային հավաքականի մարզիկ՝ հայրը հանրահայտ հասարակական դեմք է: Իրեն ձախակողմյան համարող Արամը հիմնականում հաճախել է ոչ հայկական դպրոցներ: Ամուսնացել է երկու անգամ, երկու դեպքում էլ՝ թուրք մահմեդական կնոջ հետ:

Իր ընտանիքի պարմության մասին Արամը քիչ բան գիտի: Նոր կողմից նրա տատի հայրը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գորակոչվել է և չի վերադարձել: Նոր կողմից տատն ամուսնացել է փոքր հասակում, տարիքով մեծ մարդու հետ, մորավորապես այն ժամանակ, երբ նրա հայրը գնացել էր պատերազմ: Ընտանիքի անդամներից շատերն են զոհվել 1915



թ., սակայն Արամի պապը և փապը Բիթլիսից Սրամբուլ գաղթելով փրկվել են: Սրամբուլում նրանք շարունակում էին խոսել քրդերեն: Արամն ասում է, որ իր մանկության փարիներին անցյալի մասին չէր խոսվում. «Այդ թեմաներն արգելված էին մեր մանկության փարիներին: Դրանց մասին չէր խոսվում փառք: Նրանք ասում էին, որ մենք ունևոր էինք: Նրանք թաքցրել են ոսկով լի թիթեղյա փուփերը, որոնք իսպառ օգտագործվել են դժվար ժամանակներում»: Արամն ասում է, որ անցյալի մասին խոսելը հնարավոր դարձավ միայն վերջին փարիներին. «Մենք երբեք չենք ուսումնասիրել մեր հայկական կողմը: Մեր հասունանալու փարներին նման բաներ անելը համարվում էր ազգայնամոլություն: Նանգամանքները շար ավելի վրանգավոր և բարդ էին: Այն փարիներին համենայն դեպս հայկական հարցն այնպես չէր քննարկվում, ինչպես այժմ»:

Նոր դիրքի և թուրքական հասարակության մեջ սերտորեն ներգրավված լինելու շնորհիվ Արամի ընդանիքն այլ հայերի համեմատ ավելի լայն ու բազմազան հասարակական կապեր ուներ: Միաժամանակ Արամը խոսում է, թե ինչ գնով է հայը Թուրքիայում հասնում հասարակական ճանաչման. «Նա [հայրը] զգույշ մարդ է եղել: Եթե ներկայացնում ես Թուրքիան մարզական ասպարեզում և հայ ես, քո անցյալի առնչությամբ պետք է զգույշ լինես: Օրինակ՝ նա երբեք չի գնացել Նայասարան: Նավանաբար չի ենթարկվել բացահայտ խարականության, սակայն, կարծում եմ, դա իր գինն ուներ»:

Արամը հիշում է իր հայրիկի մի քանի պարմություններ, որոնք բացահայտում են ազգությամբ հայ մարզիկ լինելու դժվարությունը. «Երբ նա հաղթում էր մրցամարտում, թերթերը գրում էին. «Մեր մարզիկը հաղթեց մրցամարտում»: Բայց երբ պարտություն էր կրում, գրում էին. «Մեր հայ ծագումով մարզիկը պարտվեց մրցամարտում»: Կիպրոսի դեպքերի ժամանակ նա պետք է մրցեր հույն մարզիկի հետ: Ռազմական հարցերով կցորդն ասաց. «Մեզ խայրառակ չանես, դու պետք է հաղթես»: Մրցամարտի ժամանակ հայրս բռունցքի հարված ստացավ, նրա հոնքը վնասվեց: Ստացավ մեկ այլ հարված, մյուս հոնքը նույնպես վնասվեց: Երբ վնասվում են երկու հոնքերը, բժիշկները սովորաբար դադարեցնում են մրցամարտը: Նա ասաց. «Ես շարունակում եմ»: Եվ մրցամարտում հաղթեց երկու արյունահոսող հոնքերով»:

Ո՞րքեղից ես: Անունդ շար արքասովոր է

Արամը պարմում է Թուրքիայում ապրող այն հայի կենսափորձի մասին, ով 1915 թ. հետո երրորդ սերնդից է. «Երբ հարաբերություն ես հասարակում մեկի հետ, խորականություն չես զգում: Բայց կարող ես ճնշում զգալ դրսից: Պատեր, որոնց միշտ որևէ փեղ բախվում ես: Օրինակ՝ մեկնում ես մեկ այլ քաղաք, ճանապարհին ինչ-որ մեկը հարցնում է անունդ, և պետք է բացատրես: «Որքեղի՞ց ես» կամ «անունդ շար արքասովոր է»: Ես Թուրքիայի Նանրապետության քաղաքացի եմ, ի՞նչ կպատահի, եթե ասեմ ես հայ եմ»:

Ի փարբերություն Թուրքիայում հայերի մեծ մասի՝ Արամը, բժշկի կրթություն ստանալով, հաջողության է հասել. դարձել է քաղաքացիական ծառայող և կանաչ անձնագիր է ստացել, որը տրվում է միայն բարձրաստիճան քաղաքացիական ծառայողներին: «Նրանք գերադասում են, որ պաշտոնավար անձ չլինես: Կանաչ անձնագիր ունենալն ինձ համար շար կարևոր էր: Ես ասում էի՝ նրանք ինձ նույնպես այն պարտավոր են փալ»:

Միշտ պետք է սիրալիր լինես

Սրամբուլում ծնված և մեծացած Արամն աշխարհ է Անապոլիայի հեռավոր վայրերում, որտեղ, չնայած հայերի հարևանության հիշողությանը, ժամանակակիցներից քչերն են հանդիպել կամ աշխարհել հայերի հետ. «Նրանք առաջին անգամ էին

պարասարվում ընկերանալ հայի հեք: Ես որևէ անախորժության չեմ հանդիպել: Բոլորը շար բարյացակամ էին: Մակայն դա, անկասկած, կախված է նաև քեզնից: Դու գիպես, որ դու նա ես, ով միշտ պետք է սիրալիք լինի»: Անաբուխայում որպես բժշկ աշխատելիս Արամը հանկարծակի է եկել՝ հաղիպելով մի կրոնափոխ հայի. «Այնպեղ մի մարդ կար, որի անունը Մեհմեդ էր, նա քուրդ էր: Նա մեծ հեղափոխություն էր ցուցաբերում իմ հանդեպ: Մի օր պղնձյա սկուրեղ բերեց, որի հակառակ երեսին հայերեն փորագրություն կար: Ես հասկացա, որ նրա մայրը հայուհի է եղել»:

Ինչպես բոլոր հայերի համար, 1970-1980-ականներին, երբ ԱՄԱԼԱ-ն մահապարժի էր ենթարկում թուրք դիվանագետներին, Արամի համար դժվար էր. «Նրանք զանգահարում էին քունս և հայեղում կամ անիծում: Զանգահարողը չի ճանաչում քեզ, իրականում քո անունը չի տալիս: Դու համարվում ես պարասխանարու որևէ սխալի համար: Ես չեի համարձակվում ամուսնանալ այդպիսի մթնոլորտում»: Նայ կնոջ և մահմեդական փղամարդու ամուսնություններ պարահում էին, հակառակը՝ հազվադեպ: Այդ ժամանակաշրջանում Արամն ամուսնացավ իր թուրք գործընկերուհու հեք: Նրա զոքանչը, մինչ գույզը բժշկի պարականությունները կարարելու համար կմեկներ Անաբուխա, խնդրեց Արամին պարասխանել մեկ հարցի. «Որդիս, դու կկարողանա՞ս պաշտպանել իմ աղջկան»:

Արամի կյանքում ամենադժվարին փորձությունները նրա պարտադիր զինվորական ծառայության ժամանակ էին: Թեև նա հանձնել էր քննություն, որը հնարավորություն էր տալիս ընտրելու իր ծառայության վայրը, նրան այդ իրավունքը չտրվեց, քանի որ քրիստոնյաներն անվտանգության սպառնալիք են համարվում: Նա հիշում է, որ հրամանարար սպային հայտնել է իր հիասթափությունը. «Ես կարծում եմ, որ դուք անարդար եք: Նենց սկզբից, հենց որ սկսում եմ կարարել իմ զինվորական պարականությունները, դուք ասում եք. «Դու մեզնից մեկը չես»»:

Արամը քննադարարար է վերաբերվում նաև հայ համայնքին: Դա, թերևս, պայմանավորված է այն հանգամանքով, որ նրա մայրը միշտ իրեն բացառված էր զգում. «Կա այլ ազգին պարկանելու հեքրևանք, հայերեն ասած՝ այլություն՝ «նա թուրք է»: Մյուս կողմը նույնն բանն է անում, ապրում է նույն զգացմունքներով, նույնպես բացառում է»: Նրա վեճը ազգային փոքրամասնությունների հոգեբանության շուրջ հասկանալի է. «Այն կառուցվածքը, որը միշտ բացառվում է, պետք է ինքն իրեն պաշտպանի: Նրանք, ովքեր այդպես են ապրում, դառնում են պահպանողական, վախեցած: Նրանք չեն ներքաշվում քաղաքականության մեջ,



ասում են. «Թող նրանք ձեռք չտան ինձ, թող են չներգրավվեն: Եկեք չպակասեցնենք, չոչնչացնենք, չկորցնենք մեր մշակույթը»: Մա է վախը: Ե՛րբ է սկսվում ազգայնամոլությունը, ե՛րբ է դա իրոք վերաբերում մշակույթի պաշտպանությանը՝ դժվար է ասել: Յուրաքանչյուր դպրոց ունի իր միությունը: Նրանք միշտ Իշխանաց կղզիներն (Princes Islands) են գնում, որպեսզի նույն փարիքի աղջիկները և փղաները միասին լինեն: Բնականոն է թուրքերին այլ համարել, եթե ապրում են նրանց մեջ»:

Թուրքիայում ապրող շար հայերի պես Արամն ազգականներ ունի արտասահմանում: Եթե ոմանք 1915-ից փրկվածներն են, մյուսները

Թուրքական Նանրապետության փարիներին քրիստոնյաների դեմ կիրառված խարականության զոհերն են: Օրինակ՝ Իրալիայի քաղաքացի նրա քեռին Իրալիա է մեկնել 1960-ականներին, քանի որ արտասահմանյան քաղաքացիություն ունեցող մարդկանց համար Թուրքիայում դժվար է եղել աշխատել: Ի փարբերություն իր շարք ընկերների և ազգականների՝ Արամը երբեք չի մտածել Թուրքիան լքելու մասին: Այն պարկանելիության զգացումի պարճառով, որ զգում է իր սոցիալական ցանցի և շրջապարի նկատմամբ. «Մեծ թվով փոքր հարաբերությունները կապ են սրելով: Դու միշտ ապրում ես նույն փարածքում: Զբոսնելել Շիշլիում՝ կարող եմ պարզապես մի բուռ ընկույզ վերցնել խանութից: Իմ մանկության շարք ընկերներ իմ հայրիկի մանկության ընկերների երեխաներն են: Այս համայնքը այլ զգացումնք է: Ես ապրում եմ իրականացված երազների զգացումով: Արմափավորվել որևէ փեղ: Այդ է պարճառը, որ չեմ գնում արտասահման»:

Նա ընդգծում է, որ թուրքերը և հայերը նույն մշակույթն ու կապվածությունն ունեն փեղի հեփ. «Ես չեմ կարծում, որ փարբերվում եմ իմ մշակույթով: Որովհեփս պարկանում ես նույն հողին: Դու պարկանում ես այս փեղին: Եթե անգամ սպանել եք միմյանց, եթե անգամ չեք նայում միմյանց դեմքին, նույն բաներն են ձեզ երջանիկ դարճնում»:

Արամը մի հուզիչ անեկդոտ է պարմում, որն արտահայտում է Թուրքիայում ապրող հայի՝ անցյալի հեփ հաշտվելու զգացումները. «Կիևը և ամուսինն անհաշտ են և պարրասփովում են բաժանվել: Մյուս օրը կինն ընկերուհիներին ասում է. «Մենք դրոշել ենք ջրաժանվել»: Երբ ընկերուհիները հարցնում են, թե ինչու՞, պարասխանում է. «Նա լավ գլուխկոնճի է փալիս»: Երբ հարցնում են, թե դա ի՞նչ նշանակություն ունի, պարասխանում է. «Ես ուզում եմ հաշտվել»: Ինչպե՞ս կարելի է մոռանալ ջարդված ձեռքի ցավը: Դա կարելի է մոռանալ ներելու դեպքում: Մի բան է քննարկել, մի այլ բան՝ հարցականի փակ դնել, սակայն, ի վերջո, պեփք է սիրես: Իսկ նրանք, ի պարասխան, պեփք է քե՛զ սիրեն»: Ներելու, սիրելու և պարասխան սեր պահանջելու Արամի մփածումները կարևոր նպաստ են Թուրքիայում հաշտության մփածելակերպի ձևավորման համար:

Մարդկանց և ընտանիքի գաղտնիքների մասին

Մեթեն 24-ամյա փղամարդ է, փեսագրման մի նախագծի է մասնակցում, որը նվիրված է ընտանիքի հետ նրա հարաբերություններին, անցյալին և նրա բազմազան ինքնություններին: 2009 թ. մարտից սկսած նրա փանը փեղադրված փեսախցիկը դարձել է ընտանիքի մի մասը: Մեթեն հավիշտակված ձայնագրում է խոսակցություններն ընտանիքի անդամների հետ և նրանց միջև. խոսակցության ժամանակ փեսախցիկը միանում է: Նախագծին միանալու դրդապատճառները Մեթեն այսպես է նկարագրում: «Դա շատ ինքնակենսագրական նախագիծ է: Դա այն հարցի մասին է, թե ով եմ ես: Ես հարցուփորձ եմ արել հորս. իմ փղամարդկայնությունը, իմ փարբեր ինքնությունները...»:

Վաղ ուսանողական փարիքից սկսած Մեթեն վերահայտնագործել է իր ընտանիքի անցյալը՝ սեփական ինքնության հետ համակերպվելու համար. «Իմ նախնիների արմատները շատ խճճված են, և ես շատ քիչ բան գիտեի այդ մասին: Երբ երեխա



էի, դա կարևոր չէր թվում, բայց հիմա ուրիշ է»: Խոսելով իր փորձի, մոր և հոր հետ՝ նա հայտնաբերել է ընդհանրապես անցյալը, որի մասին նախկինում շատ քիչ գաղափար ուներ: Նրա խոսքերով՝ անվարժությունը գալիս էր նրա դաստիարակությունից. «Նրանք մոռացել էին, ուզում էին մոռանալ, իբր ոչ մի վախենալու բան չկա, որովհետև մենք թուրք ենք: Մենք բանվոր, ծախ կամ աղքատ չենք, մենք թուրք բուրժուա ենք»: Սփիպել ընդհանրապես անդամներին խոսել անցյալի մասին՝ նշանակում է մի կողմ նետել վերջերս ձեռք բերած հարստության կեղծ դիմակը և անկեղծորեն արտահայտել փառաստանները:

Ինչո՞ւ պիտի խելոք, գեղեցիկ, հարուստ ընդհանրապես փողոցների պես խառնի իր ապահով աշխարհը: Մեթեի համար դրա պարզապես դարձի բարձր դասարաններում նրա սեռական ինքնության հետ կապված ճգնաժամն է եղել: Նա ցնցված էր, երբ հայտնաբերեց, որ մի քանի օրվա է հենց իրեն: Չնայած ճգնաժամը շատ ցավոք էր, դա ազատեց նրան և սփիպելը բացահայտել իր ինքնության այլ՝ ընդհանրական գաղափարների հետ կապված կողմերը:

Մեթեն, որ դաստիարակվել է որպես միջին դասի փարսեռ թուրք, իր ընդհանրապես փողոցների հայտնաբերեց «թաքնված» հայեր, քրդեր և արաբներ: Նա խնդիր ունի իր սեռական ինքնության հարցերը կապել Թուրքիայում փրկող վախի և լռության մարմնաված այլ ինքնությունների հետ:

Ինչի՞ց է այս մուգ մաշկը

Մեթեն ծնվել է Սփամբուլում և մեծացել այն թաղամասերում, որտեղ ապրում էին միջին դասի ներկայացուցիչները: Քանի որ նա հարուստ ընդհանրապես միակ գավակն էր, ծնողները նրան պաշտում էին, և նա մասնավոր թանկ դարձրեց էր հաճախում: Նա գիտեր, որ իր ընդհանրապես արաբական արմատներ ունի, որովհետև իր հասակավոր ազգականները, այդ թվում մոր կողմից փոփոխվող արաբներն էին խոսում: Չնայած ջահել սերնդին արաբներն էլին սովորեցրել, Մեթեի խոսքերով, նրա հայրը արաբական մշակույթը հպարտությամբ էր կապում օսմանյան անցյալի հետ. «Մեր ընդհանրապես կարծիք կա, որ մեր ծագումը գալիս է սուլթան Մուրադ III-ից: Իմ հայրը պաշտում է օսմաններին»: Մակայն ընդհանրապես ծագումով ոչ թե Օսմանյան կայսրության կենտրոն հանդիսացող Սփամբուլից է, այլ Նարավարենյան Անատոլիայում գրավող Սիիրթ քաղաքից: Մանկության փորձերին Մեթեն միաժամանակ ընկալում և ժխտում էր դա. «Տարրական դպրոցում ինձ ծաղրում էին մաշկիս մուգ գույնի համար՝ անվանելով «կեղտոտ քուրդ»: Ես գիտեի, որ մենք Սիիրթ քաղաքից ենք, սակայն ամաչում էի դրանից: Ինձ համար ամենափառանքավորը հարցն էր՝ «դու որտեղի՞ց ես», որին արագ պատասխանում էի՝ Սփամբուլից:

Մեթեի անհանգստության պարզապես Նարավարենյան Թուրքիայի քրդական լինելն էր: «Դու արևելքի՞ց ես». իրական հարցն այս էր՝ որտեղի՞ց է այս մուգ մաշկը: Ու՛մ հետ է իրենց երեխան ընկերություն անում: Որտեղի՞ց են նրանք եկել, հո կլան կամ ավազակ չեն: Ծնված լինելով ՔԲԿ-ի ակտիվացումից հետո՝ Մեթեն փորձում է առանձնացնել իրեն հարավ-արևելքից. «Ես նույնականացրի դա, քանի որ ծնվել եմ ահաբեկչության, բանդիտիզմի, ՔԲԿ-ի ժամանակ: Այնտեղ վար բաներ են տեղի ունենում, բռնություններ, բայց ես դրա հետ ոչ մի կապ չունեմ»:

Դեռևս ընդհանրական նախագծի վրա աշխատելիս Մեթեն սփիպել էր հաշտվել այն փաստի հետ, որ իր ընդհանրապես ոչ միայն արաբական, այլև քրդական ու հայկական ծագում ունի: Նրա խոսքերով՝ հայրը խուսափում էր քննարկել սեփական հոր քրդական ծագումը. «Ես գամփոթ (ոչխարապահ շներ) ունեմ մեր ամառանոցում: Երբ դեռ դպրոց էի գնում, պահակներից մեկն ինձ մի անձանոթ լեզվով բան ասաց, որը չհասկացա: Նա ասաց. «Դու քուրդ ես, ինչպե՞ս կարող ես ասածս չհասկանալ»: Մարդիկ մեզ անվանում էին «Սիիրթի քրդեր»: Ես հորս հարցրի դրա մասին: Նա այնպես արձագանքեց, որ չհասկացա՝ դա ճամբարությունն է, թե՛ ոչ: Այդ թեման փրկելու համար փակվեց»: Քրդական ծագումը ոչ միայն ազգային, այլև նույնքան

դասակարգային խնդիր է: Մեթեն շշուկներ է լսել, որ իր պապը դռնապահ է եղել, սակայն հայրը ժխտել է դա: Նա չի կարողանում հասկանալ նաև, թե Սպարմբուլ փեղափոխվելու ժամանակ դեռ փոքր եղած իր պապն ինչպե՞ս է կարճ ժամանակահատվածում հարստություն կուրակել: Ընտանեկան պարմության որոշ հանգամանքներ լռության են մատնված: Մեթեն բարկանում է հոր վրա. «Մենք հեղուկ ենք նորություններին, դու երբեք չես ասել, որ մենք նաև քուրդ ենք; Ոչ բոլոր քրդերն են փզեղ, դաժան ու ահաբեկիչ»: Նրա խոսքերով՝ «նրանք էլ կարող են մարդ լինել»: «Իմ հայրը ստորադասի զգացում ունի: Նրանք մեծացել են՝ ոչնչացնելով իրենց քրդական էությունը, ուրնահարելով իրենցից ցածր կանգնածներին»: Միաժամանակ Մեթեն հասկանում է ընտանիքի՝ երեխաներին պաշտպանելու ցանկությունը. «Ես վիճում էի հորս հետ, բայց հասկանում էի նաև, որ նրա նպատակներից մեկն էլ ինձ պաշտպանել էր: Երբեմն ես ըմբոստանում էի նրա դեմ և ուզում էի վիրավորել նրան»: Մեթեի հիմնական խնդիրը, վերջ է վերջո, փոխադրվածության և առարկայական վախի հակասությունն է. «Դուք չեք կարող պարկերացնել, թե ինչպես մկանուր, խիզախ, ինքնավստահ փղամարդը կարող է այդքան վախենալ շիրակությունից և ճշմարտությունից: Ես փորձում եմ հասկանալ նրա էությունը, բայց նա դիմադրում է»:

Մեթեի ընտանիքի մեծագույն գաղտնիքը և վախի ամենամեծ աղբյուրը նրանց հայկական ծագումն է: 1915 դեպքերի մասին քննարկումն առաջին անգամ նա լսել է դեռևս դպրոցի ավագ դասարաններում. «Երբ առաջին անգամ լսեցի դրա մասին, մտածեցի՝ կարո՞ղ էր դրա նման բան փեղի ունենալ: Ի՞նչ ցեղասպանություն: Դա նացիստներն են արել: Նրանք փորձում էին դա նմանեցնել Նոլդոստրին, որովհետև մենք բոլորս գիտեինք նացիստների մասին և ուրիշ ոչ մի բան»:

Նրա աչքերի գույնը մուգ կապույտ էր, մանուշակագույն

Իր ծրագրի վրա աշխատելիս Մեթեն գիտակցեց, որ իր ընտանիքը հասկանալու բանալին իր մոր հայրական կողմի փոփոխիկ հայությունը թաքցնելու փաստն է: Իր փոփոխիկ հետ ունեցած գրույցներից նա ավելի շատ բան իմացավ Սիլվայի մասին, որի անունն իր պապի հոր հետ ամուսնանալուց հետո փոխել էին Սուբրանի: Նրա փոփոխիկ հիշում է այն խորհրդավոր դիպվածը, երբ Սիլվան որբացավ Սիիրթում. «Աղոթողների առաջնորդը մզկիթում քարոզում էր. «Մենք պետությունից լուր ենք սրացել, այդ անհավասարները մեզ սպանելու են: Մենք պետք է սպանենք նրանց, քանի դեռ նրանք մեզ չեն սպանել»: Նրանք էին այս ասեկոսները փարածել: Մահմեդականները կտորոտված սկսեցին ուրբաթ օրը մզկիթից դուրս գալուց հետո»: Զաբելը ամուսնացած կին էր, որի ամուսինը և եղբայրները սպանվել էին: Նրա հետ միայն իր աղջիկն էր մնացել: Մայրական կողմից Մեթեի պապը ամուսնացած էր մի արաբ կնոջ հետ, բայց փոքր չուներ: Չնայած նրա ընտանիքն ասում է, որ այդ մարդը Զաբելին ու նրա դուստր Սիլվային վերցրել է մարդասիրական նկատառումներով, Մեթեն կասկածում է նրա ազնիվ շարժառիթներին, երբ իմանում է, որ նա շուրջով ամուսնանում է աղջկա հետ. «Ես մտածում էի, որ Սիլվայի մայր Զաբելը սիրավեպ է ունեցել Սիլվայի ամուսնու հետ: Կնոջ համար նա շատ ջանք էր ցուցնում: Նրանք հավիշտակությամբ էին խոսում իմ փոփոխիկ մոր գեղեցկության մասին: Նա յուրահավուրդ աչքեր է ունեցել, մուգ կապույտ, մանուշակագույն. Մեր ընտանիքում միշտ խոսվել է անհավասարների գեղեցկության մասին»:

Նայության թեման Մեթեի պարմություններում զուգորդվում է սեռային խնդիրների հետ: Մեթեն պնդում է, որ Սիլվայի մասին պարմությունը հիշելու գլխավոր պարմաններից մեկն այն է, որ Զաբելը այդ պարմությունը բազմիցս պարմել է իր հարսին՝ Մեթեի փոփոխիկին: Մեթեն դա համեմատում է փղամարդկանց վախկոտ լռության հետ. «Մայրիկիս փոփոխիկ մայրն իր հարսին՝ փոփոխիկ միշտ ասում էր, որ «Նրանք դա արել են մեր հանդեպ, սպանել են եղբայրներին, ոչնչացրել են մեզ»: Կանայք նստում խոսում էին այդ մասին, և դա մնում էր նրանց մեջ: Գուցե երեխաները կարող էին դա լսել: Բայց մայրս չի հիշում, որ հայրս այդ մասին երբևէ բան ասած չի: Նայ մայր ունենալը նրան զոհ է դարձնում, սակայն նա երբևէ չի ուզեցել զոհի կարգավիճակում լինել: Տղամարդիկ լուր են: Ես փորձում եմ խախտել այդ լռությունը»: Նույնիսկ այդ պարմությունները լսելուց հետո, սակայն, պարտադիր չէ, որ ընտանիքի կանայք ցավակցեին հայերին. «Իմ մորաքրոջ ամուսինը չգիտեր, որ իր կնոջ փոփոխիկ հայ է եղել:

«Եթե ես նրան ասեի, ու մի օր մենք կովեհիք, նա ինձ «հայի սերմ» կանվաներ»: Իմ փայրը վեճերի ժամանակ ամուսնուն ասում էր. «Ախ, Օսման, դու հայի արյուն ունես»:

Բոլոր դեպքերում Մեթեն կարծում է, որ ծրագիրը վերափոխում է իրեն և իր ընտանիքը. «Ես բանաստեղծություններ եմ գրել: Ինչո՞ւ եմ ես դա զգում: Ինչպե՞ս կարող է ամբողջ ընտանիքից և ոչ մեկն այդ մասին չմտածել: Ես այնքան վախեցած էի, որ երբեմն մոռս հետ միասին լաց էի լինում: Մայրս գրել էր Սիրիայում պարտաստված արաբական մակագրություններով ոսկի մեքենադրամը, որը նրա փայրը մահից առաջ իրեն էր տվել: Այդ օրերին նա երգում էր արաբական, քրդական և հայկական երգեր»: Մեթենն նույնիսկ հաջողվել է ձայնագրել իր հոր պատմած մի միջադեպ. «Երբ նա ծառայում էր Իսկենդերունում, նրա համազգեստի ուսի կողմում խաչի նման մի նշան կար: Մի անգամ ընկերների հետ քաղաք եկած ժամանակ մի փարեց կին կառչել է նրա ուսից՝ վաղ թուրքերենով ասելով. «Տուր իմ խաչը... Եթե միայն դու իմանայիր, թե ի՞նչ են արել նրանք մեզ հետ»: Մեթենն հայտնաբերել է նաև, որ իր հոր ընտանիքում միայն Սիլվան չէ, որ այդ ընտանիքում առնվազն մի հայ հարս էլ կա:

Մելինը նկատել է Նրանյր Դինքի մահվանից հետո իր ծնողների մեջ կատարված փոփոխությունները. «Նրանյր Դինքը շար կարևոր է իմ մոր և հոր համար: Նրանք շար փոփոխված էին և լիովին փոխել էին իրենց վերաբերմունքը իմ նկատմամբ: «Եթե հնարավորություն ունես, գնա արտասահման,- առաջին անգամ ասացին նրանք,-մենք չենք կարող շար երկար մնալ այստեղ»: Մինչև Նրանյր Դինքը ես «հայկական ծագում ունեի», իսկ հիմա ես հայ եմ: Քանի որ քաղաքական համապետքսը փոխվել է: Առաջին անգամ իմ հոր մեջ նկատել եմ այս կարգի արձագանքներ. «Ես հարկեր վճարող քաղաքացի եմ»: Կյանքում առաջին անգամ ես նկատեցի նրա զայրույթը: Երբ հիմա խոսում ենք, նրա աչքերը արցունքներով են լցվում, և նույնիսկ ասում է. «Կարծում ես՝ ես պետք է վերականգնեմ իմ ազգանունը»: Երբ ավելի երտասարդ էի և ՔԲԿ-ի դեպքերն էին տեղի ունենում, նրանք հակաքրոդական դիրքորոշում ունեին: Նհմա քրդերի նկատմամբ նրանց վերաբերմունքը փոխվել է: Դարձել են փոքրամասնությունների իրավունքների պաշտպան, ինչը նախկինում սովորական էր թվում, հիմա դարձել է վիրավորական»:

Մելինը նույնպես փոխվել է, թեպետ նրա նոր, ավելի սերտ կապն իր հայկական ինքնության հետ զուգորդվում է իր թուրքական ինքնության նկատմամբ ծանոթ մեղքի զգացումով: Մելինի պատմությունը մի խնդիր է առաջացնում. արդյո՞ք հնարավոր է ինքնությունը պահպանել՝ առանց այլ մարդկանցից մեկուսանալու. «Նրանյր Դինքի մահը ստիպեց ինձ ամոք զգալ, որովհետև նա այն մարդկանցից էր, ովքեր փորձում են իմ նմաններին մոբիլիզացնել: Երբ նախկինում կարդում էի նրան, սովորաբար ասում էի. «Մա ինձ չի վերաբերում, որովհետև ես մաքուր հայ չեմ»: Ես քաղաքականությամբ չէի զբաղվում: Նրանյր Դինքի մահն ինձ ստիպել է ավելի շար մտածել քաղաքական իրադարձությունների մասին և աշխարհին ավելի բաց հայացքով նայել: Ես սկսել եմ հայերեն սովորել: Երբևէ հայ տղայի հետ չեմ հանդիպել: Նրանյր Դինքի մահվանից հետո ծանոթացա Մերհարի հետ: Նա խոսում էր Դինքի մասին, և այդ ամենը սկսվեց հայ լինելու խնդրի շուրջ: Ես ինձ մեղավոր եմ զգում, որովհետև երջանիկ եմ, որ նա հայ է: Ես արում եմ ծայրահեղ ազգամոլության բոլոր դրսևորումները: Ինձ թվում է, որ պատկանելության զգացման բացակայությունը միշտ մի տեսակ թերության նշան կմնա ինձ համար»:

Երեք բևեռները: Ի՞նչ ենք մենք , եղբա՛յր

Այհանը ծնվել է 1979 թվականին Սասունի Բաթման գյուղում: Նրա նախապապը վերապրել է 1915 թվականը, ապրել է քղական ցեղերի մեջ և ընդունել է մահմեդական անուն: Այհանի սերնդում իրենց նախնիների արմարների մասին վկայող միակ խորհրդանիշը իրենց ինքնության քարտերում «քրիստոնյա» բառն է: Սա Այհանի կորցրած հայկական ինքնության հաստատման պարմությունն է: Դա անելու համար «երկրագնդի վրա արտահայտման միակ միջոցը քրդերենն է» ընկալող Այհանը պեպք է գար այն ընթրմանը, որ նա ապրել է երեք բևեռների հապման կետում:

Փիլիս

Տայության հեք կապված Այհանի միակ հիշողությունը իրենց գյուղի հովիվների խաղացած «մրջնախաղն է»: «Դաշտային մրջյունները մեծ և կարմիր են: Մնացած մրջյունները՝ փոքր ու սև: Երեխաները կռվեցնում էին դրանց: Նրանք դաշտային



մրջյունների ուրբերը պոկում էին, որպեսզի սև մրջյունները կարողանային սպանել դրանց: Դաշտային մրջյունները *Ֆիլլա*-ներն էին: *Ֆիլլա* նշանակում է քրիստոնյա: Դա ամրացել է իմ հիշողության մեջ»:

1982 թվականին Այհանի հորեղբայրներից մեկը գաղթեց Սփամբուլ, հաստատվեց Քուրտուլուշում և խանութ բացեց: Նրա հայրը շուրով հեփեսեց եղբորը, և որոշ ժամանակից Այհանն արդեն այդ քաղաքում էր: Տեղափոխությունը ոչ միայն նոր փարածք մտնել էր նշանակում, այլև՝ նոր լեզու սովորել: «Մարդիկ փողոցներում թուրքերեն էին խոսում: Երբ գնում ես խանութ՝ թուրքերենով ես «հաց» ասում: Այսպիսով դու պետք է թուրքերեն սովորես»: Հայրը ցանկանում էր Այհանին հայկական դպրոց ուղարկել, բայց նրանց տվեցին պահանջվող «փաստը զույգ կիսագուլպաների, քսան զույգ ներքնագգեստի, առօրյա և սպորտային կոշիկների ցանկը», և քանի որ Այհանի հայրը չէր կարող գնել ցանկում թվարկված բոլոր իրերը, Այհանն ընդունվեց երկու փողոց վերևում գտնվում պետական դպրոց:

Խաչակնքվելիս ես շփոթում էի աջն ու ձախը

Այհանը չէր կարող հայկական դպրոց հաճախել, բայց ծնողները նրան ուղարկեցին ցածր եկամուտ ունեցող հայ ընկերակցների երեխաների համար նախատեսված Քընալըաղա հայկական ճամբար: Հիմա էլ նա մեկ այլ լեզվի հետ բախվեց. «*Շե* նշանակում է թեյ: Ես այն իմ մտքում կպահեմ, հայերեն կսովորեմ»: Ճամբարում զարգացնում էին նաև կրոնական հմտություններ, որոնց Այհանը պետք է հարմարվեր. «Մենք աղոթում էինք ուրելուց առաջ, բայց սա ուրիշ աղոթք էր, և մենք խաչակնքվում էինք վերև, ներքև, աջ և ձախ: Ես միշտ շփոթում էի աջն ու ձախը: Սկզբից ա՛ջ, թե՛ ձախ: Ես միշտ նայում էի ինչ որ մեկին և անում այնպես, ինչպես նրանք էին անում»:

Քրդեր փանը, թուրքեր դպրոցում և հայեր ճամբարում

Այհանը կրոնի դասերի դժվարություն ուներ նաև դպրոցում. «Ես փորձում էի հիշել աղոթքները միջին դպրոցում: Ես փորձում էի դրանք գրի առնել, բայց չէի կարողանում հիշել արաբական բառերը: Մայրս սովորաբար աղոթում էր, բայց նա երբեք չէր ասում, որ մենք նույնպես պետք է աղոթեինք: Չնայած մեր ինքնության քարտերում գրված էր, որ մենք քրիստոնյա ենք, հայրս երբեք չէր ասում, որ պետք է եկեղեցի գնանք»: Լեզուների և ինքնությանների միջև գտնվող Այհանը և իր հորեղբորդիները, միմյանց հետ կատարում էին. «Ի՛նչ ենք մենք, եղբա՛յր»: Նրանք իրենց ինքնությունը սահմանում էին ըստ համարեքստի. «Առաջին՝ մենք քուրդ ենք փանը, որպես խոսում ենք քրդերեն: Երկրորդ՝ թուրքեր ենք դպրոցում, որպես թուրքերեն ենք խոսում: Եվ երրորդ՝ հայ ենք ճամբարում, որպես խոսում ենք հայերեն: Մենք հայ ենք ամռանը, թուրք՝ ձմռանը դպրոցում և քուրդ՝ փանը: Մենք մեզ ամենից շատ հարմար ենք զգում քուրդ լինելով»:

Երբ նա համալսարանում քրդական շարժում նկատեց, ի հայտ եկավ նրա հայկական ինքնությունը. «Առաջին բանը, որ պետք է անեի՝ քրդական ինքնությունն հաստատելն էր: Ապա ես սկսեցի հաստատել իմ հայկական ինքնությունը: Հասկացա, որ ինքնության խնդիր ունեմ: Հայից ծուլվել էի քրդերին, քրդից ծուլվել էի թուրքերին»: 1915 թվականին ծուլումը կարծես գոյարկելու միակ գինն էր. «Այս իրադարձության պարճառով ես ինձ մի կողմից քուրդ եմ համարում, մյուս կողմից՝ ոչ, բայց չգիտեմ, թե արդյո՞ք այս կորուստը կարող է փոխհատուցվել»:

Քուլեջում հայերեն սովորելու և իր ընկերակցի պարմությունն ուսումնասիրելու Այհանի ջանքերն այս կորուստը փոխհատուցելու փորձ է: Նրա ուսումնասիրությունը նրան աշխատելու է «փանում» հայկական դպրոց, ինչը գործնականում վերածվում է

ծրագրի և նոր անուն ձեռք բերելու: «Ես գնացի դպրոց և ասացի, որ հայ եմ, հայերեն չգիտեմ, բայց ցանկանում եմ աշխատել հայկական դպրոցում»: Տնօրենը նայեց ինձ և ասաց. «Լավ է, որ այդպիսի ցանկություն ունես»: Նա հարցրեց, թե ինչ անուն են ինձ փոխել մկրտության ժամանակ: Ես փարսանվեցի, քանի որ իմ ընտանիքից և ոչ մեկը մկրտված չէր: Նա ասաց. «Մենք քեզ պետք է մկրտենք: Դու հայտնվեցիր շատ հանկարծակի, այնպես որ քո անունը կլինի Նորայր՝ «նորեկ»: Ես եռանդով լի նոր շրջանավարտ եմ: Տնօրենն ինձ ներկայացրեց միության հիմնադիրներին: Նրանք ասացին. «մենք կբարձրացնենք այս փղային, մենք այս կանենք, այն կանենք, նա շատ օգտակար կլինի մեզ համար»: Նրանք ինձ ծրագրի մաս դարձրին:

Ինչպես Այհանի հայ լինելը, որն ի հայտ եկավ իր քուրդ լինելուց, Նորայրի քուրդ լինելն ի հայտ եկավ իր հայ լինելուց. «Նրանք Դինքի մահից հետո թաղման ժամանակ շատ քրդեր կային: Որոշ հայ եղբայրներ կարծում էին, որ պետք է լուռ քայլեինք, որպեսզի խուսափենք սադրանքներից, բայց քրդերն ամբողջ ձայնով բղավում էին: Նրանք ասում էին. «Ժամանակն է, որ մեր ձայնը լսելի դառնա»: Ես հավատում էի և ինձ շատ մոտ էի գգում նրանց»: Այհանի հայրն ասում էր. «Մենք քուրդ ենք Սփամբուլի հայերի մեջ և հայ՝ քրդերի միջև», -և, որպես նախորդ սերնդի ներկայացուցիչ, ավելի սուր է վերապրում այս փարբերությունը: Երիտասարդ և փարեց սերունդների քրդերի միջև հայության ընկալման փարբերություն կա:

Այհանի կապը քրդերի, թուրքերի և հայերի հետ և ժամանակի ու փարածության մեջ փարբեր լինելու հանգամանքը մեզ սրիպում է կրկին մտածել ինքնության սահմանման մասին, իսկ նրա կյանքի պատմությունը ցույց է փայլիս, որ 1915 թվականն այսօր դեռևս նշանակություն ունի Թուրքիայի երիտասարդ սերնդի համար:

Քաղաքը կորցնելու վախը

Զուբեյդան ծնվել է Վանի մեծահարուստ ընտանիքներից մեկում 1940 թվականին: Նրա պապն առևտրական էր, ինը խանութ ուներ քաղաքի կենտրոնում: Չնայած Զուբեյդան երբեք իր պապին չի տեսել, նա մեծացել է՝ լսելով այն պատմությունները, թե ինչպես է պապը, խանութներն ու փողերը թողնելով, կառքով հեռացել Վանից: Նա տեսել է Արամ փառապետի փոփոխությունը, որպեսզի նրա պապը բնակություն է հաստատել հայերին Վանից «վարարելուց» հետո: Զուբեյդան մինչև այսօր ոգևորված է այն մտքից, որ այնպեղ, ինչպես նաև Վանի ամբողջ փայլուն կարող է ոսկի թաղված լինել, և վախենում է, որ նախկին տները մի օր կվերադառնան իրենց տները, ոսկին ու ամբողջ քաղաքը եր վերադառնելու համար: Զուբեյդայի պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես է Վանի պատմությունն ընկալվում քաղաքի մահմեդական բնակչության կողմից:

Նկարագրելով ռուսների և հայերի կողմից Վանի գրավումը և մահմեդականների արագազդը. Զուբեյդան օգտագործում է *սեֆերբերլիկի* [մոբիլիզացում] տերմինը. «Վանը հայերին էր պատկանում, իսկ քաղաքի կենտրոնը, ամրոցը շրջապատող դաշտերը՝ թուրքերին: *Սեֆերբերլիկի* հետո նրանք մահմեդականներին շատ էին հեղափոխում: Քաղաքում մահմեդական չէր մնացել, բոլորը գորակոչվել էին»: Նրանցից մեկը Զուբեյդայի պապն էր. «Պապս բանակ էր գնացել, տարած և քեռիս մահացել էին: Միայն մայրս էր ողջ մնացել: Այն ժամանակ ավտոբուս չկար: Միայն նավեր էին, բայց բոլորի համար տեղ չկար: Մնացածը կառքերով հեռացան: Մայրս հիշում է, որ կառքերի անիվները դիակների վրայով էին անցնում: Մեծամասնությունը հույների մահացել է»: Վանից Դիարբեքիր գնալուց առաջ Զուբեյդայի պապը ոչնչացրել է իր ունեցվածքը. «Գոմի դռները բացեցին, անասուններին դուրս թողեցին և փողերը այրեցին, որպեսզի հայերը դրան չտեսնեին»: Նա հողի մեջ ոսկի է թաղել, ինչը հերքալով շատ առասպելների հիմք դարձավ. «Այն օրերի արարածությունը ոսկին կամ արծաթն էր: Ոսկին թողեցին, մտածելով, որ մի օր կվերադառնան: Պապս *սեֆերբերլիկի* ժամանակ ոսկով լի փուփեր է թաղել»:

Նազիվ թե մեր զինվորները ճակնդեղ էին հավաքում

Սեֆերբերլիկի ժամանակաշրջանը քաղաքում ավարտվեց ուժերի հարաբերակցության փոփոխությամբ. «Թուրք զինվորները հայերին վարեցին: Ինչպես նախկինում էին ասում՝ «նրանք թշնամուն վարեցին»: Նախկինում հեղափոխվող մահմեդականները հիմա էլ հեղափոխող դարձան. «Անկասկած, հայերին նույնպես սպանում էին, մեր զինվորները հո ճակնդեղ չէին հավաքում: Դա արյունը արյան, մահը մահի, ուժեղը թույլի դեմ էր»: Այս անգամ արդեն հայերն էին իրենց ունեցվածքը թողնում. «Նրանք հեռացան կյանքը փրկելու համար: Նրանք իրենց հետ ոչինչ չվերցրեցին: Նրանք ասում էին՝ եկեք փողերը այսպես էլ թողնենք»: Զուբեյդայի պատմածով նրանց հեռանալը մահմեդականների գնալուց շատ չէր տարբերվում: Նրանք տներն այրեցին և փուփերով ոսկի թաղեցին:

Մահմեդականները Վան վերադարձան, բայց ոչ իրենց տները. «Որոշ ժամանակ անց բոլորը վերադարձան, սակայն վերադարձողները բնակություն հաստատեցին հայկական թաղամասում: Նրանք ոչինչ չէին գնում: Բոլորը եկան, տեղ գրան և բնակվեցին»: Զուբեյդայի պապը տեղափոխվեց հայտնի Արամ փառապետի հինգ հարկանի առանձնատունը: Զուբեյդան պաշտպանում է պապին և նրա սերունդը պնդելով, որ նրանք «սեֆականություն ձեռք բերելու նպատակ չունեին»: «Նին սերնդի



մարդիկ գումար վաստակելու ձգտում չունենին: Այն ժամանակ եղբայրություն էր, մարդիկ կիսվում էին իրար հետ: Իսկ հիմա ի՞նչ է»: Թաքցված գանձերը, ոսկով լի փուփերը և այդ մասին պատմությունները, սակայն, գրավում էին բոլորին, այդ թվում նաև Զուբեյդային: «Մեր փրան նախկին փերը Արամ փաշան էր: Նախկինում խոհանոցը լի էր մթերքով լցված կաթսաներով՝ բրնձով, քուս-քուսով, ոսպով: Այնպես ոսկով լի երկու մեծ կաթսաներ կային: Նրանք եկել էին և երկու կաթսա ոսկին աղյուսների երևից փարել: Մայրս դրանք չէր նկատել: Նայերը շարժել էին պափի աղյուսները, որտեղ նրանք թաքցրել էին ամեն ինչ»: Զուբեյդայի խոսքերով որոշ հայեր Վան էին վերադարձել իրենց թաքցրած ոսկին փրանելու համար. «Նայր գալիս և ասում էր. «Սա իմ փունն է»: Նրանք չորս-հինգ փարուց հետո գալիս էին և ասում. «Տես, այստեղ գանձ է թաքցված: Այս կամ այն քարը հանիր և գանձ կգտնես»: Նրանք առաջարկում էին. «Կեսը քեզ, կեսը՝ ինձ»: Իսկ ի՞նչ արեցին մեր մահմեդականները: Նրանց մի լավ ծեծեցին ու քշեցին: Նրանց նույնիսկ հինգ ցենսր չտվեցին»: Որոշ հայեր վերադարձան և իրենց ոսկին փարան «առանց որևէ մեկի փողոյակ պահելու»: Չնայած դրան ոչ գանձերն են պակասում, ոչ էլ դրանց մասին պատմությունները. «Դրանք Վանի հողում են: Ամեն փող, որտեղ ինչ որ նոր բան է կառուցվում, մուրճը գեղնիկ կպնելուն պես մի նոր գանձ է հայտնաբերվում»: Գանձերը զարգացում և հարստություն են խոստանում. «Նայերն ասում են, որ երբ Վանի բոլոր փրների դռները ոսկուց, իսկ պատուհաններն արծաթից լինեն, այն ժամանակ մենք կասենք, որ նրանք մեր բոլոր գանձերը հայտնաբերեցին»: «Նայկական անեծքի» մասին

պարմությունները միայն զորացնում են առեղծվածը: Նայերի կողմից անիծված ոսկուց «ոմանք ուշաթափվում են, իսկ ոմանք էլ՝ մահանում»:

Մենք Վանի ամրոցը կարմիր շորով կծածկենք

Զուբեյդայի երևակայության մեջ հայերը ոչ միայն ուզում են վերադարձնել Վանի փարածքում և նրանց նախկին փներում թաքցված գանձերը, այլև կամենում են փիրանալ ամբողջ քաղաքին. «Նրանք ցանկանում են փիրանալ Վանին մի ամբողջ հավերժություն: Երգվում են, որ նրանք այդ բանը միշտ ցանկանում էին: Նայերը միշտ ասում էին. «Երբ Վանի ամրոցը գրավենք, մենք այն արևից պաշտպանելու համար վերևից ներքև կարմիր շորով կծածկենք»: Վանի նկարմամբ հայերի համակրանքը Զուբեյդայի մոտ փազնապ է առաջացնում: Չնայած հայերի փները և ոսկին խորհրդավոր կերպով գրավիչ են, հայի պատկերը, որը մի օր կվերադառնա իր փունը, ոսկին ու նախկինում իրեն պատկանող քաղաքը վերադարձնելու նպատակով, սարսափ է առաջացնում: Ամեն խնդիր, նույնիսկ քրդական խնդիրը դրանով է բացատրվում. «Ինչու՞ է այդ դեպքում թուրքը թուրքին սպանում: Ինչու՞ է մահմեդականը մահմեդականին սպանում, եթե հայերը չլինեին: Թուրքերը և քրդերը եղբայրներ են, հավաքի եղբայրներ են: Երգվում են, որ հայերն են դա անում: Նախկինում քրդերի հետ բան չէր կատարվում: Նրանք իրար հետ էին կռվում, իրար վրա էին կրակում և իրար էին սպանում: Նրանք թուրքերի հետ պրոբլեմներ չունեին»:

Տարբեր պարմություններում *սեֆերթերլիկի* շրջանից և անհայտ ապագայում քաղաքը երբ վերցնելու նպատակով ապրող հայերից բացի, գոյություն ունեն նաև ներկայումս ապրող հայերը: Նամայնքները կրոնական սկզբունքով փարբերակող Զուբեյդան իսլամ ընդունած իր հայ հարևաններին առանձնացնում է իր պարմությունների հայերից: Նրա խոսքերով, իսլամ ընդունած հայերը «մեր նման են»: «Իմ հարևանի վախճանված մայրը քառասուն օրական երեխա ուներ: Նայերը գերի էին ընկել թուրքերի մոտ: Մեր հարևանի հայրը վերցրեց մեկին: Նրա փղաններից մեկը հայ երեխա էր, որին հայերն էին թողել: Մենք նրան այլևս հայ չենք համարում: Նա մեր նման մահմեդական է դարձել: Նա մեր նման աղոթում և պաս էր պահում: Նա երբեք համրիչը բաց չէր թողնում»:

Զուբեյդայի պատկերացմամբ հայերն առեղծվածային էակներ են, ովքեր նախ հարկադրել են գաղթել նրա պապին, իսկ երբ հերթը նրանց հասավ՝ իրենք են արագադադրել, անիծելով և թաղելով իրենց ոսկին: Նրանք մինչև այսօր ուզում են վերադառնալ և գրավել քաղաքը, և պատերազմ են հրահրում թուրքերի ու քրդերի միջև: Նրանք ամենևին նման չեն Զուբեյդայի հարևաններին: Ինչու՞ է Զուբեյդայի պարմությունն ամբողջովին լեցուն վախով, եթե հայերը Վանում փուժել են թուրքերի նման և վերջ ի վերջո թուրքերը հաղթել են:

«Ես քեզ սիրում էի ոչ այն մարքով, որ մոռանամ»

Վերան 81 փարեկան հայ կին է, ծնվել և մեծացել է Անկարայում: Կորցրել է ամուսնուն, որդուն և դստերը, ապրում է միայնակ, Սփամբուլում: Չնայած բարեկամներ ունի արտասահմանում, գերադասում է մնալ Սփամբուլում՝ իր փանը և իր ընկերների մոտ: Նա չափազանց համարձակ կին է, սիրում է կյանքը, չնայած շար փառապանքներով է անցել, երբ քաղցկեղի պարճառով ողբերգականորեն կորցրել է որդուն և դստերը: Մի թուրք փղամարդու հանդեպ անպարասխան սիրո պարմությունը նույնիսկ այսօր նրա կյանքի գլխավոր իրադարձությունն է:

Երբ Վերային հարցրինք նրա ընփանիքից, նա խոսեց հայերի ցեղասպանության մասին. «Ես պապերիս չեմ տեսել: Նրանք վախճանվեցին ցեղասպանության ժամանակ: Մենք հայ կաթոլիկներ ենք, Նոմի պապին ենք հեփուում: Երբ նրանք պապիս մորթեցին, ասացին. «Սա նաև կաթոլիկ լինելու համար է»: Տարս կույր էր: Գուցե այն պարճառով, որ չափից դուրս շար էր լաց լինում: Նայրս փախել էր և ողջ մնացել: Տարիս աղջիկներից երեքը փրկվեցին: Նա մորս ամուսնացրել էր հորս հեփ, որովհեփև չգիտեր, թե իրեն ինչ կարող է պարահել: Նայրս 16 փարով մորիցս մեծ էր: Տարիկս մնացած երեխաներին վերցրել և իր հեփ փարել է: Մայրս ֆրանսիա գնացած փարիս 28 փարի չէր տեսել»:

Ըստ Վերայի՝ նրա ընփանիքը ձեռնպահ էր մնում ցեղասպանության քննարկումից: «Ես շար մահմեդական ընկերներ ունեի Անկարայում: Մայրս և մեր բարեկամները անախորժություններից խուսափելու համար այդ հարցը չէին քննարկում: Ես էլ չէի



ուզում դա քննարկել երեխաներիս հետ, երբ նրանք մեծացել էին: Որովհետև Թուրքիայում եմ ապրում: Ընկերներս, որոնց ես շատ եմ սիրում, մահմեդական են»:

Վերան ասում է, որ ֆեթիհյե Չեթինի «Մեծ մայրս» գիրքը կարդալիս վշտացել է, քանի որ այն հիշեցրել է իր սկեսուրի պարմությունը. «Դա իմ սկեսուրի պարմության նման է: Դիարբեքիից մի *աղա* նրանց հանդիպում է ճանապարհին, երբ նրա փափին, մորը և հորը փանում էին Թոքաթ: Այդ մարդը սկեսուրիս նստեցնում է ձիու վրա: Սկեսուրիս անունը Միլվա էր, նա նրան Ջեյնաթ է վերանվանում: Նրան միշտ *գյալուր* էին անվանում՝ *գյալուր* աղջիկ, *գյալուր* աղջիկ, *գյալուր* աղջիկ: Նա այդ խոսքը փանել չէր կարողանում: Գրպանում խաչ էր պահում, խաչելություն: Մի օր, երբ բանալին հանել է, խաչն ընկել է: Տանփրիուիին ասել է. «*Գյալուր* աղջիկ, դու այդ բանը մինչև հիմա քո մո՞տ ես պահում»: Նրան հաջողվում է փախչել: Նա իմ ամուսնու հորեղբոր մոտ է գնում և այնպեղ ապաստան գտնում: Նրանց հայրը Նալեյ էր փախել կոպորածի ժամանակ: Իմ սկեսրայրը այդպեղից եկել էր և փեսել էր սկեսուրիս: Նրանք ամուսնացան, երեխաներ ունեցան»:

«Ես՝ գյալուրս, թրջել եմ շագանակները»

Վերան անձնական կյանքից, իր թուրք ընկերուհու հետ փրեղի ունեցած խոսակցության մասին մի հեղաբեքի գվարձալի պարմություն է պարմում: Ընկերուհին լսել էր, թե ինչպես մի ընկեր մյուսին է ասել է, որ նա ճիշտ բան է արել, որ փնից դուրս է եկել և փունը վարձով փվել. «Դու ճիշտ բան ես արել, որ քո փունը վարձով ես փվել, ներքևի հարկում *գյալուրներ* էին ապրում»: Ես աչքերս նրա վրա չոեցի: Նույնիսկ ամենաքաղաքակիրթները, ամենակրթվածները *գյալուր* են ասում: Դրանից առաջ ընկերուհին ինձ խնդրել էր շագանակը թրջել: Երբ հարցրեց դրա մասին, պարասխանեցի. «Մահմեդականը ինձ խնդրեց և ես՝ *գյալուրս*, թրջեցի դրանք»: «Դու ի՞նձ հետ ես», - հարցրեց ընկերուհին: «Ոչ, - պարասխանեցի, - դու Ջեհրան չես: Ես ուրիշ Ջեհրայի հետ եմ խոսում»: «Բայց, - ասաց նա, - դու ասում էիր, որ նրանք քո պապին սպանել են»: Ես պարասխանեցի. «Ես իմ խոսքի փրերն եմ: Իմ պապին սպանել են»: Ննարավոր է՝ հայերը նույն բանն են արել, բայց մենք գիտենք, թե նրանք ինչերով են անցել: Ես օսմանների երեխան չեմ: Ես հանրապետության երեխան եմ: Ես գրքի այդ էջը շրջել եմ»:

Վերան հիշում է դպրոցում իր ավագ քրոջ նկարմամբ խարականության դրսևորումները, թե ինչպես է դա ազդել նրա կյանքի վրա. «Նայրս չէր կարողանում դպրոց գնալ՝ քրոջս դպրոցում գրանցելու համար: Մեր վարձակալը (կենվորը)՝ Մեհմեդ Աբին, ասաց. «Ես դա քո փոխարեն կանեմ, բայց ամբողջ դպրոցում միայն երկու քրիստոնյա կա: Արի նրան անվանենք ոչ թե Նաիրա, այլ Արափի աղջիկ Լալե: Թող նրա ընկերները նրան անվանեն Լալե»: Քույրս դպրոցում շատ լավ էր սովորում: Ուսուցիչներից մեկը հարցրել է նրան. «Լալե, դու ուրի՞շ անուն ունես»: Պարասխանել է. «Արափի աղջիկ Նաիրա»: «Եղավ, - ասել էր ուսուցչուհին, - դու հպարտ ես զգում քեզ քրիստոնյա՞, թե՞ թուրք համարելու համար»: Դրանից հետո քույրս միջին գնահատականներով ավարտեց դպրոցը: Մեհմեդ Աբին ղեկավարի մոտ էր գնացել. «Արափի աղջիկ Նաիրա, դա ի՞նչ նշանակություն ունի՝ գնահատականները միջին պետք է լինեն, թե՞ բարձր»: Դրանից հետո քույրս դպրոց չէր գնում: Նույնի հետ ամուսնանալուց հետո նրա երեխաներին «Մակարիոսի երեխաներ» էին անվանում [Կիպրոսի հանրապետության՝ Նունասարանի հետ միավորվելու համար պայքարող նախագահը]: Դա էր քրոջս հեռանալու պարձառը»:

«Բուլոբը անպարբեր էին: Բուլոբը անպարբեր էին: Բուլոբը»:

Վերան հիշում է, թե 1955 թ. սեպտեմբերի 6-7 դեպքերը ինչպես էին զարգանում իր թաղամասում. «Ես դրոշը պարուհանից կախել էի: Նրանք չքարկոծեցին մեր փունը, որովհետև ես կարգին թուրքերեն էի խոսում: Նրանք քարեր էին շարժում կողքի փանն

ապրող հարևանների վրա, ապակին էին ջարդել: Նրանք գնացին գերեզմաններ: Նրանք փայտերին հագցված գանգեր էին փանում: Բոլորը անտարբեր էին: Բոլորը անտարբեր էին: Բոլորը: Մենք հարևան մահմեդականներ ունեինք: Վաջորդ օրը ես պարահաձի մասին նրանց կարծիքը հարցրեցի: Նրանք պարասխանեցին. «Երեխաները ոգևորված էին, սիրելիս, ուզես-չուզես նրանք սրիպված էին այդպիսի բաներ անել»:

Վերայի վերջին խոսքերը ընկերուհուն, ում հետ նա վիճել էր «գյալուր» բառի շուրջ, արտահայտում են այս հողի նկարմամբ նրա պահանջը. «Մի կողմ դնենք պարմությունը: Խոսենք ներկայիս մասին: Մեկտեմբերի 6-ը, ունեցվածքի հարկը, ոչ մահմեդականների զինվորական ծառայությունը: Մենք այդ ամենով անցել ենք: Բայց, այնուհանդերձ, ես այստեղի զավակ եմ: Ես շարունակում եմ այստեղ մնալ: Ես ավելի շատ եմ մահմեդական ու թուրք, քան դուք: Դու չգիտես որտեղից ես եկել, իսկ ես գիտեմ: Ես Անկարայից եմ եկել և հիմա Սրամբուլում եմ»:

***«Ավելի լավ է միայն մեկը
դժբախտության մեջ լինի,
քան՝ երկուսը»***

Երբ հարցրեցինք նրա մանկության մասին, Վերան հիշեց Անկարայում մեծանալու երջանիկ փարիները և թուրք ընկերոջը, որը նրա համար մինչև հիմա աշխարհի չափ կարևոր է: «Ինսպիրտություն իմ ընկերը մահմեդական էր: Նրա քույրն իմ ընկերուհին էր: Մենք հանդիպում էինք յոթ փարի: Նա մահմեդական էր»: Նրա խոսքերով, նրանց ամուսնությունն անհնարին էր փարբեր կրոններին պարկանալու պարճառով: «Մենք չէինք կարողանում ամուսնանալ այդ փարբերության պարճառով: Մենք բաժանվեցինք 1950 թ., երբ իմ մայրը մահացավ: Նա ասաց. «Ես ամուսնանում եմ»: «Լավ ես անում,- ասացի ես,- ավելի լավ է միայն մեկը դժբախտության





մեջ լինի, քան՝ երկուսը»: Նրա ընտանիքը չէր ուզում դա: Դա անհնարին է, բա նրանք գյալոր աղջիկ կուզեին: Նրա ընտանիքը պահպանողական է, իմ ընտանիքը նույնպես: Իսկ դրա հետևանքով մենք էինք տառապում: Նա այն ժամանակ ասում էր. «Նրանք մի 40 օր կխոսեն, բայց 41-րդ օրն ամեն ինչ կմոռանան: Բայց դու միշտ կենտրոնացած ես կրոնի հարցերի վրա»:

Չնայած Վերան ամուսնացել է ուրիշ մարդու հետ և փեղափոխվել Սյամբուլ, երբևէ չի մոռացել իր առաջին սերը. «Չնայած ամեն ինչին՝ ես չեմ կարող դա մոռանալ: Դա հաստատ է»: Տարիներ հետո, երբ երկուսն ամուսնացած էին և երեխաներին մեծացրել էին, որոշել է նրան այցելել Անկարայում. «Ինձ հեղափոխիչ էր, ես ուզում էի նրա ձայնը լսել: Ես զանգահարեցի գրասենյակ: «Եղավ,- ասաց,- վաղը կգաս»: Ես գրասենյակ գնացի: Մենք դեմ դիմաց նստել էինք: «Դու,- ասաց,- իրերդ հավաքեցիր ու Սյամբուլ գնացիր: Դու այսօրեղի բոլոր հիշողություններն ինձ թողեցիր: Դու երջանի՞կ ես»: Մի օր նա զանգահարեց ինձ: Ես վեր կացա և Չըրաղան հյուրանոց գնացի: Նա այնպեղ երգում էր: Նա երգում էր «Ես քեզ սիրում էի ոչ այն մարքով, որ մոռանամ» երգը:

Վերայի ամուսնությունը երջանիկ չի եղել, ամուսիններն իրար չեն սիրել: Նա զգում էր, որ ամուսնու հարազատները, որոնց հետ սրիպված էր միասին ապրել, երբեք իրեն չեն ընդունել: Նա հիշում է, թե ինչպես իր սկեսուրը թույլ չտվեց, որ լուսանկարիչն

իրեն ընդգրկի ընդհանրական լուսանկարում: Նա փարիներ շարունակ նայում էր շրջանակի մեջ դրված, իր բացակայությունը ցուցադրող նկարին: Վերան վշտահար էր երիտասարդ փարիքում մահացած որդու ու դստեր պատճառով: Նրա երեխաների աջակցության շնորհիվ է, որ նա ի վիճակի է եղել դիմանալու ամուսնու դաժան վերաբերմունքին: Նա այսպես է նկարագրում ամուսնու զայրույթի դրսևորումը. «Տունը ոնց որ սեպտեմբերի 6-ի դեպքերից հետո լիներ: Ամեն ինչ ցիրուցան էր, ջարդված»:

Ասում է, որ եթե երեխաները չլինեին, կբաժանվեր: Չնայած զավակներն արտասահմանում են մահացել, ցանկացել է, որ նրանց աճյունները բերվեն Թուրքիա: Վերայի համար, որ հաճախ նրանց գերեզմաններն է այցելում, դա շար մեծ նշանակություն ունի: Նրա խոսքերով, դա նրա Թուրքիայում մնալու պատճառներից մեկն է, քանի որ ուզում է մահվանից հետո միանալ երեխաներին: Թեև շար ուժեղ է, այդ ցավը մնում է նրա հետ. «Ցավը իմ սրբում է: Ամեն անգամ, երբ լողում եմ ծովում, լաց եմ լինում: Ի՞նչ եմ անում ծովում: Երեխաներս այսպեղ չեն, իմ հետ չեն»:

Նույնիսկ 81 փարեկան հասակում Վերան երազում է նորից հանդիպել իր սիրուն, թեպետ մտախոհ է, որ իր փեսքն այլևս առաջվանը չէ. «Ես կզանգեի Ահմեդին, բայց չեմ ուզում, որ նա ինձ այս վիճակում փեսնի»:

Վերայի պատմությունը վկայում է Թուրքիայի հայերի՝ պատմության և արմատների զգացողության հիման վրա սրեղծված խորը կապն այս հողի հետ:

Արարարի հմայքը

Մեհմեդը 62-ամյա փղամարդ է, ծնվել է Աղբը լեռան լանջերի վրա գրնվող Իգդիր քաղաքի մոտի ադրբեջանական գյուղում: Նա պարմում է իր գյուղի պարմությունը. «Իմ ժողովուրդն այս կողմն է գաղթել հայերի հետ պարերազմի ժամանակ: Նայրս Ադրբեջանից է, իսկ մայրս՝ Իրանից: Մի արյունահեղություն, պարերազմ է սկսվել, որի պարճառով իմ հորական պապը փախել է այս կողմ»:

Չորս երկրների սահմանների մոտ գրնվող վեհապանձ Արարար լեռն է, որ ձևավորում է Մեհմեդի կյանքը, ինչպես ձևավորել է իր նախնիների կյանքը: «Այդ ժամանակ լարված սահմանային ընդհարումներ էին փրկել ունենում: Մեր գյուղը, Իգդիրը և Արարար լեռը մշտապես ձեռքից ձեռք էին անցնում: Օրինակ՝ մեծ Արարար լեռան մի կողմը դառնում էր Ռուսաստանին պարկանող, իսկ մյուս կողմը մեզ էր նայում: Փոքր Արարարի մի փեշը պարկանում էր իրանցիներին, մյուս փեշը՝ մեզ: Լեռը խնձոր չէ, որ բաժանենք երկու մասի՝ ասելով, որ մի մասը ձերն է, իսկ մյուսը՝ մերը»:

Արագ գեղը վախի սահմանն էր

Մեհմեդը փորձում է նկարագրել այն ազդեցությունը, որ սահմանն ունենում է երկու կողմում գրնվող մարդկանց վրա, օրինակներ բերելով իր իսկ կյանքից, զանազանելով հին և նոր սերունդները: «Մեր ժողովուրդը եկել է այս կողմը հայերի հետ հակամարտության պարճառով: Դրանք պարմական իրադարձություններ են: Սակայն ոճրագործները կենդանի չեն: Ներաբրքիր է, թե որքանո՞վ է ներկայիս հայ սերունդը նման իր նախնիներին, կամ թե որքանո՞վ ենք մենք նման մեր այն ժամանակի նախապապերին: Ես մանկությունս անց եմ կացրել Արագ գեղի ափերին: Արագը միշտ մեր և հայերի միջև է, սահման է: Այն վախի սահման էր: Ռուսաստանից միշտ վախ կար: Մայրս չէր կարող «ռուս» ասել, նա «օթայ» էր ասում: Ադրբեջաներեն *օթայ* նշանակում է «ջրի այն կողմը»: Նայերը չէին ընկալվում որպես չարիքի աղբյուր: Մայրս միշտ փխրեցնում էր Արագի ափին գրնվող բամբակի դաշտերը: Երբ կանգնում էր, հայկական սահմանի վրա փեսնում էր կանանց և փղամարդկանց նրան համարյա այսքան մոտիկ: Դա կարծես հարևանություն լիներ: Տարիներ առաջ բրինձ էին ցանում Իգդիրում: Մենք գոմեշներ ունեինք՝ ծանր աշխատանք կատարելու համար: Նրանց օգնությամբ դաշտը մշակելուց հետո հայրս ասում էր. «Որդիս, գնա և նրանց բեր, որ արածեն, բայց ուշադիր, թույլ չգրաս, որ նրանք հարեն հայերի սահմանը»: Նույնպես փախին մեր գոմեշները, գեղում իրենց զովացնելով, բարձրանում և սկսում էին արածել հայկական կողմում՝ կարծես այնտեղ էին ծնվել և բազմացել: Նրանց չես կարող ասել, որ դա Նայաստանն է, կամ պարմել անցյալում փրկելի ունեցած պարերազմների մասին: Մենք, իհարկե, վախենում էինք: Գոռում էինք, որ լավի այդ կողմում, դրա համար մեր հայրը ծեծում էր մեզ: Նայերը փեսնում էին սահմանի մյուս կողմից, որտեղ նրանք մեզ նման աշխատում էին դաշտերում, թե ինչպես ենք բղավում ու ճվճվում: Նրանք բշտում էին գոմեշներին դեպի այս կողմը, և մենք ուրախությունից թռչկոտում էինք: Այժմ այդ մասին հիշելիս մտածում եմ, որ այդ մարդիկ կարող էին պարգապես վերցնել գոմեշները: Ըստ մեր հոր նկարագրածի՝ հայերը զինված, ազրեսիվ, թշնամանքով լի, մարդասպան մարդիկ էին: Ես մտածում եմ այն մարդկանց մասին, որոնք այս կողմն էին բշտում գոմեշներին և հարցնում ինքս ինձ, թե արդյոք այս մարդիկ կարո՞ղ են լինել նրանց որդիներն ու դուստրերը: Այժմ ոչ մի խնդիր չկա այդ շրջանում ապրող մարդկանց հետ, սակայն մենք չենք կարող ջնջել այն ամենը, ինչ պարահել է անցյալում: Իրականում ներկայիս սերունդը պարասխանապար



չէ անցյալի իրադարձությունների համար: Նրանք պարզապես ժառանգել են այդ պայմությունը: Այո, հայերի և մեր ժողովրդի միջև ընդհարումներ և թշնամություն եղել են, սակայն թշնամանքի զգացումը այնքան խորը արմատավազած չէ, որ շարունակենք ապագայում»:

Մենմեզն իր գյուղի բաղնիքի ճարտարապետական ոճում հայոց պայմության հետքեր է գտնում: Նրա կարծիքով՝ դա չափազանց զարգացած քաղաքակրթության վկայություն է. «Մենք պետք է ընդունենք, որ հայերի մեջ կան հրաշալի արհեստավորներ: Նրանց քաղաքները և ճարտարապետությունը դարերի պայմություն ունեն, շար նրբագեղ են և ամուր: Մեզ շրջապատող բնակավայրերը կառուցել են աղքատ մարդիկ՝ անփութորեն, ավագի և կավի խառնուրդից: Նայերը մեր գյուղի մուրքի մութ չափազանց փրկավորիչ բաղնիք են կառուցել: Երբ դեռ մանուկ էի, հաճախ էինք մտնում և ուսումնասիրում այն: Ակնհայտ է, որ մեզանից առաջ այստեղ այլ մարդիկ են ապրել: Գիտեի, որ այն թուրքերը չեն կառուցել, ես կարող էի դա զգալ արձանագրությունից: Այդ բաղնիքը դեռ կանգուն է: Ես այն փրկավորությունն եմ սրացել, որ այստեղ ապրող հայերը մտահոգվում էին մաքրության մասին: Եթե բաղնիք չլինի գյուղում, բնականաբար, այդտեղ հիգիենայի սովորություն չի կարող լինել: Ինչո՞ւ է այս բաղնիքը կառուցվել հենց մեր գյուղում և ոչ այլ գյուղում: Ո՞ւմ մտահոգացումն էր դա, և ինչո՞ւ է այն քարից կառուցված, եթե գյուղի բոլոր մնացած փոքրերը կավից են»:

Արարար լեռան վրա երեխաները ազար թափառում էին

Մեհմեդը, ում ընտանիքը ազարակարերերից էր, ամառն անց էր կացնում Արարար լեռան վրա. «Մենք գյուղի ամենահարուստ ընտանիքն էինք, բայց նաև ամենամեծը: Մեր ընտանիքը բաղկացած էր 36 հոգուց, կամ 40, եթե շներին էլ հաշվենք: Շներն այնպեղ մարդկանց նման կարևոր էին: Մենք վերևում Արարարի լանջերին, ոչխարի հոտեր ունեինք: Այդ շները ոչխարներին պաշտպանում էին գայլերից: Մենք ամառն անցկացնում էինք երկու լեռների գագաթների միջև գրկավող Սերդարուլաք կողմով վայրում: Սերդարուլաք նշանակում է «ակնաղբյուր»: Ես թողնում էի, որ գառները արածեն, և նայում էի Ռուսաստանի կողմը: Երեկոյան մեր գյուղում էլեկտրական լույս չկար: Միայն գազով լամպեր և շահեր էին: Մինչդեռ սահմանի մյուս կողմում այնքան լուսավոր էր, որ մենք՝ երեխաներս, լցվում էինք նախանձով: Մենք հաճախ նույնիսկ խաղում էինք այդ լույսերի ներքո: Արարար լեռան վրա երեխաներն ազար կարող էին մրածել այն ամենի մասին, ինչ ցանկանում էին, նույնիսկ արգելված բաների մասին: Նրաշալի էր իսպառ մրքից հանել վախ՛ն ու սահմանը: Ես այդ ժամանակ մրածում էի Ռուսաստանի վարչապետ դառնալ: Ռուսաստանն այնքան հզոր էր թվում, այն այնքան լուսավոր էր: Ես կարող էի ասել, որ այն շար գարգացած է: Դրան հակառակ՝ մեր գյուղում այնքան մութ էր»:

Դու վստահ ես, որ նրանք մեզ այնպեղ բանք չեն ներքի

Մեհմեդի մոր՝ Այշե բաջիի զգացմունքներն այն ժամանակ, երբ սահմանները բացվեցին, ցույց է մարդկանց վրա մնացած հետքը. «Սովետական Միության լուծարումից հետո սահմանները բացվեցին: Մարդիկ կարող էին անցնել Արազ գետի մյուս կողմը՝ Դիլուջուի մոտ: Նրանք տեսան, որ Նայաստանից բացի գետի այն կողմում կա նաև ադրբեջանական մի երկիր՝ Նախիջևանը: Տարիներ անց ես պարտաստվում էի գնալ Նախիջևան և առաջարկեցի մորս՝ Այշե բաջիին, ինձ հետ գնալ»:
«Ու՛ր ես ինձ տանում», - հարցրեց նա: «Օթայ», - ասացի ես, և նա անմիջապես հասկացավ, որ նկատի ունեմ Արազ գետի մյուս կողմը: Ես զգացի, որ նա ցանկանում է գալ ինձ հետ, բայց դեռևս անհանգիստ է: Մենք մեքենայով ուղևորվեցինք Նախիջևան՝ անցնելով Թուրքիայի մաքսատնով: Արազ գետի վրայի կամուրջը մեզ ուղիղ տարավ Նախիջևան և Նայաստան: Իմ մայրը, որն իր երիտասարդությունն անց էր կացրել Արազի ափերին, այժմ անցնում էր Արազի մյուս կողմը: Երբ կամուրջի վրա էինք, նրա ուրբերն ու ձեռքերը սկսեցին դողալ: Նա ադրբեջանական թուրքերենով ասաց. «Օղուլ, էմի նստն բակ բիզի օրդա դամա գակմազլար մի» [Որդի՛ս, դու վստահ ես, որ նրանք այնպեղ մեզ բանք չեն ներքի]: Մայրս, ձեռքս ամուր բռնած, ողջ մարմնով դողում էր, և ես զգացի, թե նա ինչպես է իրեն զգում սահմանի մյուս կողմը գնալիս, որին 50-60 տարի վախով է նայել:

Մեհմեդի ադրբեջանցի բարեկամները մնացել էին Իրանում և Ադրբեջանում: Ընտանիքի անդամները միմյանց երկար տարիներ չէին կարող հանդիպել և սրիպված էին ապրել իրարից հեռու: Նախիջևանում հանդիպած մարդիկ իրենց պարմություններով Մեհմեդին հիշեցրին այս ցավի մասին: «Մենք փնտրեցինք մորս բարեկամներին, բայց ոչ ոք կենդանի չէր, բոլորը մահացել էին: Նրանք մեզ սրճարանում թեյ հյուրասիրեցին: Ես նկատեցի, որ բոլոր տներն այնպես էին կառուցված, որ Արարար լեռը տեսանելի լիներ: Նախիջևանից այն զարմանալի տեսք ուներ. կիսով չափ ձյունով պատված կողք կողքի կանգնած կոնաձև գագաթներ»: Այնպեղ ապրող մարդիկ մեզ ասացին. «Տարիներով մենք չէինք կարող մտնենալ Արազ գետին կամ նույնիսկ նայել դեպի այդ կողմ: Սահմանի այս կողմում ապրող մարդիկ վախենում էին այն կողմում ապրող մարդկանցից, և հակառակը»: Նրանք ասում էին. «Մեր մեծերը մահացան՝ կարոտով նայելով Արարարին»: Մա խորապես ազդեց ինձ վրա: Արարար լեռն անհավարարի ազդեցություն ունի մարդկանց վրա: Այն առեղի ազդեցություն ունի Նայաստանի վրա: Մարդիկ իղձ և կարոտախար են զգում՝ նայելով Արարարին: Դա առկա է Ադրբեջանում, Իրանում: Ինչ-որ առեղծվածային բան կա Արարար լեռան մեջ: Աշխարհի բոլոր ծայրերից գալիս են նրան նայելու, ուսումնասիրելու: Այս մարզի գրավչության բանալին չորս երկրների սահմանի

մուր գրնվող Արարար լեռն է: Մագլցի՛ր նախալեռները և կլեսա Ղայասարանի աքաղաղների ձայնը, իսկ երբ եղանակը պարզ լինի, կարող ես նաև մարդկանց տեսնել աշխարհելիս»:

Մեհմեդը, որ, ի վերջո, հաջողություն ունեցավ ուսում ստանալու գործում և Անկարայում դարձավ համալսարանական դասախոս, երբեք իր կապը չկորցրեց Իզդիբի հետ: Նա փափագում է, որ սահմանները բացվեն, և Արարար լեռը հասանելի լինի բոլորին, որպեսզի նրա շուրջը ապրող մարդիկ կարողանան միավորվել: «Արարարը կարծես մագնիս լինի: Այն դարերի պարմություն ունի: Այն հայտնի է ողջ աշխարհում: Եթե գնամ Ղուանդիա կամ Փարիզ և ասեմ, որ Իզդիբից եմ, դա ոչ ոքի համար ոչինչ չի նշանակի: Եթե ասեմ, որ Թուրքիայից եմ, նրանք կրկին ոչինչ չեն հասկանա: Բայց եթե ասեմ, որ Արարար լեռան մուրից եմ, բոլորն անմիջապես գլխի կընկնեն: Այն Եվրոպայի ամենաբարձր հրաբխային լեռն է, իսկ աշխարհում երկրորդը՝ բարձրությամբ: Այնուհանդերձ, այն դարարկ է, անօգուտ: Նա սահմաններից դուրս է: Ինչո՞ւ: Ես պաշտպանում եմ կիսելու գաղափարը: Եկեք Արարար լեռը բացենք զբոսաշրջիկների առջև: Թող բոլորը գան և գրնեն իրենց նախնիների հետքերը կամ այն, ինչ նրանք ցանկանում են գրնել Արարար լեռան վրա: Լեռը յուրաքանչյուր անցնող օրով ավելի աղքատ է դառնում: Լեռը հոգի ունի: Այն նույնպես կենդանի է: Արարարի գագաթը միշտ ձյունածածկ է: Լեռը հավաքում է ձյունն իր գագաթին, իսկ լանջերի վրա կուտակված ձյունն ամռան ընթացքում հալչում է: Լեռան վրա ապրող բոլոր էակները՝ գայլերը, եղնիկները, վայրի այծերը, օձերը սնվում են այդ աղբյուրներով: Գերարածացման և որսորդության պայմանով կենդանական և բուսական աշխարհը Արարար լեռան վրա վրանցի տակ է: Մենք կույր ենք Արարար լեռան նկարմամբ և չենք տեսնում մեր քթի տակ գրնվող հսկայական լեռը: Արարար լեռը հսկայական է, ինչպես և աղքատությունը, որը կհայտնաբերվի նրա լանջերին: Ինչպե՛ս կարելի է Արարար լեռան բարձրությունը հացի վերածել այդ աղքատ մարդկանց համար:

Մեհմեդի կարծիքով Թուրքիայի և Ղայասարանի միջև սահմանի բացումը Արարար լեռը կդարձնի ավելի շուրջ հաղորդակցության, քան սահմանի խորհրդանիշ: «Ասածս այն է, որ *հարևան պետությունների հետ ոչ մի խնդիր չլինի*: Ինչպե՛ս է դա լինելու: Ղայասարանը Արագ գետի այն կողմում է, իսկ ես՝ այս, մեջտեղում սահմանն է: Բայց եկեք բարեկամանանք իրար հետ: Ինչպե՛ս կարելի է հրամանով բարեկամանալ: Եթե սահմանը բացվի, ապա մարդիկ ազատ կլինեն՝ գալու-գնալու, մենք ազատ կլինենք՝ գալու-գնալու: Նրանք կձանոթանան մեր սերնդի հետ, իսկ մենք՝ նրանց սերնդի: Սահմանի երկու կողմերում ապրող նախկին սերունդների մարդիկ պիտի որ շատ սխալներ գործած լինեն, բայց մենք կզրուցենք և կհասկանանք միմյանց: Ինչպե՛ս կարող ենք բարեկամանալ՝ առանց փոխհարաբերությունների: Մի՞թե վախենում ենք ցույց տալ Արարար լեռը ողջ աշխարհին: Երբ մարդիկ տեսնեն լեռը, մի՞թե մարդկանց աչքերի մոզական էներգիան կանհետացնի Արարարը՝ կարծես անիծելով չար աչքով: Կա՛մ վախենում ենք Արարարը կիսել աշխարհի հետ, կա՛մ այնքան ամուր ենք փակել մեր աչքերը, որ չենք կարող տեսնել մեզ այսքան մուր գրնվող հրաշքը»:

Թուրքիայում սահմանին մուր ապրող մարդիկ վախով և կասկածով են լցված սահմանի մյուս կողմում ապրող մարդկանց նկատմամբ: Պատճառն այն է, որ նրանք դատարկարակվում են նախկին սերունդների դառը պարմություններով: Մակայն, չնայած այն հանգամանքին, որ Մեհմեդը դատարկարակվել է չորս երկրների հատման սահմանում՝ Արարար լեռան մուր, չի ընդունում իրեն թողած այդ ժառանգությունը և ի վիճակի է զանազանելու իր և նախկին սերնդի ձեռք բերած կենսափորձը: Ամենակարևորն այն է, որ իր գյուղի մարդկանց միջև եղած տարածայնությունները Մեհմեդին հանգեցրին այն եզրակացության, որ յուրաքանչյուր մարդ ավելի շուրջ անհատ է, քան որևէ էթնիկական կամ կրոնական համայնքի կամ ազգի անդամ: Նրա համար Արարարը պետք է դառնա խորհրդանիշ, որը կմիավորի փարբեր մարդկանց: Նրա մեծագույն ձգտումն իր մասնագիտական և անձնական կյանքում Արարար լեռան ռեսուրսների պահպանումն է և տնտեսության զարգացումը: Սա հնարավորություն է տալիս նրան պահպանելու իր համոզվածությունը, որ նախկինում հակամարտություններ ունեցած մարդկանց միջև երկխոսությունը հնարավոր է:

«Գիշերվա մարդկանց» պատմությունը

1954 թ. Սպանբուլում ծնված Տիգրանը մի եղբայրություն է պատմում, որը րեդի է ունեցել շապր վաղուց, մի հեռավոր վայրում. «Այն, ինչ ուզում եմ պատմել,- ասում է նա,- իրականում նման է շապր հայերի կյանքի պատմությանը»: Նա պատմում է սիրով, ոչ թե արելությանը. «Եթե ես դա պատմեմ արելության և վրեժի գագառումով, ասպա ոչ մի իմաստ չի ունենա: Եթե արյունը արյան դիմաց լինի, վրեժի գագառումը երկար կմնա»:

Սա դառը պատմություն է, սակայն, ըստ Տիգրանի, նման պատմությունների կրկնություններից խուսափելու համար պեք է պատմվի: Պատմելը դժվար որոշում է. «Մեր ընտանիքի պատմության մասին շապր բան չէր ասվում, մենք էլ դա մեր երեխաներին չէինք պատմում, որովհետև չէինք ուզում, որ նրանք արելությամբ լցվեն այն հասարակության նկատմամբ, որում ապրում էին: Նայրս, համենայն դեպս, այդպես էր մտածում»: Այսուհանդերձ Տիգրանը լսել է հոր որոշ պատմություններ, բայց մինչև այն ժամանակները, երբ արդեն ի վիճակի էր ընդհանուր պարկերը կազմել. «Նայրս և բարեկամներս սովորաբար խոսում էին այնպիսի բաների մասին, ինչպիսին *սեֆերբերլիկն է!* [մոբիլիզացիան]. *«սեֆերբերլիկի ժամանակ ես...»*, *«սեֆերբերլիկի ժամանակ ես այսքան փրակեմ էի»* և այլն: Նրանք նման բաների մասին էին խոսում: Մանրամասները չէին բացատրվում: Ես մտածում էի, որ դա միայն մեր գյուղում է պատահել: Նանկարծ հայրնաբերեցի, որ այն, ինչ մեր գյուղում է րեդի ունեցել, կարարվել է նաև Մուշում, Վանում և այլ վայրերում: Ներագայում (նկարի ունեմ, երբ արդեն չափահաս էի) վերջապես լսեցինք Նայրց ցեղասպանության մասին»: Սա մի «փշուր» պատմություն է արմարների և արմարախիլ արվելու մասին: Դա բացատրում է, թե ինչու հայրս ոչինչ չէր սրանում իր հայրենիքից, այն դեպքում, երբ նրա թուրք ընկերները Մալաթիայից ծիրան, իսկ Դիարբեքիից ձմերուկ էին սրանում. «Ես այնտեղից ոչ մի բան չեմ սրանում, որովհետև այնտեղ ոչ ոք չունեմ: Ես ո՛չ արմարներ, ո՛չ էլ անցյալ ունեմ: Մենք այս երկրագնդից չենք, այսինքն՝ մենք ինչ-որ րեդից ենք եկել: Ինչպես րեանում ես, մենք այդ «ինչ-որ րեդի» չունենք: Մեր անցյալը շապր կարծ է, այսինքն՝ երբ քեզ հետ խոսում եմ, կարող եմ միայն իմ պապի մասին պատմել: Լավ, այն մասին, թե որտեղ է նա ծնվել, ես դրանից ավելի հեռու չեմ կարող գնալ: Չեմ կարող դրա մասին պատմել, որովհետև այդ մարդիկ գոյություն չունեն: Ես նրանց մասին ոչինչ չեմ կարող պատմել, այսինքն՝ ես ոչ ոք չունեմ իմ պապի հայրենիքում: Որովհետև այն գոյություն չունի: Նրանք պոկել են ինձ իմ հոր հողից»:

«Մենք ոչ մի րեդից չենք եկել, մենք այստեղ էինք»

Տիգրանը նույն պատմությունն է պատմում՝ բացատրելով, որ ինքը ոչ մի րեդից չի եկել, այլ միշտ էլ այստեղ է եղել: Որպես Թուրքիայում ապրող հայի՝ նրան մշտապես հարցնում են, թե որտեղից է. «Ո՛վ էր այստեղ ապրում մինչև 1070 թվականը: Այս հողը դարարկ չէր: Նայերը և հույներն էին ապրում այստեղ, այսինքն՝ մենք: Այսինքն՝ մենք այստեղ 5,000 րարի է, ինչ ապրում ենք: Մենք ոչ մի րեդից էլ չենք եկել: Մեկընդմեջ վիրավորված ես գգում: Գիտե՞ք, որ նրանք մեզ «րարոթինակ են» անվանում: Օրինակ՝ իմ ծառայության ժամանակ, երբ գորացրվելուն մեկ կամ երկու ամիս էր մնացել, ես և սերժանտը պահակային ծառայության մեջ էինք: Միասին համարյա մի րարի ծառայել ենք: «Իմ լեյտենանտ,- ասաց նա,- ինչու՞ են քո անունը Տիգրան

1 *Սեֆերբերլիկը* մի հասկացություն է, որը ցույց է րապիս համայնքի ոգին, համագործակցության ոգին, համերաշխությունը: Տվյալ դեպքում նշանակում է «մոբիլիզացում»: Դա միջոցառումների շղթա է, որով երկիրը նախապարասարվում է պարերազմի:



դրել» : Ես պարասխանեցի. «Դա հայերեն նշանակում է «աշակերտ»: «Լավ,-ասաց նա,- ինչո՞ւ են քեզ հայկական անուն դրել»:
«Եղբայր,- ասացի,- ես հայ եմ»: «Օ՛,- ասաց նա,- դուք որտեղի՞ց եք եկել»: Այդ հարցը հաճախ են փայխ: Ես ասում եմ. «Մենք ոչ մի փեղից էլ չենք եկել, մենք միշտ էլ այսփեղ ենք եղել»: Ես նրան համառոտ պարմությունը ներկայացրի: Նա զարմացած էր և երկար ժամանակ աչքերը չռած ինձ էր նայում: Մենք մի փարի միասին ենք ծառայել, բայց այդ փղան չգիտեր, որ հայ եմ: Նա չգիտեր, թե հայն ով է: Սրանք են այդ փարօրինակ բաները»:

Տիգրանն այսպես է պարմում իր ընդանիքի պարմությունը:

«Այս պարմությունը սկսվում է իմ պապից: Պապս իրականում Գյուրունից է, որը Սվազի շրջաններից է: Երբ սկսվեց *սեֆերթերիկը* (եկեք լրացուցիչ ցավ չպարճառելու համար ավելի մեղմ փերմիներ օգտագործենք) պապս բանակում էր ծառայում: Երբ *սեֆերթերիկը* ավարտվում է, պապս Գյուրուն է գնում: Մինչև զինվորական ծառայության մեկնելը պապս դարբին էր, նա այնփեղ մի արհեստանոց ուներ, նաև անագագործությամբ էր զբաղվում: Երբ իր արհեստանոցն է վերադառնում, փեսնում է, որ այնփեղ անհասկանալի բաներ են կարարվում (ստույգ չգիտեմ, թե ինչ է փեղի ունեցել): Այսինքն՝ նա անհանգստանում է, երբ վերադառնում է, նա գիտի, որ իր հայրենիքում ինչ-որ բան է փեղի ունենում: Նա գալիս է և փեսնում, որ այնփեղ ոչ ոք չկա: Արհեստանոցը աշխարհեցնում էր նրա ենթավարպետը: Նա հարցնում է. «Տղաս, ինչ՞ է կարարվել»: «Վարպետ,- պարասխանում է նա,- քո համայնքից այսփեղ ոչ ոք չկա»: Ենթավարպետը նույնպես անհանգստ էր, որովհետև վախենում էր, որ վարպետը կարող է իր ձեռքից արհեստանոցը վերցնել: Պապս ասում է. «Տղաս, դա արդեն քոնն է, ես գնալու եմ»: Ես չգիտեմ, թե ինչու, բայց պապս նույն երեկոյան հեռանում է: Նա վախեցած էր: Բայց նա փեղեկանում է, որ իր քույրն Աֆսինում է: Ինչո՞ւ էր նրա քույրը այնփեղ: Ծարասյունը Գյուրունը թողնում հեռանում է, սակայն որոշ մարդիկ այնփեղ կոտորվում են: Նրանք կանանց ճանապարհից դուրս են բերում: Երբ կանայք քայլում են, լեյփենանր Մեհմեդը փեսնում է Նիկյարին և իր փղայի համար որպես հարսնացու է փանում: Նրա փղայի անունն Օսման էր: Նա մեր հորաբորոջ Օսմանի հետ ամուսնացնում է: Ամուսնությունից հետո Նիկյարը դառնում է Նուրան: Նա դառնում է Օսմանի երրորդ կինը, Օսմանն արդեն երկու կին ուներ: Նա նրան որպես երրորդ կին է վերցնում, որովհետև գեղեցիկ հայ աղջիկ էր: Պապս Աֆսին է գնում: Երբ նա փեղ է հասնում, փեսան հոգ է փանում նրա

մասին: Դե գիտես, նա նրան քաղաք չի թողում: Նրանք վախենում էին, որովհետև նրա հետ այնպեղ կարող էր մի վայր բան պարտահել: Նա պապիս ուղարկում է դաշտերն աշխատելու: Նրա փեսայի բարեկամը, Բոյով Նասան անունով, նրա փուն է գալիս: Նրան քրդերեն *դոքդոքե* են անվանում, ինչը կարծեմ բարձրահասակ է նշանակում: Նասանը հարցնում է. «Տղա ջան, ի՞նչ մասնագիտություն ունես»: Պապս պարասխանում է՝ «Ես անագագործ եմ»: «Եղավ,- ասում է նա,- ես քեզ մեր գյուղ կրանեն: Մեր գյուղում մի 40-45 հայ կա: Մենք նրանց թաքցնում ենք քարանձավում, բոլորը փրկվել են *սեֆերթերիկից*: Որովհետև եթե քեզ այսպեղ փեսան է՝ կսպանեն»: Գյուղ գնալու ճանապարհին Բոյով Նասանը նրա համար պղինձ է գնում, ամոնիակ և օդափոխիչ (փուքս): Նա նրան 22 լիրա է տալիս և ասում. «Գյուղում գործդ արա, փողերը հետո կվերադարձնես»: Պապս գյուղ է գնում: Քանի որ մեր գյուղը քուրդ ավաճիւրների գյուղ էր՝ դեմ էր կառավարությանը: Դրա համար էլ նրանք օգնում էին մերոնց»:

Մարիշավե

Նրանք մերոնց «գիշերվա մարդիկ» էին անվանում, քրդերեն՝ *մարիշավե*, որովհետև միայն գիշերներն էին դուրս գալիս: Վախենում էին, որ ժանդարմներն օրվա ընթացքում կարող են իրենց բռնել: Այնպեղ գրնվելու ամբողջ ընթացքում գյուղացիները մերոնց հաց էին փանում: Մի օր գյուղ դասալիքներ գրնելու համար մի ժանդարմ է գալիս: Նա մի գինվոր է բռնում: Դե գիտե՞ք՝ պարերագմ էր, այդ փարիներին շար փախած զինվորներ կային: Նա մի քուրդ է բռնում: Այդ պահին դասալիքը լեյտենանտին ասում է. «Եթե մեզ այսպեղից փանեք, մեր կանայք *գյալուրներ*ի ձեռքն են ընկնելու»: Լեյտենանտը հարցնում է. «Ի՞նչ *գյալուրներ*»: Ժանդարմը բռնում է դասալիքներին և հայերին: Դրանից հետո Բոյով Նասանն ասում է. «Ես ոչ մի հայ չեմ հանձնի»: Նա 100 լիրա կաշառք է տալիս լեյտենանտին: 100 լիրան մեծ փող էր: Նա դասալիքներին ասում է. «Յուրաքանչյուրդ 5 լիրա տվեք»: Նա ամեն մեկից 5 լիրա է հավաքում, այդ թվում 10 լիրա՝ լեյտենանտին հայերի մասին տեղեկություններ հայտնողից: Նա իր 100 լիրան եր է ստանում և մերոնց փրկում»:

«Պապս մեծանում է, դառնում ջահել փղամարդ: Թուրքիայում արդեն խաղաղություն էր հաստատվել, ամեն ինչ հանդարտվել էր: Բոյով Նասանը բոլոր հայերին հավաքում է և ասում. «Նիմա խաղաղ է, կարող եք դուրս գալ քարանձավից»: Մինչև ամուսնանալը պապս այնպեղ մի քուրդ աղջկա էր սիրահարվել: Բոյով Նասանն ասել է. «Ոչ, մենք ձեզ այսպեղ ենք բերել, որ դուք հայ մնաք, այսպեղ մի հայ աղջիկ կա, արի նրան քեզ համար ուզենք, *Բոզո*»: Նրանք պապիս *Բոզո* էին անվանում, որովհետև շեկ էր: Տարիս անունը Պայծառ է, նրան վերցրել և ամուսնացրել են պապիս հետ:

Ես տեսել եմ այդ քարանձավը, մենք քայլելով մեր գյուղից այնպեղ երկու ժամում ենք հասել: Այն ժամանակ քարանձավն անբառի խորքում էր: Դա այլևս թաքնվելու տեղ չէ: Ես չկարողացա մտնել քարանձավ, որովհետև մուրքին պապ էին շարել. երևի ԲԲԿ-ի դեպքերի հետ կապված էին արել: Ինձ այնպեղ շար ջերմ ընդունեցին, նրանք մինչև այսօր սիրում են մերոնց: Չնայած մենք այլևս այնպեղ չենք ապրում, մինչև օրս այնպեղ ապրող մարդիկ իրենց աղջիկների անունները Պայծառ կամ Մարիամ են դնում: Պայծառ հայերեն նշանակում է փայլել, «փայլվում»: Այսինքն՝ նրանք մինչև օրս մեզ սիրով են հիշում: Վերջին անգամ, երբ այնպեղ էինք, մի կույր կնոջ հանդիպեցինք: Այդ գիշեր նրա փուն էի գնացել քնելու: «Կռահիր, թե ում եմ բերել քեզ մուր,- ասաց նրա աղջիկը,- դե ասա, եթե ճանաչում ես նրան»: Կինը չէր տեսնում: «Սպասիր,- ասաց նա,- արի քեզ գրկեմ, թանկագինս»: Նա գրկեց ինձ: «Օ,- ասաց նա,- դու Զավենի հուրն ունես»: Ասացի, որ «ես Զավենի փղան եմ»: «Օ, թանկագինս, արի քեզ մի անգամ էլ գրկեմ»:

Մենք այնպեղ գերեզմաններ ունենք: Որոշ ժամանակ առաջ ազգականս գնացել էր այնպեղ և վերականգնել դրանք: Այնպեղ երկու քար էին դրել հողի վրա, ազգականս դրա տեղը մարմնարից մի բան էր սարքել: Մի խաչ էին սարքել և այն հորիզոնական դրել: Այդ խաչն ուղղաձիգ չէին դրել, որ փարօրինակ չթվարք»: